

179

= 182 =

Հ. Ս. Խ. Հ. ԼՈՒՍԺՈՂԿՈՄՍՏ

ՄՈՅԻՍԼԱԿԱՆ ԳՍՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳԼԽ. ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Ն Մ Ո Ւ Շ Ն Ե Ր
Ա Դ Ր Բ Ե Ջ Ա Ն Յ Ա Ն
Գ Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ի Ց

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԻՒ ԱՍՏԻՃԱՆԻ ԳՊՐՈՑՆԵՐԻ ՎՄԻՄԲԻ,
ԲԱՆՖԱԿՆԵՐԻ, ՏԵԽՆԻԿՈՒՄՆԵՐԻ ՁԵՌՆԱՐԿՆԵՐ

Գ Ր Ե Կ Բ.

ԿՍՁՄԵՑ՝ ՅԵ. ՉՍՐԵՆՑ

ՊԵՏՍԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ 1929


1892
1893

894.3(082)

ՆՄՈՒՇՆԵՐ ԱԴՐԲԵՋԱՆՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ .

ՊՐԱԿ Բ.

ԿԱԶՄԵՑ՝ ՅԵ. ՉԱՐԵՆՑ



1.07.2013
1995 VOK 2.1

13826
17570

Հր. № 957. Գրառեպլար № 1803 (բ). Տիրամ 8000
Պետերոսի առաջին տպարան Վաղարշապատում
Պատվեր № 66:



ԲՈՅՈՒԿ ԱՂԱ ԹԱԼՔԻԼԻ

«ՏՂԱՄԱՐԴ ԹՅՈՒՔԵԳՐԱՆԸ»

22189-59 (1538-54)

Թյուքեզբան խալան միջանասակ, միջին տարիք ունեցող, թուխ, վոչ նիհար, վոչ ել չաղ մի գեղջկուհի չեր: Թյուքեզբան խալան իր աղջիկ ժամանակից մի ցավ ուներ, վոր մինչև այժմ ել նրանից չեր հեռացել: Նրա այդ ցավը փոխանակ դեղերով բուժելու՝ «չեղալի ծեծով» ելին դարմանում: Քանի նա աչքը բացել եր՝ հորից ու չեղբայրներից ել ծեծ չեր մնացել, վոր չուտեր: Բայց ծեծն ել ոգուա չեր անում. հենց վոր մի տեղ մարդկանց հավաքուլթ տեսներ՝ Թյուքեզբանն անպայման պիտի ներկա լիներ. վորտեղ վոր մի ձաչն լսեր Թյուքեզբանը՝ իր շարսաֆի ծայրերը մեջքին պնդացնելով, գնալու չեր: Տղամարդ թե կին Թյուքեզբանի համար տարբերություն չուներ. ամաչել չեր իմանում, կարմրել չգիտեր: Սգի ժամանակ, թուլի՝ ժամանակ, բաղնիսում, մեջիթում, վերջապես ամեն տեղ ել խերն ու շուն առանց Թյուքեզբանի չեր չինի. բարեկամ-ազգական իսկապես բիաբուռ ելին չեղել նրա չերեսից: Գյուղում խոսք չեր մնացել, վոր Թյուքեզբանի չետևից չասելին: Վերջապես նրա հայրը այս անամոթին սանձահարեց. գյուղում Աբդալ Նսադ անունով մի բանվոր կար. նրա հետ մի փոքր տեսակցություն ունենալուց հետո հայրը Թյուքեզբանին նրան տվեց և գլխից հեռացրեց:

Շատ մարդիկ կարծում ելին, թե այժմ գուցե Թյուքեզբանը մի փոքր հանդարտի, բայց մարդու գնալուց հետո նրա ձեռք-վոտը ել ավելի բացվեց: Նա ել ավելի չեր ման գալիս, վորովհետև Աբդալ Նսադը չքավոր մարդ լինելով՝ Թյուքեզբանի հախից չեր տարուղանում գալ:

Թյուքեզբանի այսպիսի վերաբերմունքի համար գյուղի ծերունիները նրա ամուսնուն և հորը շատ անիծում ելին և ծեր կանաչք ել իրենց շրջանի մեջ չեյին ընդունում նրան: Գյուղում կանանցից վոմանք նրան սիրում ելին և վոմանք ել հարգում, վոմանք ել նրանից վախենալով՝ «անամոթ» ասելով զգվում ելին:

¹ Թուլ—հարսանիք.

Թյուքեզբանը սրանց կարևորութիւնն չտալով՝ իր չետեից աս-
ված խոսակցութիւններին ականջ չեր դնում:

Մի որ Թյուքեզբան խալայի համար (դժբախտաբար՝ թե բարե-
բախտաբար) մի մեծ դեպք պատահեց: Իր ամուսինն Եսաղը հիվան-
դացավ, մեռավ, տնտեսութիւնն ամբողջ գործը Թյուքեզբանի ձեռքն
անցավ: Յերբ գործը բազարն եր ընկնում, կամ նրան պաշտոնա-
տուն ելին կանչում՝ Թյուքեզբան խալան անմիջապէս ձին հեծնում-
գնում եր: Գութանով հերկել, սերմանել, հնձել, Թյուքեզբան խա-
լայի հին փեշակն եր. քյասիբութիւնը նրա համար դժվար գործ
չեր, այնպէս վոր նրա ամուսնու մահը նրան մեծ վնաս չտվեց:
Նրա այսպէս ապրելը և ինքն իրան կառավարելը զարմացնում եր
ամբողջ գյուղին, բայց դրա հետ միասին նրա չետեից անվայել խոս-
քեր ելին ասում:

Յերկրում Սորհրդալին իշխանութիւնը հաստատվեց:

Թյուքեզբան խալան քաղաքականութիւնից չեր հասկանում,
չեր իմանում, թե ինչու փշրեցին մուսավաթական կառավարու-
թիւնը և նրա տեղը հաստատեցին բանվորա-գյուղացիական պե-
տութիւն: Միայն գյուղ չեկող-գնացող մեծ մանդատ ունեցողներին
լսում եր, թե սրանից հետո իր ջիլաֆն իր ձեռքումն ե, թե սրանից
հետո Թյուքեզբան խալան տղամարդկանց նման ազատ մի մարդ ե:

Մի անգամ Թյուքեզբան խալան գիշերը բոստանից վերադառ-
նալիս՝ հրացանով մի գայլ սպանեց: Այս դեպքը մի փոքր ավելացրեց
դեպի Թյուքեզբանը չեղած հարգանքը: Բոլոր տներում խոսում ելին
Թյուքեզբանի զոչաղութիւնն, իգիթութիւնն, գործ գլուխ բերելու և
այլ լավ ու վատ կողմերի մասին, և նրան անամութիւնն և ան-
նամուսութիւնն մեջ մեղադրողների թիվը կամաց-կամաց նվազում եր:

Մի որ գյուղը լուր չեկավ, թե Բագվա համար մի կին են
պահանջում. թե ում համար են ուզում, ինչի համար են ուզում,
այս մասին զանազան կարծիքներ կային, ամեն մեկն ըստ իր կար-
ծիքի մի բան եր ասում:

— Ես եր մնացել՝ ես ել տեսանք. վերջապէս մեր կանանցն
ել մեր ձեռքից պիտի խլեն, — ասում եր գյուղի ուսուցիչ մուլա
Բեջբը:

Բայց գավառի կենտրոնից չեկած մի ներկայացուցչի խոսքից
այնպէս հասկացվեց, թե Բագվում կանանց համագումար ե լինելու,
և այս համագումարի համար գյուղից մի կին ե ուղարկվելու:

Ղալմաղախ սկսվեց: Շատ խոսվեց — վոչ մի մարդ չճարվեց:

Ով իր մորից-քրոջից ձեռք ե քաշում. — Վնչ վոք...

Կամաց-կամաց, այս խնդրի առթիվ ծածուկ և բաց խոսակցու-

թիւններից հետո, վողջ գյուղը վորոչեց, վորպեսզի այս համագու-
մարին Թյուքեզբան խալային ուղարկեն:

Այս թեկնածութիւնը տղամարդիկ ել, կանայք ել համաձայն-
վեցին:

Տղամարդիկ ասում ելին, թե՛ ով ե իմանում, Բագվում այս
կնոջ գլխին ինչ են բերելու. չեթե վորևե բան պատահի՝ վոչինչ,
անտեր կին ե, առանց նրան ել յոյա կգնանք... Տղամարդկանց այս-
պիսի կարծիքից հետո կանայք ել կարող ելին այլ թեկնածու առա-
ջարկել:

Պաշտոնական մի հավաքութիւն Թյուքեզբան խալայի բախտը
բանեց և նա միաձայն ընտրվեց կանանց առաջին համագումարի
պատգամավոր: Թյուքեզբան խալան իր վտար դրեց սանդուխթի առա-
ջին աստիճանին:

Ո՛վ եր իմանում, վոր նրա վտար առաջին աստիճանի վրա չը-
մնալով՝ դեպի վեր եր բարձրանալու: Ո՛վ եր իմանում, թե Թյու-
քեզբանը զբանով չբավականանալով՝ պիտի հանդգներ մագլցելու
սանդուխթի մյուս աստիճաններին: Ո՛վ եր իմանում, թե հետագա-
յում Թյուքեզբան խալան այս գյուղի գլխին մի «փորձանք» եր
լինելու: Ո՛վ եր իմանում, թե Թյուքեզբան խալան հարստահարող-
ներին հարստահարող և հարստահարվածներին պաշտպան եր դառ-
նալու:

Ո՛վ եր իմանում, թե Թյուքեզբան խալան «տղամարդ» եր լի-
նելու...

Յեթե Մոհամմեդ մարգարելի բարեպաշտ վորդիներից մեկն
ընտրութիւնն ժամանակ այս գյուղում լիներ և Թյուքեզբան խալայի
գալուստն իր չերագում տեսնելով՝ հասարակութիւնն ավետեր, —
անշուշտ այդ «գլուխը կորցրածի» անունը վոչ վոք չեր տա:

Բայց այժմ բանը բանից անց եր կացել և Թյուքեզբան խալան
թե գավառի կենտրոնում և թե Բագվում կին բաժնում ճանաչված
լինելով՝ հրավիրվում եր հասարակական աշխատանքների: Այս պատ-
ճառով, չերկու տարի անց, գյուղխորհրդի ընտրութիւններն սկսե-
լիս, խորհրդի նախագահի համար առաջադրված թեկնածուներից ան-
կում դրված եր նաև Թյուքեզբան խալայի անունը:

Ընտրութիւնն որը հասարակութիւնը հավաքվեց: Կենտրոնից
չեկած հրահանգիչը ճառ ասաց և իր ճառում գյուղի բոլոր կանանց
ակտիվ մասնակցութիւնը պահանջեց:

— Ի՞նչպէս եք ուզում. կանանց առանձին ժողով գումարել,
թե տղամարդկանց հետ միասին, — հարցրեց հրահանգիչը հասարա-
կութիւնից:

Հրահանգիչը գիտեր, վոր այս ժողովին մասնակցողները բոլորն էլ տղամարդիկ էլին և մեկ էլ մեր Թյուքեզբան խալան էր:

Լսելով հրահանգչի հարցը, Թյուքեզբանը տեղից վեր ցատկեց և բացականչեց.

— Ընկեր, տղամարդկանց հետ միասին, միասին...

Բայց դեռ Թյուքեզբան խալաների այս առաջարկն ընդունելու ժամանակը չէր լեկել, և ժողովը, բոլորի լուրջ ցանկության համաձայն, առանձին կայացավ:

Ընտրութունների վերջում պարզվեց, վոր Թյուքեզբան խալան գյուղխորհրդի նախագահ է ընտրվել:

Գյուղում մեծ զարմազալ ընկավ, ժողովուրդն իրար անցավ:

— Մեր գլխին փափախ չկամ, մենք տղամարդ չենք, վոր անամոթի մեկին մեր գլխին մեծ նշանակեցին...

— Ջարմանալի բան, կի՛նն էլ կառավարության գլուխը նստի...

— Այ մարդիկ, ես Թյուքեզբանը կնիկ չեմ, տղամարդ եմ. ինքն էլ քոսա չեմ. քանի տարի ամուսին ունեմ, չերեխա չունեցավ... Աբդալ Եսազը միշտ ասում էր, թե նա իմ կինը չեմ, իմ մարդն է:

Այսպես խոսելով՝ գյուղացիք ընտրության տեղից ցրվեցին, գնացին իրենց տները:

— Թյուքեզբանը կնիկ չեմ, տղամարդ եմ...

Կարծես այս խոսքերը բոլորին դուր չեկան, բոլորը չեռանգի չեկան, չերեկոյան բոլորն էլ այս խոսքերն էլին ծամծամում: Այս լուրը տարածվեց և ամբողջ գյուղում:

— Ո՞վ ընտրվեց նախագահ:

— Տղամարդ Թյուքեզբանը:

Այս ձևով անա մեր պատմվածքի հերոս Թյուքեզբան խալան մի որում դարձավ «տղամարդ»:

Թյուքեզբան խալան խորհրդի նախագահ ընտրվելը մի հասարակ բան հաշվելով՝ գնաց ստանձնեց գործերը և հրահանգչից ստացած կարմիր թղթի վրա գրված վկայականն էլ, շատ զգուշությամբ ծալելով, գրպանը դրեց:

Իրիկնամուտին գյուղացիք, իրենց գործերը վերջացրած, կանաչք ու տղամարդիկ առանձին-առանձին, փողոցներում, պատերի տակին ծալապատիկ նստած, խոսում ու բամբասում էլին:

— Տղամարդ Թյուքեզբանը գալիս է...

Այդ միջոցին Թյուքեզբան խալան պորտֆելը թևի տակ դրած, ձեռին մտրակ՝ անցավ գյուղացիների առջևից:

— Մի դրա գոռոզութանը մտիկ... կարծես դրա պապն էլ հերն էլ կառավարութուն են չեղել միշտ, — ասաց տղամարդկանցից մեկը և զայրացած նայեց խալալի չեռակից:

Կանաչք էլ նրան տեսնելիս հանգիստ չեյին նստում, ամեն մեկը մի բան էր տառնում, լավ թե վատ: Նրանց մեջ մի քաղաքացի տիկին էլ կար, վոր բայլընկիկներից փախած՝ ապրում էր գյուղում:

— Լսել էյի, բայց չեյի տեսել, ես լափ տղամարդ ե չեղել, — ասաց գեղջկուհիներից մեկը քաղաքացի տիկնոջը և ցույց տվեց Թյուքեզբանի մտրակն և պորտֆելը: Քաղաքացի տիկինն այս տեսելով, զարմանքով մի ախ քաշեց և ասաց.

— Ել ի՛նչ ասենք, ի՛նչ խոսենք, աշխարհը փոխվել է, ժամանակը փոխվել է. կինը մարդ է դառել, տղամարդն էլ՝ կին...

Գիշեր չեղավ, բոլորը քնեցին, գյուղում ըստ սովորականի լուծութուն տիրեց: Միայն չերբեմն գյուղի ծայրից գալիս էր շների հաշոցը: Թյուքեզբանի «գահ բարձրանալը» գյուղի սովորական գիշերների մեջ վնչ մի փոփոխութուն չմտցրեց և բոլորն էլ, անուշ քուն մտած, չեյին իմանում, թե առավոտը գյուղում ի՛նչ է կատարվելու...

Առավոտյան, նորից ըստ սովորության, ամեն մեկն իր գործին գնաց: Գյուղխորհուրդի քարտուղար Մեհմեդ Ալին էլ հանգիստ, անխուով դիվանատուն գալով՝ սենյակի ձախ անկյունում իր տեղը գրավեց: Դեռ չէր հանգստացել, չերբ Թյուքեզբանը բարկացած ներս մտավ: Հենց վոր նստեց՝ մեծ ուշադրությամբ սկսեց նայել պատի թղթերին, կարծես նստած տեղում ուզում էր կուլ տալ թղթի տառերը:

Յերկար նայելուց հետո քաղցրությամբ հարցրեց քարտուղարին:

— Քանի՞ որ կալանքի տակ պահելու իրավունք ունեմ:

— Հինգ որ, — պատասխանեց քարտուղարը:

— Հինգ որ:

— Այո, հինգ որ:

— Ափսոս... շատ ափսոս... վնրտեղ ե գրված, ցույց տուր տեսնեմ:

Քարտուղարը տեղից վեր կենալով, պատին փակցված թղթի վրա ցույց տվեց Ադրբեջանի Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի վորոշման համապատասխան հոդվածը: Թյուքեզբանը ևս վեր կացավ տեղից.

— Ափսոս, ափսոս, պետք է ավելի լիներ, — ասաց նա և մոտենալով թղթին՝ ցուցամատը քարտուղարի մատի մոտ դրեց և ապա բթամատի չեղունգով այդ հոդվածի ներքևը մի գիծ քաշելով՝ նշան արեց:

— Ել ի՛նչ պատիժներ տալու իրավասու չեմ:

— Տասնհինգ ուրբի տուգանք և հինգ որ պարտադիր աշխատանք:

— Ես էլ քիչ եմ:

Այս ասելով, Թյուքեզբանը բոլորովին սրանեղեց և մի փոքր քրտնեց:

— Այս որենքը վճարեց ե գրված:

— Այստեղ:

Կրկին քարտուղարը ցուցամատով ցույց տվեց պատշաճ հող-վածը և Թյուքեզբանն ել բթամտի չեղունգով ընդգծեց այդ տեղը:

Թյուքեզբանը հոնքերը կիտած՝ նստեց իր տեղը և մի փոքր մտածելուց հետո ասաց քարտուղարին.

— Հրամայում եմ մոլլա Բեջբեին, վորդուն՝ մոլլա Ջաֆարին, յեղբորը՝ Սեֆերին և փեսային՝ Սեյիդ Հյուսեյինին հինգ որով բանտարկել: Գրի՛ր:

— Աչքիս վրա:

— Լրացուցի՛չ. հրամայում եմ հինգ որով բանտարկել Ղուլամ Հյուսեյին բեյին, Հյուսեյին Կուլի բեյին, Սեֆեր Աղա բեյին, Ջաֆար Աղա բեյին, Յուզբաշի Խալիլին, Ահմեդ և Ղազախ Սուլեյմաններին: Գրի՛ր:

— Աչքիս վրա:

— Ելի՛: Հրամայում եմ, վոր Քերբեյալ Հյուսեյինը, Մեշեդի Սեմեդը, Հաջի Մեհտին և Սուլեյմանը — ամեն մեկը տասնհինգ ուրբ-լի տուգանք վճարեն և հինգ որ աշխատեն հասարակական առվի վրա: Գրի՛ր:

— Աչքիս վրա:

Թյուքեզբանի բարկութունը մի փոքր իջավ և սրանեղութունն անցավ: Պորտֆելը բաց արեց, հրահանգչից ստացած կարմիր վկա-յականը հանելով՝ ուշադրությամբ նայեց, ժպտաց, կրկին կուշտ նա-յեց և ապա գգուշությամբ ծալելով՝ տեղը դրեց և նստեց:

— Գրեցի՛ր:

— Գրեցի՛:

— Ես սահաթին իմ հրամանը պետք է կատարվի. յես դրանց որը պետք է սև դարձնեմ:

— Աչքիս վրա:

Թյուքեզբանը վերկացավ, գնաց:

Մի ժամ չքաշեց՝ ախոռից բանտի վերածված փոքր շենքը լցվեց բանտարկյալներով: Նստելու իսկ տեղ չկար:

Ձերբակալվածների չեքխաները, կանայք և բարեկամ-ազգա-կանները, գլուղխորհրդի շենքի դռանը հավաքված՝ Թյուքեզբանին ելին սպասում:

Գլուղացիք իրենց տեսածին չեյին հավատում: Մոլլա Բեջբեին ել կարելի չէ բանտարկել. կարելի՞ չէ ձեռք տալ Ղուլամ Հյուսեյին

բեյին... Հյուսեյին Կուլի բեյին ել կարելի չէ բանտարկել... Բոլորը զարմանում եյին:

Թյուքեզբանը, ձիու վրա նստած, ձեռքին մտրակ, չեքևաց խոր-հրդի առաջ: Նրան տեսնելով՝ հավաքվածները վախեցան, ամենքին ել պատեց ահը. խոսել ցանկացողների խոսքը չորացավ կոկորդներում:

Մարդիկ ճանապարհ տվին Թյուքեզբանին, վոր ձիուց իջնելով՝ մտավ խորհուրդը: Նրա հետևից ներս մտան խնդրատուները:

— Ցավդ տանեմ, մեր չեքխոնց արևին, — աղաչում եյին նրանք, բայց Թյուքեզբանը կտրուկ պատասխանում եր:

— Չի կարելի:

— Անողնու ե:

— Թույլ չեմ տալիս:

Թյուքեզբանի այս խոսքերը լսելով՝ խնդրատուները հասկացան, վոր պաղատելուց ոգուտ չկա և տրտում վերադարձան տները:

Հինգ որ հետո բանտարկյալներն արձակվեցին և առվի վրա պարտադիր աշխատանք կատարողներն ել իրենց գործին գնացին: Սրանց ազատ արձակելուց չեղու ուր հետո ելի մոլլա Բեջբեը մի շարք բեյերի հետ միատեղ բանտարկվեցին: Առվի վրա չել մի խումբ հաստավզեր աշխատելով մաքրեցին ջրի ճանապարհը:

Որը շաբաթ դառավ, շաբաթը՝ ամիս, ամիսը՝ տարի: Թյուքեզ-բանն ելի իր պաշտոնում՝ շարունակում եր իր գործը: Գլուղի առու-ները մաքրվում և մոլլա Բեջբեն ել շաբաթվա չեղու ուրն ազատ՝ հինգ որը բանտում նստած եր:

Մի անգամ գլուղի հասարակությանը հայտարարվեց, թե կոոպե-րատիվի վարչության վերընտրութուն է լինելու: Որը ուրբաթ լինե-լու պատճառով կոոպերատիվի անդամները մի քիչ կանուխ հավաք-վեցին: Նիստի ընթացքում Թյուքեզբանը նախագահի մոտ նստած՝ հետևում եր նիստին: Նոր վարչության ցանկում կար և մի կնոջ անուն: Թեկնածուներին մի առ մի քվեարկեցին, Թյուքեզբան խա-լան ել ուրիշների նման ձեռք եր բարձրացնում, բայց չեքբ հասան կյովետ խալալի անվանը՝ Թյուքեզբանը չեղու ձեռքով քվեարկեց: Շուրջը նայեց, տեսավ, վոր ուրիշ վոչ-վոք ձայն չի տալիս:

— Ինչո՞ւ ձեռք չեք բարձրացնում. մի կնոջ անուն վոր լինի՛ գլուխներից քնք կընկնի... Ինչո՞ւ չեք թողնում, վոր ընտրվի...

Թյուքեզբան խալան այս խոսքերն ինքն ասաց, ինքն ել լսեց՝ վոչ-վոք չպատասխանեց նրան:

Նիստը վերջացավ. ամեն մեկն իր ծանոթ-բարեկամի հետ խո-սակցելով, տուն գնաց: Իհարկե, խոսակցութունը կոոպերատիվի մասին եր: Կենտրոնից յեկած հրահանգիչն ել Թյուքեզբանի հետ

խոսակցելով, դուրս չեկավ: Նոր ընտրված կոոպերատիվի վարչութ-
թյան մասին մի փոքր խոսելուց հետո հրահանգելը հարցրեց:

— Հիմի քեֆդ վճնց ե...

— Վճնց լինի, առավոտ ժողով, չերեկոյան ժողով, գիշերներն
եւ դաշաղների չետեից. ես անպիտանները մի ամիս ե՛ իմ քուներ
հարամ են արել, ձիու վրա հրացանով ման գալով՝ մեջքիս վոսկոր-
ները ցավում են... Կարգին մի ոտճիկ եւ չեք տալիս, վոր գոնե
ձիու համար գնվող գարու, դարմանի փողը դուրս գա...

— Եսպես թե գնա՝ քո վարուցանքդ բոլորովին կփչանա...

— Ի՛հարկե կփչանա, եսպես չեր կարելի, տեսա եւ ճար չկա՝
փախստականներից մեր գյուղում կալին, մեկին տարա պահեցի,
չիվան տղա չե. ինքն եւ չքավոր ..

Այստեղ Թյուքեզբանը մի փոքր մտածեց, հետո շարունակեց:

— Շատ տանջվեց, գիշեր-ցերեկ աշխատում եր .. հետո չեւ
ինձ ամուսին դարձրի...

— Կուլակների հետ վճնց ես չոլա գնում:

— Վճնց պիտի չոլա գնամ... եդ շան տղերքը մի որ ինձ սպա-
նելու չեն: Բայց չես մահից չեմ վախենում...

ՀԱՋԻ ՍՈՒԼԹԱՆԸ

Հաջի Սուլթանը մեզ հարևան ե: Նրան շատ լավ եմ ճանաչում:
Ուղիղ քսան տարի առաջ նա ալաֆդար եր, Շամախու ճանապարհի
վրա խանութ ուներ:

Այդ ժամանակ գավառներից, Քուի ափերի և սարի գյուղերից
վոչ միայն ուղտերով, այլև սալերով Բագու չեկող գյուղացիները
սիրում ելին հաջի Սուլթանին ու իրենց բերած հացամթերքները
նրան ելին ծախում: Սիրում ելին նրան, վորովհետև թեև բերք մինչև
արմունկները սոթտած՝ շուտ-շուտ արգեսթ եր անում ու «ելրահ-
ման» (ամենագթած) խոսքը կարգում եր չուրահատուկ ներդաշնա-
կությամբ: Բոլորն եւ ճանաչում ելին նրան— այդ «արգար» ու «հա-
վատացյալ» մուսուլմանին: Հավատացած ելին, վոր նրանից ստացած
փողը թե հալալ և թե բարաքյաթով կլինի:

Հաջի Սուլթանը հալալ առևտուր եր անում: Գնած հացամթերք-
ները կշռում եր իր սեփական կշեռքով: Ուներ չերկու ֆունտանոց
մի կտր քար, վորը, մթերքի գինը սակարկելուց և վաճառողի հա-
մաձայնությունն առնելուց հետո, առնում եր ձեռքն ու ցույց տա-
լով գյուղացուն, ասում.

— Վորդի, կշեռու ժամանակ չուրաքանչուր քաշին դրված այս
չերկու ֆունտը հալալ կանես ինձ:

Ինչ խոսք, վոր գյուղացին, 6—7 փուլ կշեռու ժամանակ,
կշեռքի վրա ավելորդ տեղ դրավող այդ չերկու ֆունտանոցի համար
ձայն չեր հանում: Այսպիսով ոգտվում եր Հաջի Սուլթանը, վորով-
հետև կշեռքի վրա դրվող չերկու ֆունտը հավասար եր քսան ֆունտի,
իսկ հարյուր փթի տարբերությունն անում եր 6—7 փուլ: Գյու-
ղացին այդ բանը չեր իմանում, իսկ Հաջի Սուլթանն որական
վաստակում եր 40 50 փուլ զանազան տեսակի մթերք:

Հաջի Սուլթանի հարևան խանութպաններն ասում ելին, թե նա
չերկու ֆունտանոց քարով խաբում ե գյուղացիներին, նրանց թա-
լանում: Բայց այդ խոսքերին ականջ չգնելով՝

— Յես հարամի հետ գործ չունեմ, — ասում եր Հաջի Սուլթանը, —
հալալությունով եմ առնում: Յես իմ գործիս տեղյակ եմ:

Հաջի Սուլթանի առևտուրը գնալով մեծանում էր: Դրան գու-
գրնթաց մեծանում էր և գյուղացիների հակակրանքը դեպի Հաջի
Սուլթանը, և այլևս «քարի քաշը» հալալ չէին անում նրան: Հաջին
եղ, իր հերթին, առևտուրն ընդհատեց հաճախորդ գյուղացիների հետ:
Ինքն էլ զգաց, վոր իրոք գյուղացիներն իրենից յերես են դարձրել:
Ու այս անգամ Հաջի Սուլթանը թողեց Շամախու ճանապարհն ու
տեղափոխվելով ծովի ափն՝ այնտեղ բաց արեց իր առևտրական
գրասենյակը: Հյուսիսային Կովկասից առած մթերքները Պարսկաս-
տան էր ուղարկում: Այնտեղից վերցրած ապրանքը—Ռուսաստան
փոխադրում: Չբավականանալով հացամթերքի առևտրով, Հաջին յեր-
բեմն էլ շաքար և այլ ապրանքներ էր առնում-ծախում: Հաջի Սուլ-
թանի գործերը շատ լավ էլին: Բանկում առանձին վարկ ունեեր: Մուր-
հակներն ամեն տեղ ընդունվում էին:

1908 թվի աշնանը լուր տարածվեց, թե Հաջի Սուլթանի պար-
տամուրհակները, ժամանակին վճարումներ չկատարելու պատճառով
բողոքարկված են: Գործն ընկավ դատարան: Պահանջատերերը շատ
էին: Վերջապես Հաջին «անանկացավ»: Աչքի առաջ ունենալով
նյութական կարողությունը, նա ուղարկեց 60 կոպեկ վճարելով՝ թա-
փեց իր պարտքերը: Հաջու ասածին նայելով, բոլոր պահանջատե-
րերը նրան հալալ էին արել մնացածը:

Յեթե նկատի ունենանք, վոր Հաջի Սուլթանի բողոքարկված
մուրհակների արժեքը հավասար էր 70 հազար ուղարկու, ապա ուրեմն
պահանջատերերն այս գործից վնաս են կրել 28 հազար ուղարկի: Իսկ
վաճառականական լեզվով դուրս է գալիս, վոր Հաջի Սուլթանն այս
առևտրում շահել է ուղիղ 28 հազար ուղարկի: Յեթե վնաս աներ,
մեկ յերկու տարուց հետո Հաջի Սուլթանը չպիտի կարողանար գնել
Չավեղինսկի փողոցում գտնվող կալվածքը, վորի համար նա վճարել
էր 33 հազար ուղարկի:

Այս դեպքից հետո Հաջի Սուլթանի վարկը բոլորովին ընկավ:
Ծովափի առևտրական գրասենյակը փակվեց: Բազարի փողոցում
բաց արեց բազազի մի փոքր խանութ ու կամաց-կամաց առևտուր
անելով, հացի փողն աշխատում էր: Հետզհետե սկսեց խանութը մե-
ծացնել: Յերկու տարի անցնելուց հետո նա արդեն յերեք աչքից
բաղկացած մեծ մաղազայի տեր էր դարձել: Հաջի Սուլթանը միշտ
առաջին ձեռքից էր ապրանք առնում: Ծանոթանալով Մոսկվայի
և Լոձի ֆաբրիկաների հետ, նա, կեսը կանխիկ վճարով, իսկ մնա-
ցածը վեց ամիս ժամանակով, ապրանք էր բերում և ամբողջ հա-
կերով բաժանում մանր վաճառականներին:

Հաջի Սուլթանի գործերը հաջող էլին ընթանում մինչև 1912

թիվը, վորից հետո դարձյալ ձախողվեցին: Պարտատերերն էլի դուր
ու կտուրը կտրեցին: Մուրհակները հանձնվեցին դատարան: Տուներ,
մաղազան ու յեղած կարողությունը հաշվառքի յենթարկելու համար
մի հանձնաժողով նշանակվեց: Բոլոր պահանջատերերի աչքը Չավե-
ղինսկու փողոցում գտնվող տան վրա յեր: Բայց վոչ-վոք չէր կա-
րողանում նրան ատամ դիպցնել: Վորովհետև ութ ամիս առաջ Հաջի
Սուլթանն այդ տունը փոխանցել էր իր քրոջ վորդու անվանը: Յեր-
կար վեճից, դալմաղալից հետո Հաջի Սուլթանը ուղարկեց 20 կոպեկ
վճարելով՝ բավարարեց իր պարտատերերին:

Այս անգամ էլ Հաջի Սուլթանի ունեցած պարտքի գումարն էր
80 հազար ուղարկի, վորից 20 հազար ուղարկի պարտատերերին վճա-
րելով, մնացած 60 հազար ուղարկին տակույն արեց: Վոչ կառավա-
րությունը, վոչ էլ պարտատերերը նրան վոչինչ չկարողացան անել,
վորովհետև Հաջի Սուլթանն իր գործին տեղյակ մարդ էր

Մի տարուց հետո Հաջի Սուլթանը Մաբունչի կայարանի մոտ
չորս հարկանի մի տուն էլ առավ:

Այսպիսով վերջանում է Հաջի Սուլթանի առևտրական գործու-
նեությունը: Նա տաս տարվա ընթացքում ամենաքիչ զրամագլխով,
ավելի ճիշտ ասած, 2 ֆունտանոց մի կլոր քարով, տարեկան 10
հազար ուղարկի յեկամուտ բերող յերկու մեծ կալվածքի տեր դարձավ:

Տեսնում եք Հաջի Սուլթանն իր գործին վորքան տեղյակ, յես
ու առաջ նայող մարդ է: Վոչ-վոք նրան վոչինչ չի կարող ասել,
չի կարող մեղադրել: Նա վոչ-վոքի պարտք չունի: Դու վոնց ուզում
ես մտածիր նրա մասին, նա իրեն մի «աստծու մարդ» է անվանում,
բառիս լայն իմաստով: Ինչ վոր արել է նա, զիտենալով, մտածելով,
գործը չափել-ձեկելով, սղասած արդյունքն աչքի առաջ ունենալով
է արել:

Իր կյանքում Հաջի Սուլթանը յերբեք սխալ բան չի արել: Նա
միմիայն մի սխալ բան արեց, վորը շատ թանգ նստեց ու միաժա-
մանակ էլ արատավորեց նրան... Իսկ հիմա ամեն մարդ էլ մոռա-
ցել է այդ բանը:

Հաջի Սուլթանին լավ ճանաչելու համար թող ամոթ չլինի, յեթե
այստեղ հիշատակենք նրա գործած այդ սխալը:

Հաջի Սուլթանն ուներ Հասան Աղա անունով մի քրոջ վորդի,
վորը իմ դպրոցական ընկերն էր: Դեռ մանուկ հասակից Հասանը
մոր կողմից վորբացավ ու ապրում էր քեռու՝ Հաջի Սուլթանի խնա-
մակալություն տակ: Վերջապես, հայրն էլ մեռավ ու նա ընդմիշտ
ապրում էր քեռու մոտ: Յերբ Հաջի Սուլթանը բազազի խանութ
բաց արեց, Հասան Աղան մտավ նրա խանութը, վորպես գործակա-

տար: Յերկրորդ անգամ, չերբ Հաջին «իրեն» սնանկացած հայտարարեց պարտատերերի ձեռքից ազատելու նպատակով, Զավեղինսկի փողոցի տունը գրանցել տվեց Հասան Աղալի անվան՝ այն պայմանով, վոր պարտատերերին բավարարելուց հետո, Հասան Աղան տունը կրկին յետ վերադարձնի Հաջի Սուլթանին:

Իսկ Հասան Աղան, ընդհակառակը, քեռու հետ «ընկույզ» երխադու: Նա ասում եր.

— Տունը քեռիս ծախել ե, յես ել առել եմ: Նրան վերադարձնելու վոչինչ չունեմ:

Իեռ ավելին: Հասան Աղան Հաջի Սուլթանի մի հատիկ աղջկա վրա յել եր աչք տնկել: Սիրահարվել եր նրա վրա: Ու իր այդ մտադրութունը հայտնում եր շատ շատերին, քաջ գիտենալով, վոր Հաջի Սուլթանն աղջիկը չպիտի տա իրեն վորովհետև ուրիշին տալու նպատակ ունի: Հասան Աղան բացե ի բաց և ամեն տեղ հայտարարում եր. «Վոչ վոք այդ աղջիկն առնելու իրավունք չունի: Նա իմս ե. սիրում եմ նրան: Ուշ թե կանուխ, ամուսնանալու յեմ նրա հետ»...

Հաջի Սուլթանը, չերբեմն լեզվի բռնվելով Հասան Աղալի հետ, վերջինիս խոստանում եր առևտրական գործերով ուրիշ տեղ ուղարկել: Չերբեմն ել սպառնալիքներ եր կարգում: Իսկ Հասան Աղան անդրդվելի մնաց իր վորոշման վրա: Հաջին անգոր եր մնացել: Դատու գատաստանով վոչինչ չեր կարողանում անել: Վերջապես, նա մտածեց իր և Հասանի միջև առաջացած վեճը թաղալին ազդեցիկ ազատակալների — ախունդների միջոցով լուծել:

Ու մի որ ախունդի սենյակում կայացած ժողովին հրավիրվեց և Հասան Աղան:

— Քեզ տալիս եմ 5 հազար ուլբլի, տունս ինձ վերադարձրու, — ասաց Հաջի Սուլթանը:

— Յես սեմից եմ պակաս վոր... Տուր ինձ աղջիկդ, տունդ վերադարձնեմ քեզ, — պատասխանեց Հասան Աղան:

Ծանր եր Հաջի Սուլթանի գրութունը: Նա չեր կամենում իր աղջիկը տալ մի մշակի, վորը չերկար ժամանակ ծառայում եր իր տանը, թեկուզ իր քրոջ վորդին ել լիներ: Մյուս կողմից, Հաջին չերբեք չեր կարող համաձայնվել, վորպեսզի 35 — 40 հազար ուլբլի արժողությամբ տունը, իր աչքի առաջ, մի ուրիշը չուրացնի: Հարկավոր եր այդ խնդրին մի կերպ վերջ տալ:

Յեվ 1913 թվի ձմեռը, բքաբեր մի գիշերվա լուսաբացին, Հասան Աղալի դիակը գտնվեց մզկիթի պատի տակ: Նրան գիշեր ժամանակ հատուկ զենքով խփել, սպանել ելին: Ահհայտ վոճրագոր-

ծին գտնելու համար Հաջի Սուլթանն ել շատ աշխատեց, ամենտեղ դիմեց... Կառավարական պաշտոնյաները, նույնիսկ թաղեցիներն ալ գործում կասկածում ելին Հաջի Սուլթանի վրա: Ասում ելին, վոր չերկու որ առաջ Հասան Աղան ասած ե չեղել, թե «ինձ պիտի սպանեն, ինձ սպանողին իմ քեռուց կպահանջեք»:

Ահա այն միակ սխալը, վոր Հաջի Սուլթանը կատարել ե իր ամբողջ կյանքի ընթացքում: Չճանաչելով իր քրոջ վորդուն, միայն նրան հավատարով, Հաջի Սուլթանն իր տունը գրանցել եր նրա անունով:

Հաջի Սուլթանն առևտրից ձեռք քաշելով, տներից ստացած վարձագներով փառավոր կերպով ապրում եր: Համաշխարահին պատերազմի սկսվելուն պես, սկսվեց նաև Հաջի Սուլթանի առևտուրը: Բայց այս անգամ՝ «վոտքի վրա»: Չունենալով խանութ կամ առևտրական գրասենյակ, նա հենց իր տանը շինել եր մի մեծ ամբար (պահեստանոց) ու հանդիպած ամեն ինչ, առանց գներին նաչելու առնում, հավաքում եր, հետո առիթը ներկայանալուն պես, ծախում:

Իեպքերն իրար ելին հաջորդում: Ռազմաճակատներում մեծ փոփոխութուններ ելին առաջացել: Հաջի Սուլթանը դրանցով չեր հետաքրքրվում: Նա իր առևտրի հետ եր:

1917 թվի փետրվարյան հեղափոխությանը հաջորդեց Հոկտեմբերյան մեծ հեղափոխութունը: Ճանապարհները փակվել ելին: Ամենուրեք սով, համաճարակ, հիվանդութուն: Մարտ և սեպտեմբեր ամիսների անցքերը: Բագվի գրավումը և հետո վերադարձնելը և ալին, և ալին: Այս բոլոր դեպքերն ու անցքերը Հաջի Սուլթանի վրա վոչ մի ազդեցութուն չթողին: Հաջի Սուլթանը քաղաքականության հետ գործ չուներ: Նա ամեն բան առնում, ամբարն եր տեղավորում...

Վերջապես ծագեց 1920 թվի ապրիլյան հեղափոխութունը, վորն սթափեցրեց Հաջի Սուլթանին, բաց արեց նրա աչքերը: Ազգայնացրին Հաջու տները, զրկվեց նա տներից չեկած վարձագներից: Ուրիշների տների հետ ցուցակագրվեցին նաև Հաջի Սուլթանի տնային իրերը: Կնքեցին «ամբար»-ը:

Յերկու որից հետո, ապրանքները տեղափոխելու համար, սալիբրը կանգնեցին տան դռան առաջ: Մի խումբ մարդկանց ներկայությամբ գատարկեցին նրա ամբարը: Յես ել այն ժամանակ հեռվից մտիկ ելի անում: Ինչեր ասես, վոր չկային Հաջի Սուլթանի ամբարում:

Արշինով ապրանք 8 հակ, կազանի սապոն 15 սնդուկ, բրինձ 31 քսակ, ձիու պայտի մեխ 23 արկղ, «Զինգեր» մեքենա 7 հատ, կառքի ռեզիններ 18 զուլգ, ավտոմոբիլի շիներ 18 զուլգ, լրագրի թուղթ 13 հակ, պանիր 9 տիկ, սալլի անիֆներ 7 հատ:

Սրանց հետ միասին անհաշիվ մանր շաքար, անիվի թելեր, ձիու պայտեր, գուլպաներ, վոանամաններ, հոտավետ սապոններ, պարաններ, պաստառներ, լամպոչկաներ, լուցկի, լամպի պատույզ, սամավարներ, տանիքի թիթեղ, տոպրակներ և այլն, և այլն...

Հաջի Սուլթանն ամբողջ 8 ամիս տեղ չմնաց, վոր չգիմեր: Բազմի հայտնի իրավաբաններին զանազան բովանդակությամբ դիմումներ գրել տվեց: Պատասխանատու պաշտոնյաների առաջ վիզը ծռելով խնդրեց, վոր գոնե գրավված տներից մեկը և կամ ապրանքների մի մասն իրեն վերագարձվի: Սակայն ապարդյուն: Դես ու գեն ընկնելուց, շատ աշխատելուց հետո միայն հաջողվեց իրեն ձեռք բերել «ինվալիդության» մի փաստաթուղթ:

Այժմ, կարծեմ, Հաջի Սուլթանին լավ ճանաչեցիք: Գիտեմ, պիտի առարկեք, թե՛ «Մեզ ներկայացրած Հաջու իսկական անունը Սուլթան չե, այլ Ռահման է, կամ Ռամազան»: Ըստ իս, դրան այնքան ել կարևորություն չպետք է տալ: Ուզում ե՛ Հաջի Շաբան լինի, Հաջի Աղաբալա, կամ Հաջի Աղաքիշի... Միևնույն է: Զեղ ներկայացնում են այն Հաջուն, վորը մի կյոր չերկու ֆունտանոցով սկսեց իր առևտուրը, չերկու անգամ «սնանկացավ», ծանոթ գործի պատճառով բրոջ վորդուն սպանել տվեց և հիմի չել ձեռքին ունի «ինվալիդության փաստաթուղթ»:

Այս հաջին առաջներում իսկի չել լրագիր չեր կարդում, իսկ այժմ, ամեն որ «Կոմունիստ» թերթ է ստանում, և առաջին հերթին Խորհրդային Միության միջազգային դրության ու Յեվրոպական մի շարք պետությունների միջև պատահած կոնֆլիկտների մասին գրված լուրերն է կարդում:

Անցյալ որը փողոցով անցնելիս Հաջին պատահեց ինձ ու սկսեց Հոկտեմբերյան հեղափոխության տասնամյակի առթիվ զանազան հարցեր տալ:

— Ի՞նչ է քո կարծիքը, արդյոք «ընդհանուր ներում» չպիտի լինի:

— Հավանական է, վոր լինի, — պատասխանեցի չես:

— Ո՞ւմ համար:

— Ի՞նչ ասեմ:

— Ի՞նչ է քո կարծիքը բռնագրաված ապրանքների մասին:

— Տարրինակ հարց, վորին վոչինչ չեմ կարող պատասխանել:
— Ուզում եմ ասել, վոր այդ ապրանքներն իրենց տերերին չպիտի վերագարձեն:

— Ընդհանուր ներում, — ասացի, — կարող է լինել բանտարկյալների համար, տների հետ վոչ մի առնչություն չունի:

— Հաստատ գիտեք:

— Հաստատ վոչինչ չեմ կարող ասել:

— Յես այնպես գիտեմ, վոր, — մի քիչ մտածելուց հետո ավելացրեց Հաջին, — ընդհանուր ներում կլինի ու գրավված տների մի մասն ել կվերագարձեն նախկին տերերին:

— Վերսեղից գիտեք:

— Այնտեղից, վոր չես իմ տները աշխատածս հալալ փողերով եմ առել: Հալալ ապրանքը չերբեք չի կորչի: Յես ինքս ել «ինվալիդ» եմ — թուղթ ունեմ, — պատասխանեց Հաջին, ու չերեսի վրացուցին հույսի նշույններ:

Ու մինչ նա ուզում էր ցույց տալ ինձ «ինվալիդության» թուղթը, չես ընդհատեցի նրան ասելով:

— Հարկավոր չե, Հաջի... ինչալահ... տունդ քեզ կվերագարձեն:

— Ինչալահ... ինչալահ... Տերը կամենա... Հալալությամբ վաստակած փողը, հարստությունը չի կորչի, — ասաց նա ու բաժանվեց, բարձր տրամադրություն տակ:

1538-Յ

222



ՄԻ ՓՈՂՈՅԻ ՊԵՏՄՈՒԹՅՈՒՆ

(Կրնատված)

Շինծու և կամ յերևակայական մի բան չե այս պատմութունը, այլ մեր մոտիկ անցյալի, իրական կյանքի եջերից մեկը:

Փողոցը, վորի պատմութունն ենք ուզում անել, գտնվում էր Ադրբեջանի թուրքերի ալթմյան և 25—30 տարի առաջվա կուլտուրական կենտրոնը համարվող Բագու քաղաքում: Նրա մի ծայրում գտնվում էր «Կասըմ բեկ» և մյուս ծայրում—«Թագա փիր» մրդկիթները:

Այս փողոցն իր մեջն էր պարփակում թե մեր անցյալ կյանքը և թե գալիք նոր կենցաղը:

Այստեղ կային չորս-հինգ հարկանի հոյակապ ապարանքներ, ինչպես նաև, հենց նրանց կողքին, հին, ցածրիկ, արևազուրկ փոքրիկ տնակներ: Մի կողմից միջնադարյան «մեդրեսե¹»-ներ և մուլաների շենքեր, մյուս կողմից նոր ձևի նախակրթարաններ ու միջնակարգ դպրոցներ: Մի կողմում ապրում էլին գլխանոցների ու մեջքի զոտիների վաճառականներ, և սրանց կողքին, հաստավիզ փողկապավոր հանքատեր-գործարանատերեր, փաթթոցավոր ախուռներ (կրոնական յերգողներ) ու ցիլինդրավոր մտավորականներ, վաշխառուներ, և ապա—իրենց ձեռքի աշխատանքով ապրող գործավորներ...

Մի ժամանակ շատ կենդանի ու շեն էր այս փողոցը: Հաջի Ասլանը «հոգին» էր այս փողոցի: Նրան ճանաչում էր ամեն մարդ, նրան հարգում էլին ամենքը: Այս փողոցում չկար վորևե մեկը, ծեր թե յերիտասարդ, կին թե տղամարդ, մեծ թե փոքր, վոր լսած չլիներ հաջի Ասլանի հայհոյանքները, նրա ձեռքում միշտ ման ածվող հսկա չիբուխի չափ կոպիտ կատակները: Նրա ձայնը միշտ լրավում էր այս փողոցում:

¹ Թուրք կրոնավորների դպրոց:

Նա այս փողոցի ամեն ինչն էր՝ թե աղան, թե պեար, թե սպիտակամորուսը: Բագվի քաղաքապետարանումն էլ նրան ճանաչում էլին իբրև «ժողովրդի փոխանորդի» և «ներկայացուցչի»: Հաջին հարգանք էր վայելում վոչ միայն մեծ առևտրականների ու նավթատերերի մոտ, այլև Յեվրոպայում և Ռուսաստանում բարձրագույն ուսում ստացած իրավագետների ու այլ կարգի անձնավորութունների շրջանում: Նրա խոսքն ու կարծիքն անցնում էր չայչիխաններում, խաղատներում և գետնահարկերում հավաքվող մեծ շինջալի տեր մարդկանց մոտ: Փողոցում պատահած յուրաքանչյուր վոճիրի, կամ ծանր դեպքերի մասին հաջուն տեղեկութուն էր տրվում. սրանց մի մասը նա նույնիսկ կատարվելուց 2—3 օր առաջ իմանում էր:

Մի խոսքով, հաջի Ասլանը «մեծ» մարդ էր, վորովհետև «մեծ» մարդ համարվելու բոլոր տվյալները, ինչպես տեսանք, ձեռք էր բերել: Գարնանամուտ էր, Նովրուզի բայրամը, փողոցում լիքը բազմութուն. մարդիկ այցելում են միմյանց, շնորհավորում գարնանամուտը:

Բայց հաջի Ասլանը հրամայել էր, վոր թաղում գտնվող բոլոր տների դռներն ամենուրեք փակվեն, վորովհետև նա վորոշել էր այդ օրն իր նորահաս վորսկան շներին վարժեցնել նապաստակ բռնելու:

Հաջին իր ծանր մարմնով նստել էր ձիու վրա և վորոշ հեռավորութունից իր նորավարժ շնիկներին ցույց էր տալիս դաշտից բռնված մի նապաստակի: Ինքն էլ վազող շների յետևից «հա, ձագերս, հա» գոռալով քշում, էր ձին:

Մեծ աղմուկ էր ընկել փողոցում, կին ու յերեխա իրար ելին անցել: Ամեն վոք իր անձի յերկչուղից մի անկյուն էր կծկվել: Խեղճ նապաստակը մի անկյուն էր փնտռում մտնելու: Հենց այդ միջոցին նրա առջև մի հին տուն էր բացվել: Նապաստակն իրեն այս տան բակը գցեց՝ դռան ներքևում բացված ջրի ճանապարհից, և աջտեղ էլ թագնվեց:

Շները միահամուռ հարձակում գործեցին այս դռան վրա, հաջի Ասլանի հայհոյալից բղավոցներն էլ միացան շների հանած աղմուկին:

Հաջին կատաղել էր: Թաղում վոչ վոք չէր համարձակվում նրա խոսքից դուրս գալ: Խեղճ անատերը թեև դուռը կողպ էր պահել, բայց չէր մտածել ներքևի անցքն էլ փափել: Հաջին նրա յերեսին հայհոյում էր նրա ամեն ինչը՝ և՛ ընտանիքը, և՛ զավակներին: Իսկ թշվառ մարդն անբեկված՝ անընդհատ ներողութուն էր լսնդրում: Տանը կինն ու յերեխաներն իրար անցած՝ լալիս էլին: Հաջին հայ-

հոշելով ավելի չեր բարկանում, և բարկության աստիճանի համա-
ձայն էլ հաշտույնը ավելի չեր բարդացնում:

— Ուզում ես, — ասում էր նա, — ես սհաթիս եզ տանդ մեջ
լացող կնոջ ու չերեխաներիդ քաշեմ փողոցի մեջտեղ և եսքան
ժողովրդի ներկայութեամբ փայտե ցցի վրա նստեցնեմ...

Հաջի Ասլանն իսկապես էլ իր ուզածն անող մարդ էր: Միքա-
նի անգամ պատահել էր, վոր նա իր խոսքից դուրս չեկող, կամ
պատահաբար իրեն չբարեկող մարդկանց կանանց ու աղջիկներին
անպատվել էր իր ցանկացած ձևով:

Հիմա խեղճ մարդը, դեմքի ու շրթունքների գույնը նետած,
ներողութուն էր աղերսում իր հանցանքի համար:

— Հաջի բեգ, դուք միայն հրամայել ելիք դռները պինդ կող-
պել և ուրիշ վոչինչ չելիք ասել. այլապես՝ ո՞վ կհամարձակվի ձեր
հրամանին դեմ գործել:

Թեև հաջին բարկութունն իջնելու վոչ մի նշան չեր ցույց
տալիս, բայց «ո՞վ կհամարձակվի ձեր հրամանին դեմ գործել» խոս-
քը նրան դուր չեկավ:

Նա սիրում էր լսել նման հնադանդութուն հայանող խոսքեր:

— Ես անգամ կներեմ հանցանքդ, — ասաց նա գոռոզաբար:

— Աստված ձեր կյանքը չերկար անի, աստված ձեր հովանին
մեր վրայից անպակաս անի:

Այժմ արդեն ամբողջ թաղն սկսեց հաջու վեհանձնության և
մեծահոգության մասին խոսել:

*
* *

Սա, իհարկե, այնքան սովորական ու հասարակ դեպք էր, վոր
շատ քիչ ուշադրութուն կարող էր գրավել: Յերկու որ հետո ամենքն
արդեն մոռացել էին հաջու նապաստակ վորսալու պատմութունը:
Սակայն մի ուրիշ դեպք այս փողոցի կյանքում իսկապես վոր մեծ
իրարանցում ստեղծեց, շատ-շատերին լացացրեց:

Այս փողոցում ամենքը սիրում էին Մուրսակեցուն, վորովհե-
տև Մուրսակեցին վորքան հանդուգն, իզիթ, վոտ ու ձեռքով էր,
նույնքան էլ պատվավոր և անիրավութունից խուչս տվող մարդ
էր: Սա հաջի Ասլանի մոտ վարձու բանվոր էր: Իր առած ուժիկով
պահում էր չերկու ընտանիք, — իր և իր այրի քրոջ զավակներին:

Թալի մեջ միայն Մուրսակեցին էր, վոր համարձակվում էր
հաջի Ասլանի և նրա մարդկանց անարգարացի արարքների դեմ ա-
ռարկել, կամ տրտունջ հայտնել: Շատ անգամ նա կարողացել էր
հաջի Ասլանի մարդկանց այս կամ այն «գործ»-ի ծրագիրը խանգա-

քել: Մինչև իսկ միքանի անգամ միայնակ բաղխվել էր նրանց հետ և
վոչ մի անգամ չեր պարտվել:

Ինքը հաջի Ասլանն էլ միշտ գնահատում էր Մուրսակեցու
հանդգնութունն ու խելքը, և մտադիր էր նրան էլ իր «մարդկանց»
շարքն անցկացնել, բայց Մուրսակեցին այս մտքով արած առաջարկ-
ները մերժել էր: Նա ցանկանում էր ապրել միշտ պատվավոր կեր-
պով և չերբեք չխլել ուրիշ աշխատանքի արդյունքը: Յեվ վորպես-
զի հաջին կարողանար նրան նյութապես ընկճել և դժվար դրության
մեջ գնել, նրան իր գործից դուրս էր արել:

Այս հանգամանքը սակայն Մուրսակեցու վրա շատ քիչ էր ազ-
դել, վորովհետև նա իր համար մի ուրիշ աշխատանք էր ձարել:
Յեվ առաջին անգամն էր, վոր «ամենակարող» հաջին իր կյանքում
չէր կարողանում իր ուզածն անել, նա փաստորեն տկար էր մնում
Մուրսակեցու առաջ, և հետզհետե ընկնում էր դժվար դրության
մեջ: Հասարակության մեջ, գնալով ավելանում էր Մուրսակեցու
ազդեցութունը: Հետզհետե կարող էր թաղում ստեղծվել այնպիսի
դրութուն, չերբ բացի Մուրսակեցուց, ուրիշներն էլ սկսեցին հաջու
խոսքերին կարևորութուն չտալ: Սրա համար էլ հաջին միայն մի
բան ուներ անելու. — Մուրսակեցուն մեջտեղից վերացնել, վորպես-
զի ուրիշներին խրատ լինի: Իսկ այս նրա համար մի աջքան էլ
դժվար բան չէր. բավական էր հաջու մի ազդանշանը, և ամեն ինչ
վերջացած կլիներ:

Յեվ այդ ազդանշանը տրվեց վերջիվերջո:

Իսլամների ծոմապահության որերից մեկում, չերբ ժողովուրդը
մզկիթից դուրս էր գալիս, հաջու մարդկանցից մի խումբ, գինված,
հանկարծ կտրում են Մուրսակեցու առջև: Մուրսակեցին վիրավոր
ընկնում է. վոճրագործները ցանկանում են նրա մարմինը հողտել,
բայց Մուրսակեցին իր կյանքն այնքան էլ եժան տվողներից չէր.
նա ընկած տեղից, վիրավոր վիճակում կրակում է. մզկիթի առաջ
բացվում է իսկական մի ճակատամարտի տեսարան. կողմնակի մի-
քանի մարդիկ էլ վիրավորվում են:

Հաջի Ասլանի կազմակերպած այս գործողության հետևանքով
հրապարակի վրա մնացին չորս-անշունչ դիակներ. մեկը՝ ինքը Մուր-
սակեցին, չերկորդը ճանապարհից անցկացող կողմնակի մի մարդ,
չերկունն էլ հարձակում գործող վոճրագործներից...

Իրականում այս դեպքն այնքան էլ, իհարկե, արտակարգ մի
բան չէր, այս փողոցն իր պատմության ընթացքում այսպիսի ճա-
կատամարտներ շատ էր տեսել: Նման դեպքերի հետևանքով չերկու-
չերեք մարդկանց վիրավորվելը կամ մեռնելը չերբեք նորութիւն չէր

այդ փողոցում: «Մեծ» համարվող դեպքը սրանից էլ ահարկու և քստմնեցուցիչ էր:

Այդ որն առավոտյան նույն փողոցում չորս դռների առջև դրված էլին դագաղներ, իրարից վոչ աչքան հեռու. այդ չորս տներից բարձրացող սգի վողբը բոլոր թաղեցիների վրա թողնում էր վերին աստիճանի տխուր, սարսուցեցուցիչ տպավորություն: Ամբողջ թաղը համակված էր քստմնելի վոճրագործության այս վողբերգական հետևանքի տպավորությամբ:

Բայց Մուրսակեցու մահով հաջու սրտի կատաղությունը դեռևս չէր անցել. թաղում վոչ-վոք իրավունք չունեին նրա համար տխրել, նրա չերտասարդությանն ափսոսալ. դա չէր թուլատրված վոչ-վոքի: Մինչդեռ Մուրսակեցու խնամակալած քույրերից մեկի 16 տարեկան տղան դռան առաջ դրված դագաղի դիմաց դառն արտասուք էր թափում:

Այս տեսարանը էլ ավելի սաստկացրեց հաջու կատաղությունը. նա ըոպելյական մտածեց ու ծրագրեց՝ «Պետք է այստեղ լուծել Մուրսակեցու կողմից սպանված իր մարդկանց վրեժը...»:

Դեռ հազիվ էլին դագաղը դռան առջևից բարձրացրել, Մուրսակեցու դռան առաջից փողոցի մեջտեղը քաշեցին նրա քրոջ վուրդուն, 16 տարեկան ծաղիկ պատանուն, և բազմության ներկայությամբ մարմինը ծակծկեցին...: Տղան մահացավ նույն ըոպելյին...:

* * *

Այստեղից էլ սկսվում է մեզ ծանոթ փողոցի մեծ դեպքը, թեև այս փողոցի պատմության մեջ առաջին անգամը չէր դարձյալ, վսր թափվում էր անմեղ չերեխաների արյունը: Սակայն այս անգամ տարբերությունն այն էր, վոր մի դեռատի չերտասարդ սրախող-խող էր արվում իր մորեղբոր դագաղի վրա:

Իր սարի պես կտրիճ ու հանդուգն չեղբորը չեղերական ձևով կորցրած քրոջ լացն ու կոծը բնական մի բան էր: Նա տանը իր անհուն վիշտը լալիս, աղի արտասուք էր թափում, չերբ լուր բերեցին, վոր իր գավակին էլ մորթել են՝ հենց փողոցի դռան առաջ...:

Թշվառ կինն այս գուլժը լսելուն պես, գժի նման ընկնելով ու կանգնելով, դեպի փողոցը վազեց ու իր աչքերով տեսավ իր տղին՝ գետին փռված և արյան մեջ թավալվելիս:

Այս անգամ կինն այլևս դագարեց լաց լինելուց, նրա աչքերում ցամաքեցին արտասուքները, նա միայն սկսեց պատառոտել իր վրայի զգեստները, փետել գլխի մագերը, վայրի, ահարկու մի ձախով կանչել, իսկ այդ կանչերի ու վայոցների արանքում նրա բերանից մի անուն էր լսվում շարունակ.

— Հաջի Ասլան...

Այժմ այլևս վոչ-վոք հաջու հրամանին կարևորություն չէր տալիս: Բոլորն ազդված էլին իր գավակի մահվան վրա ինքն իրեն կորցրած այս կնոջ աղաղակներից: Շատերն էլին լալիս:

Հաջի Ասլանը դիտում էր այս տեսարանը. նա կարծես զգում էր, վոր շատ «անտեղի» և «չմտածված» էր իզուր տեղը կատարած իր այդ վոճիրը: Կինը նրան խաչտառակում էր: Անհրաժեշտ էր նրան լռեցնել, հենց այս նպատակով էլ նա մոտեցավ կնոջը և ասաց.

— Բավական է, այլևս անամոթության հասցրիր, չեկ տունդ գնա...

Կինն այս խոսքերը չէր լսում, այդ խոսքերը նրա վրա չէլին թողնում վոչ մի ազդեցություն. նա մինչև իսկ չգիտեր, վոր իր գլխին կանգնածը հաջի Ասլանն էր: Նա շարունակում էր կանչել ու անիծելով անպատվել հաջուն: Անհրաժեշտ էր անպայման լռեցնել կնոջը:

— Վեր կաց, ասում եմ քեզ, մի բղավիր, ասում եմ քեզ...

Ճար չկար, կինն իր «անամոթությունը» շարունակում էր:

Այստեղ հաջի Ասլանն ինչ անի՝ լավ է:

— Հիմա չես գիտեմ քեզ լռեցնելու կերպը, — ասում է նա:

Յեվ չերեսը դեպի իր մարդկանց դարձնելով՝ հրամայում է, վոր գնան, կնոջ փոքր վորդուն էլ տան մեջ սպանեն:

Կինը նախապես վոչինչ չէր հասկացել հաջու այս հրամանից, սակայն հետո, չերբ տեսել էր հաջու մարդկանց դեպի իր տունը գնալը, սկսել էր հասկանալ հաջու կրկնած «են մյուս տղին էլ...» խոսքի միտքը:

Ահա տեսնում էք, վոր այս «մեծ դեպքն» արդեն չափից դուրս ահավոր մի վոճրագործություն էր:

Կինը հիմա այլևս չէր լալիս, նա հաջու փոքրերին փաթաթված «Վալլահ, այլևս չեմ լա» ասելով՝ աղերսում էր:

Հետո հանկարծ նրան թողեց. ուզում էր դեպի իր տան կողմը գնալ, բայց փոքրերը չէլին շարժվում:

Նա, հազիվ շարժվելով, ընկավ իր գավակին փնտռելու գնացող մարդկանց չետեից:

Նա գոռգոռում ու կանչում էր, բայց չէր լալիս, այլ ծիծաղում էր:

Այս բոլորը, ինչպես վերևում ասացինք, շինծու բաներ կամ չերևակայությունների արդյունք չեն: Այդ փողոցի պատմությունը չերկար է, շատ չերկար. այդպիսի արյունոտ եջեր տասնչալնելով, հարյուրներով կարելի կլինեին հաշվել նրանում ..

1905 թվի հեղափոխութեան արիքները, անցնելով Կովկասյան սարերից, սկսեցին ալեկոծել Անդրկովկասի ու մանավանդ Բազմի այս նշանավոր փողոցի կյանքը ևս: Այն ժամանակ դեմ առ դեմ յեկան յերկու ուժեր: Ամենուր սկսվեց ընդվզում ու բողոք անիրավութեան ու բռնութեան դեմ: Ընկել եր տեղական կառավարութեան վարկը նա այլևս ազդեցութիւն չունէր:

Քաղաքացիների իրավունքը պաշտպանելու, զոտբաների զուլումին և բռնութիւններին ու թափվող անմեղ արյանը վերջ տալու նպատակով քաղաքի աղաները, իբրև «ժողովրդից ընտրված ներկայացուցիչներ», հավաքվելով Բազմի քաղաքապետարանում, մի միութիւն կազմեցին: Նրանք այս միութիւնն անվանել էին «Հաշտութիւն և բարեկամութիւն», վորի նպատակն եր պահպանել «կարգն ու կանոնը» այդ հայտնի փողոցում:

Յեթե քրքրելու լինեք Բազմի քաղաքապետարանի արխիվները, կամ թերթեք այն ժամանակվա թերթերը՝ իմանալու համար, թե ովքեր էին այդ ընկերութեան անդամները, նրա վարչական խորհրդի կազմում կտեսնեք մեղ շատ ծանոթ մի անձնավորութեան անուն

ՀԱՋԻ ԱՍԼԱՆ ԱՇՈՒՐՈՎ:

1905 թ. հեղափոխութեան որերին հաջի Ասլանն ունեցել է մի շարք յելույթներ: Յես շատ լավ եմ հիշում նրա յելույթներից մասնավորապես մեկը:

Հակահեղափոխութիւնը գլուխ եր բարձրացնում:

Այդ որերին այս հայտնի փողոցում կազմակերպված եր ցուցարարների մի մեծ խումբ, վորի առջևից գնում եր հաջի Ասլանը: Նրա յետևից գնում էին հեծելազոր կազակները, նվազում եր դիպուկունան ու հաջի Ասլանի մարդիկ պարում էին:

«Թագա փիր» մզկիթում հավաքված ցուցարարների այս խումբն անցավ մեծ յեկեղեցու բակը, վորտեղ խմբված Բագու քաղաքի նահանգապետը և այլ պետական պաշտոնյաները ծափահարութեամբ ընդունեցին հաջի Ասլանին:

Յեկեղեցու բակում մի բեմ սարքվեց. հաջի Ասլանն իր դեկ նման մարմնով բարձրացավ այդ բեմի վրա. նա այնտեղից ճառ պիտի խոսեր: Տիրեց լուսթիւն:

Հաջի Ասլանն սկսեց.

— Փողովուրդ. ես սով ե, վոր թագավորին չի ուզում... նրա...

— Փողովուրդ, դուք ել ասեք... թագավորին չուզողին...

Հաջի Ասլանի ցուցարար խմբից մի ահագին աղմուկ բարձրացավ: Ամեն վոք սկսեց բարձրաձայն կրկնել նրա ասած խոսքերը: Կարծես թե այս լուզունգը նրանց հոգու վայրենի հուզմունքը հանգստացնող մի ներդաշնակ յեղանակ լիներ...

Ս Ե Յ Ի Գ Ն Ե Ր Ը

1.

Ղարաբաղլարցի Նուրուլլահն ու իր կինը՝ Գյուլսում-խալան, տան դռան առաջ նստած, իրենց վորդի Շիր-Մեհեմմեդին էլին սպասում:

Շիր-Մեհեմմեդը դաշտում իրենց յեղներն եր արածացնում: Սա ամեն որ, արևի վերջին ճառագայթները դիմացի բլրակի յետևը խորասուզվելուն պես, յեղներն առաջը տված, դաշտից տուն եր վերադառնում: Իսկ եդ որը, հակառակ նրան, վոր մայրամուտից բավական ժամանակ եր անցել, դեռ չկար ու չկար:

Շատ էլին մտահոգվում մարդ ու կին: Ավելի շատ մտահոգվում եր մայրը՝ Գյուլսում-խալան, վորը շարունակ բարկանում եր ամուսնու վրա ու ասում.

— Ի՞նչ ես հանգիստ նստել, այ մարդ, վեր կաց, գնա յերեսիս յետևից, տես ինչո՞ւ եսքան ուշացավ, կարելի չե մի փորձանք ե պատահել:

— Եհ, տնաշեն, — պատասխանում եր Նուրուլլահն անհոգ կերպով, — ինչո՞ւ յես անհանգստանում, Շիրինը (տղային եդ անունն էին տալիս ծնողները) հո յերեսիս չե, մաշալլահ, խելքը գլխին յերիտասարգ ե, կգա... Հեր ոխնած, կարծես ծծկեր յերեսիս ունես ու ծծերդ կաթով են լցվել...

Չնայած մարդն իր այդ միխթարական խոսքերովն ուզում եր կնոջը հանգստացնել, սակայն ինքն ել եր անհանգիստ, ինքն ել եր մտածում տղայի ուշանալու մասին...

Մինչ մարդ ու կին Շիրինի ուշանալու հոգսովն էլին տառապում, հանկարծ յերկու սելիդ, գլխները կապույտ ապարոշներ փաթաթած, ուսերի վրա յերկաջն ու լայն արա (նուրբ բրդից հյուսված վերարկու), ձեռքերին մի-մի յերկար ասա (պողպատից կամ յերկաթից սրածայր գավազան) ու վոտքերին յերկար ճութավոր մաշիկներ, յեկան ու դռանը կանգնեցին:

— Ես սեղանս արեցիքում, վե ըստնաթուղլահու բարաքջաթիհու (բարև ձեզ աստծու վողորմութունն ու գթութունը ձեզ վրա), — բարևեցին նորեկ սելիդները:

— Վե արեցիքում սելամ, — փոխադարձաբար բարևեցին Նուրուլ-լահն ու իր կինը և, վոաքի կանգնելով, խնդրեցին, վոր ես գիշեր իրենց տանը հյուր լինեն:

Սելիդներն ընդունեցին հյուրասեր գյուղացու առաջարկու-թյունն ու մտան տուն:

Գյուլսում-խալան ճրագը վառեց, հյուրերին հրամցրեց սեղա-նի վերեր: Նստեցին: Իսկ Նուրուլահը նստեց նրանց դեմ ու դեմը:

Հենց այդ ժամանակ լսվեց «հո, հո» ձայնը: Յեկողը Շիրինն եր:

Գյուլսում-խալան իսկույն վազեց դեպի բակը, փաթաթվեց Շիրինի վզովն ու նրա յերեսը միքանի անգամ համբուրելով հարցրեց.

— Եդ ո՞ւր մնացիր, չարդ տանեմ. ի՞նչ եր պատահել, վորդի: Ով գիտե, շատ սոված կլինես, չե: Դե, շուտ արա, չեղները տեղա-վորիր, գնանք ճաշի: Մատաղդ լինեմ, բայլա ջան, չգիտես, թե բո մասին վորքան ելի մտածում:

Գյուլսում-խալան անվերջ համբուրում եր ու թիթեռնիկի նման պտտվում Շիր-Մեհեմեդի շուրջը, իսկ վերջինս ծիծաղելով պա-տասխանում եր.

— Եհ, մայրիկ, հերիք չե՞ ինձ յերեխայի տեղ ընդունես. մի անգամ պատահեց, վոր դաշտից ուշ վերադարձա, դրա համար հոգ պիտի անես: Փառք աստծու, ինձ վոչինչ ել չի պատահել: Շատ լավ գիտես, վոր գայլից ու գազանից վախեցողը չեմ. յեթե նույ-նիսկ թշնամին ել վրես հարձակվելու լինի, տաս մարդու պատաս-խան կարող եմ տալ... Բա, ի՞նչ ես կարծում: Եդ բոլորը դենը մնա, մի ասա, տեսնեմ, ի՞նչ ես յեփել, շատ սոված եմ:

Շիր-Մեհեմեդն, իր շուրջը պտույտ յեկող մոր հետ խոսելով, չեղները տեղավորեց, վրայի փալանները վար իջեցրեց ու առաջները կեր գնելուց հետո մոր հետ միասին մտավ տուն: Տեսնելով հյու-րերին, բարևեց: հյուրերն ել փոխադարձաբար բարևեցին իրեն: Հե-տո արեխները հանեց ու հոր կողքին, վոտքերը յերկարելով, նստեց:

— Ո՞վ ե ես տղան և վորտեղից ե գալիս, — հարցրին հյուրերը:

— Այա տղան — ձեր նոքարը — իմ վորդին ե, — պատասխանեց Նուրուլահը: Իրեն ել՝ ամոթ չլինի ասելը — նոր ենք նշանել:

— Ասոված շնորհավոր անի: Տերը կամենա, հարսանիքը յերբ եք անում:

— Տերը կամենա, Սեֆեր՝ ամսից հետո հարսանիք կանենք, ես ժամանակ դուք ել համեցեք:

¹ Արարական յերկրորդ ամիսը (լուսնային տարվա):

— Վողջ մնաք, կգանք... Միայն թե մեր ճանապարհը միքիչ հեռու չե:

— Իսկ հիմա ո՞ւր եք ուզում գնալ:

— Գնում ենք հայրենիք, մեր գյուղը — Վերին Լովարջանի, վո-րը գտնվում ե Արաքսի ափին...

— Մի՞նչ հյուրերն ու Նուրուլահը խոսում ելին, Գյուլսում-խալան նրանց առաջ մի սփռոց գցեց ու վրեն դրեց մի սինի (պը-ղնձե սկուտեղ) լեցուն փլավ, հաց, պանիր և մածուն:

Փլավի շոգին ողիկ-մողիկ վեր եր բարձրանում ու անուշ հոտով լցնում տունը. ձյունի պես սպիտակ ու թարմ լավաշներն ուղղակի ժպտում ելին մարդու յերեսին:

«Հանուն աստծո» ասելով, հյուրերն ու Նուրուլահը, Շիրինի հետ միասին, սկսեցին ճաշել: Իսկ Գյուլսում-խալան սեղանի պա-կասություններն եր լրացնում, — լավաշները պրծնելուն պես, տեղը նորերը բերում և միաժամանակ պղնձե ամանում լիքը սառը ջուր լցրած հրամցնում եր խմել ցանկացողներին:

2.

Ճաշելուց հետո սելիդները ջուր խնդրելով, դեզթմագ արին և միքանի ծունր աղոթելուց, տան տիրոջն ու նրա ընտանիքի ան-դամներին ևս բարեմաղթություններ անելուց հետո շարունակեցին իրենց խոսակցությունը:

Սոսակցության միջոցին պարզվեց, վոր սելիդները գնում են Նախիջևան, աջտեղից Ղարաչուխ՝ գյուղը, վորպեսզի տեղացի կանտ-րաբանդիստների միջոցով կարողանան անցնել Արաքսի մյուս ափը...

Սելիդներից մեկը գրպանից հանեց դանակն ու, Նուրուլահից կաջճհանն առնելով, սկսեց սրել:

Շատ լավ դանակ եր: Նուրուլահն ու Շիր-Մեհեմեդը հիացած նայում ելին դանակին ու նրանից չելին հեռացնում իրենց աչքերը: Վերջապես, Նուրուլահը չկարողանալով գսպել իր հիացմունքը՝

— Մաշալլահ, աղա — ասաց նա, — ի՞նչ լավ դանակ ե, բարով մաշես: Ճիշտն ասած, մեր գյուղում եդ տեսակ դանակը մի տղայի բարաբար ե:

— Այո, լավ դանակ ե, — պատասխանեց սելիդը. — յեթե ճա-նապարհի վրա չլինեյի, ուրախությամբ կնվիրեյի քեզ: Բայց խոս-տանում եմ, յեկող աշնան, մին ել ես ժամանակ, ետեղ գալուս, տանում եմ, յեկող աշնան, մին ել ես ժամանակ, ետեղ գալուս, տանում եմ Պարսկաստանից մի ես տեսակ դանակ առնեմ բերեմ քեզ: Ասում եմ Պարսկաստանից, վորովհետև այսպիսի դանակներ միմիայն են-տեղ են շինվում:

² Ղարաչուխցիները հայտնի կանտրաբանդիստներ ելին:

— Շատ զոհ եմ, աղա, չերկար կյանք ունենաս: Յես ել, իհարկե, չեմ մոռանա քո լավությունը:

— Եդ ինչե՞ր ես ասում, ա՛ քյաբելա, մի դանակն ինչ ե, վոր քեզ փեշքեշ չանեմ: Ուրիշ ի՞նչ ասելիք ունես, խնդրեմ, կարող ես հրամայել...

Այստեղ Շիր-Մեհեմեդին ել խառնվեց դրանց խոսակցությանը:

— Յեղիդ մատաղ լինեմ, աղա,— խնդրեց նա,— եդ դանակի պես մեկն ել վոր ինձ բերես, վոտքերիդ տակ մի մատաղ կկտրեմ:

— Եդ ել, տես, իմ ես աչքիս վրա...— պատասխանեց սեյիդը:

Այս խոսքերից սրտապնդված Նուրուլլահը, մի ինչ-վոր բան մտաբերելով, դարձավ դեպի սեյիդները:

— Աղաներ, — ասաց նա, — մի բան եմ խնդրում ձեզանից... չեթե ընդունում եք...

— Համեցե՞ք, քյաբելա, ինչպես թե չենք ընդունում: Նուրուլլահն ելի կանգ առավ:

3.

— Ասա, ասա, քյաբելա, ի՞նչու չես կանգ առնում, — կրկնեցին սեյիդները:

— Խնդիրս ես ե, վոր, — ավելացրեց Նուրուլլահը, — Շիրինին ուզում եմ ձեզ հետ քաղաք ուղարկել, ուրիշին չեմ վստահում: Այնտեղ հասնելիս տղան ինքը գիտե, թե ո՞ւր պետք է գնա. ենքան վոր ձանապարհին ձեր աչքը տղայիս վրեն լինի...

— Կավ, լավ, այ՛ վողորմածի վորդի, — պատասխանեցին սեյիդները ծիծաղելով, ինչ մի մեծ բան ե, վոր չընդունենք: Անհող կաց, Շիր-Մեհեմեդին ենպես ասենք, վոր իսկի չ'ընդունվուն չքաշի: Յերգվում ենք մեր պապերի գերեզմանով, վոր նրա հողին իսկի չել չպիտի նեղվի... Ձեր առաջարկությունը մեր գլխի վրա...

— Գլուխդ ապրի, աղա: — Մենակ՝ են եմ ուզում ասել, վոր տղայի մոտ մի քիչ ել փող ե լինելու, հենց դրա համար ել չեմ ուզում, վոր ուրիշի հետ գնա... Ձեզ հետ թող գա... Դուք, վոր մարգարեյի զավակներ եք...

— Այո, այո, իհարկե, եղպես ե: Մոտը փող ունեցող տղային, իհարկե, չի կարելի ամեն մեկի հետ ուղարկել: Վաս ժամանակներում ենք ապրում: Դու, հո, փառք ասածու, փորձված մարդ ես...

Վոզևորված սեյիդների եդ խոսքերից, Նուրուլլահը կանչեց Գյուլսում-խալային:

— Այ կին, — ասաց նա, — են 40 ուրլին բեր, տանք Շիրինին, թող վաղը գնա քաղաք ու Մեշեդի-Ղամբարի միջոցով իր հարսա-

նիքի համար ինչ վոր հարկավոր ե, առնի: Աղաները լավ ընկերներ են, սրանց հետ ապահով կգնաս:

— Ի՞նչ ես շտապում, այ՛ մարդ, — ասաց կինը մի քիչ կանգ առնելով, — չե՞ վոր դու մի շաբաթից հետո քաղաք ես գնալու, ել ի՞նչ կարիք կա չերեխիս եղբան հեռուներն ուղարկելու:

Հոր պատասխանի փոխարեն, Շիրինը դարձավ մորը:

— Ե՛հ, մայրիկ, — ասաց նա վրդովված ձայնով, — չեթե անգամ մորուքս ել սպիտակելու լինի, ելի դու ինձ չերեխայի տեղ պիտի ընդունես: Թե ասովածդ կսիրես, հորս փորձերին մի խառնվի, թող գնամ սեյիդների հետ, քաղաքը տեսնեմ:

— Վոչինչ չունեմ ասելու, վորդի, — ավելացրեց մայրը խոր հառաչելով, — գնա, հայրդ վոր կա՛ ել չես ինչացու չեմ: Միայն ուզում եմ ասել, վոր վո՛չ թե դու, այլ հայրդ պետք է գնա քաղաք, հարսանիքիդ համար հարկավոր իրերն առնելու:

Նուրուլլահն աչքով ե անում կնկան, վոր դուրս գնա, իսկ ինքը դառնալով սեյիդներին:

— Ես կնկա խելքը գլխումը չե: Նա իրեն մեռնելն ուզում ե, բայց մի որ տղայից բաժանվել չի ուզում: Եդ ե պատճառը, վոր եղպես բաց-բաց խոսում ե:

— Չպետք է մեղադրել, քյաբելա: Մոր սիրտը շատ զգայուն ե լինում...

Նուրուլլահը Գյուլսում-խալային ներս կանչեց: Վերջինս պահարանից հանեց շորում փաթաթած փողերն ու հանձնեց մարդուն, իսկ սա չել բաց արեց շորն ու միջի 40 ուրլու հին թղթադրամը համրեց ու, կրկին փաթաթելով նույն շորի մեջ, հանձնեց Շիր-Մեհեմեդին, ասելով՝

— Տես, վորդի, ես փողերը կտանես քաղաք, կտաս Մեշեդի-Ղամբար ամուն, նա քեզ համար հարսանիքի կտորներ կառնի: Քաղաքից վերադառնալիս չմոռանաս, Ղամբար ամուն ել մեզ մոտ դունադ կհրավիրես... Կրկնում եմ նորից, վոր առանց ամու գիտության քաղաքից մենակ դուրս չգաս:

Այս բոլոր խոսակցություններից հետո Գյուլսում-խալան հյուրերի ու իրենց համար անկողին փռեց: Բոլորն ել քնեցին:

Ճրագը հանգցրել ելին: Նուրուլլահը, կինն ու վորդի Շիր-Մեհեմեդին իսկույն ևեթ քնեցին: Իսկ սեյիդները, մինչև կես-գիշեր, անկողնում գլուխ-գլխի տված, քչիչում ելին:

Աբլորն առաջին բերանը նոր եր կանչել, չերբ սեյիդներն սկսեցին զարթեցնել Նուրուլլահին:

— Գլարելւս, աքլարելւս, — ձայն տվին նրանք, — մի նեղութիւն քաշիր, վեր կաց, մեզ ճամբու դիր, գնանք. մեր տեղը հեռու չե, ալլապես՝ ճաշվա շողերին կընկնենք:

— Ինչ ե պատահել, այ աղաներ: Ինչո՞ւ եղպես վաղ եք գարթներ: Սպասելիք լուսանար, նամագն անելիք, հետո կգնայիք:

— Չե, քլարելւս, կուշանանք... Նամագը ձորումն ել կարող ենք անել... հարկավոր ե գնալ: Միայն թե՛ տղային ձայն տուր, չեթե գալու չե, չուշանա:

Մրանց ձայնից գարթնեց և Գյուլսում խալան ու ճրագը վառեց:

Սելիգները հագնված, կազմ ու պատրաստ նստել էին անկողնու վրա: Հարկավոր եր Շիր-Մեհեմեդին ել գարթեցնել, վոր ենք անել ել հեշտ բան չեր: Նա քնած եր հանգիստ ու խոր քնով: Հայրն ու մայրը շատ կանչեցին, բղավեցին, բայց չկարողացան գարթեցնել:

Վերջապես սելիգներից մեկը մոտեցավ Շիր-Մեհեմեդին ու նրա ականջին ու ժեղ կերպով գոռաց.

— Այ գլագա, Շիր-Մեհեմեդ, ի՞նչ ես քնել: Վեր կաց, գողերը չեգները տարան:

Շիր-Մեհեմեդը սարսափահար վեր թռավ տեղիցն ու սկսեց շուտ-շուտ հագնվել. նա ենպես եր շշկված, վոր շալվարը վերարկուի, իսկ վերարկուն շալվարի տեղն եր հագնում:

Սելիգներն ու ծնողներն սկսեցին բան-քան ծիծաղել: Շիր-Մեհեմեդն իսկույն հասկացավ, վոր կատակ են անում, ինքն ել սկսեց ծիծաղել:

Գյուլսում խալան, պտույտ գալով Շիր-Մեհեմեդի շուրջը՝ հագնում եր նրան: Պահարանից հանեց նոր գործած չուխան ու գցեց աղալի ուսերին, պատից քաշ արած բուխարական փափախն իջեցրեց ու վրայի փոշին թափ տալով՝ դրեց նրա գլխին: Հետո կապոցի միջից մի գուլգ վոտքի փաթաթան (տոլաղ) ու մի գուլգ ել նոր նախշուն գուլպա հանելով՝ դրեց նրա առաջը:

Շիր-Մեհեմեդը հագավ այդ բոլորն ու են տեսակ մի սիրուն աղա դարձավ, վոր նայելով չելիր կշտանում...

Ծնողները հրճվում էին նրա գեղեցկութամբ: Նույնիսկ սելիգներից մեկը, չկարողանալով թաղցնել իր հիացմունքը, ասաց.

— Մաշալլահ, աստու՞ աշքը վրան լինի. ուրիշ աղա չե չեղել, քլարելւս, աստված բաշխի:

— Շնորհակալ եմ, չարդ տանեմ, — ասաց Նուրուլլահը ժպտագեմ ու խնդրեց սելիգից, վոր աղալի վրա մի բերան աղոթք կարգա, վոր չար աշք չբխչի...

Սելիգը «չղացավ» իր որհնութիւնը տալու Շիր-Մեհեմեդին:

Չեռքերը դեպի չերկինք բարձրացնելով՝ աղոթեց նա Շիր-Մեհեմեդի արեաշատութան համար:

Ու չերը սելիգները պատրաստվում էին ճանապարհ ընկնելու, Շիր-Մեհեմեդը դարձավ հորն ու ասաց.

— Հայրիկ, թող չես ես գիշեր չգնամ — հետո գնամ... չգիտեմ, մորս խոսքերն ինձ վրա շատ վատ են ազդել, գնալու տրամադրութիւն չունեմ... Բացի դրանից, ետը չես շատ եմ հոգնել, թողեք, վոր մի կուշտ քնեմ...

— Չե, վորդի, — պատասխանեց Նուրուլլահը. — գնա, մայրդ ել ե ուզում, վոր գնաս, ել եսպես առիթ չի ներկայանա, սրանց նման ընկեր վճրտեղից կարող ես ձարել, ջանս սրանց մատաղ:

Իսկ սելիգներից մեկը դառնալով Շիր-Մեհեմեդին՝

— Փիլա, չեչի կարծում, վոր եղքան վախկոտ կլինես... — ասաց նա, — ամոթ տղամարդութանդ: Քո հուսով ենք գիշերով ճանապարհ ընկնում, դու չել վոր եսպէս...

— Չե, աղա, գլուխդ վկա, վոր չեմ վախենում: Ժիշտ ասած՝ քնից չեմ կշտացել...

— Դրա համար մի մտածիր, չեղբոր աղա, — ավելացրեց սելիգը, — կգա ժամանակ, վոր կքնես ու լսկի չել չես գարթնի...

Սելիգի այս վերջին խոսքերը Գյուլսում խալան չափազանց վշտացրին:

— Վնւյ, եղ ի՞նչ ասիր, — միջամտեց Գյուլսում խալան կիսալաց ձայնով: — Աստված վոչ անի, վոր Շիրինս եղպես քնի, թող չտեսնեմ են որը...

— Մի վախենար, մայրիկ, խոսք եր, ասացի: Քավ լիցի, միթե աղալից մեռնելն եմ ուզում... Դե, հերիք: Վեր կացեք, գնանք:

Բոլորն ել վեր կացան: Գյուլսում խալան ձեռքերը փաթաթելով աղալի վզով, սկսեց նրան համբուրել ու ասել.

— Գնա, վորդի: Քեզ աստու՞ն եմ հանձնում: Չարն ու փորձանքը թող հեռու լինի քեզանից... Հետո դառնալով սելիգներին՝

— Ես չերեխես ձեզ, ձեզ ել աստու՞ն ամանաթ:

— Անհոգ կաց, մայրիկ, աղալից ենպես տանենք, վոր հոգին ել չցավի...

Ասացին սելիգները ու անից գուրս չելան: Նրանց հետևեցին Նուրուլլահն ու Շիր-Մեհեմեդը, իսկ բոլորից հետո՝ Գյուլսում խալան:

Հյուրերին ու Շիր-Մեհեմեդին ճամբու գնելուց հետո Նուրուլլահն ու կինը վերագարձան տուն ու տխուր ու տրտում, ձեռքները ծոցում՝ մտան անկողին:

Նուրուլլան անմիջապես քնեց: Իսկ Գյուլսում-խալան, ընդհա-
կառակը, աղաչի մասին սաստիկ մտածելուց, անկողնում շուռ ու
մուռ եր գալիս ու չեր կարողանում քնել: Նա շարունակ ախ ու վախ
անելով չեր կարող անում մոռանալ Շիր Մեհեմմեդին: Մանավանդ,
չերբ մտաբերում եր սելիդներին ու նրանցից մեկի ցուլց տված
դանակը, սիրտը դողում, ճմլվում եր...

Յերկար ախ ու վախից հետո վերջապես նա լել քնեց:

Շատ թե քիչ քնել ելին, չերբ հանկարծ Գյուլսում-խալան սար-
սափահար տեղից վեր թռավ ու սկսեց բղավել.

— Վայ, հայրիկ, վայ... վայ... հորս տունը քանդվեց... պատ-
ճառ լեղող, սունդ քանդվի:

Կնոջ ձայնից Նուրուլլանը զարթնեց: «Ի՞նչ պատահեց, այ
կին», — հարցրեց զարմացած:

— Ել ի՞նչ պիտի լինի: Քնիս մեջ տեսա, թե ինչպես են հյու-
րերը — սելիդները — Շիրինին կապոտած, գլուխը կտրեցին... Ի՞նչ
կլինի, այ մարդ, մի վեր կենաս, գնաս նրանց յեակից:

— Հանգիստ կաց, կնիկ, եղ ի՞նչեր ես խոսում: Սելիդները
Շիրինին ինչու պիտի սպանեն, նրանք հո մարդասպաններ չեն...
Իրանք բոլորն ել, ինչ-վոր խոսում ես, յերևակայության արդյունք
ե: Տղայիդ մասին շատ ես մտածել, դրա համար ել աչքիդ եղպես
ե յերևում:

— Ճիշտ ես ասում, մարդ, բայց մեղքս ի՞նչ թագցնեմ, են
սելիդների վրա իսկի լել սիրտս տաք չեր... Ի՞նչ իմանաս, թե
նրանք վորտեղի քաղցածներն ելին: Ի՞գուր տեղը մեր յերեխային
ուղարկեցինք նրանց հետ:

— Մեղա գոչիր, այ կնիկ: Մարդ ել մարգարելի զավակներին
(սելիդներին) եղ խոսքերը կասի: Մեղա ասա, ասածու անունը
տուր, սալավաթ կարգան, նրա (ասածու) զորությամբ Շիրինին վո-
չինչ ել չի պատահի:

Ես խոսքերից մխիթարված, Գյուլսում-խալան ու Նուրուլլանը
նորից քնեցին:

Հինգ րոպե չանցած, Գյուլսում-խալան կրկին անդամ տեղից
վեր թռավ ու սկսեց մագերը պոկել, յերեսն ու աչքերը չանգուել:

— Հորս տունը քանդվեց, դուռը դրվեց, վորդուս սպանեցին...
վորդի, այ վորդի: Այ մարդ, ի՞նչ ես հանգիստ քնել, տունդ քանդվի:

Խեղճ մարդը զարձյալ վեր կացավ: Այս անգամ ել ուզեց կնո-
ջը հանգստացնել, բայց անողուտ:

— Ինչեր ես խոսում, այ մարդ, — ընդհատեց կինը, — ի՞նչ քուն,
ի՞նչ յերևակայություն, ես կույր աչքերովս տեսա, թե ինչպես սե-

լիդները զասաբի նման կտրեցին Շիրինի գլուխը... հրեն... ձորա-
փին... ընկած ե... Վայ, վորդի... վայ... — Լսիր, մարդ, հենց հիմի
վեր կաց ու գնա նրանց յետեից, թե չե չես ինքս կգնամ գլխա-
բաց ու վոտաբորիկ...

Նուրուլլանը տեսավ, վոր այս հինան իր կարծած հինացից չե,
քիչ ե մնում, վոր կինը խելագարվի: մանավանդ չերբ ինքն ել մտա-
բերեց սելիդների սրած դանակը, վորը յեկավ կանգնեց նրա աչքի
առջև թաթախված արյան մեջ, սարսափահար վեր թռավ անկող-
նուց, շուտ-շուտ հագնվեց, մի փայտ վերցրեց ու գիշերով ընկավ
յերեխայի յետեից:

Իսկ Գյուլսում-խալան դուռն առաջը նստած՝ «Տունս քանդե-
ցիր, այ վորդի, մեջքս կտրեցիր, այ բայա, քո տեղը չես
պետք ե մեռնելի...» — աղիողորմ ձայնով լաց եր լինում, ծկներին
ու գլխին խփում:

5.

Արշալույսը վաղուց բացվել, բոլորովին լուսացել եր, արևա-
ծագին քիչ եր մնացել:

Գյուլսում-խալաչի լաց ու կոծից հավաքվել ելին բոլոր հարե-
վաններն ու ազգականները և հետաբորբությամբ հարցնում ելին
պատահած գեպքի մասին: Գյուլսում-խալան մանրամասն պատմեց
գործի յեղելութունը: Տղամարդիկ սկսեցին մխիթարել նրան, իսկ
կանայք բարձրաձայն լաց յեղան:

Գյուղում սկսվեց մեծ իրարանցում: Ամբողջ գյուղացիները
թափվեցին Նուրուլլանի տան դուռն առաջ... Իսկ Նուրուլլանից դեռ
վոչ մի տեղեկություն չկար...

Գյուղացիք տեսան, վոր անտեղի սպասելուց վոչինչ գուրս չի
գալիս, վերցրին փայտերն ու գնացին Նուրուլլանի յետեից:

Նուրուլլանը անից դուրս գալուն պես, վոտքերին ուժ տալով,
մի քիչ ճանապարհ գնաց ու հետո նստեց, հանգստացավ: Իարձյալ
շարունակեց ճանապարհը. մտավ մի ձորակ, ուր առաջանալու հետք
չկար — ճամբեն կորցրել եր: Հանկարծ նշմարեց ինչ-վոր արյան
հետքեր: Այդ հետքերը բռնած՝ Նուրուլլանը բարձրացավ ձորակի
վերևը... ու տեսավ, վոր Շիր-Մեհեմմեդն ընկած ե ձորակի մյուս
կողմը:

Շիրին, ա Շիրին, — կանչեց Նուրուլլանը: Բայց վոչ մի պա-
տասխան չստացավ:

Մոտեցավ մի քիչ ու ի՞նչ տեսնի, — տղան արյան մեջ կորած ե:

— Վայ, աման, վայ, — գլխին ու յերեսին խփելով, Նուրուլլանը
սկսեց բարձրաձայն լալ ու մագերը պոկել...

Այդ պահուն հասան և գյուղացիները...

Նուրուլլահի գլխում խելք չէր մնացել... Դեպքի վայրը հասնող գյուղացիները մի քիչ խորհրդակցելուց հետո, խակուն և լեթ մոտակա պահականոցին իմաց տվին: Իսկ մի քանիսներն ել՝ ձիավորների ընկերակցութեամբ՝ հետապնդեցին սելիդներին...

Մի ժամ չանցած, պահակները սելիդներին ձերբակալեցին Շահ-Թախթի մոտերը: Վերջիններիս գտան արնաթաթախ վիճակում, գրպաններում արյունոտ դանակ, իսկ շորի մեջ՝ 40 ուռբլի հին թղթադրամ:

Ձիավորները կապոտեցին սելիդներին ու հանձնեցին պահակների խիստ հսկողութեանը, իսկ իրենք դնացին կառավարութեանը լուր տալու:

Հետզհետե դեպքի վայրը հասան և մյուս գյուղացիները, վորոնք տեսնելով սելիդներին, սկսեցին թքել դրանց յերեսներին, ասելով.

— Այ, ձեր վիզը կտարի, լեթե դուք սելիդներ եք, հապա ես քնչ ե ձեր արածը:

Իսկ սելիդները գլխները քաշ արած՝ վոչինչ չեցին խոսում...

Յերևանի տեղական դատարանի արխիվում սելիդների մասին լեզած «գործ»-ը թերթողները կտեսնեն, վոր սրանցից չուրաքանչյուրը լենթարկված ե լեղել քսանական տարվա տաժանակիր աշխատանքի:

Սակայն դարաբաղարցիների սիրտը դրանով չհանդստացավ. նրանք են որվանից դեսը չեն թողնում, վոր մի հատ կանաչ փաթթոցավոր իրենց գյուղի մոտովն անցնի. նման մի սելիդի — կանաչ փաթթոցավորի տեսնելիս, գյուղացիները ձեռքերին մի-մի հաստ փայտ բռնած՝ հետևում են նրան ու գյուղից հեռացնում: Յեվ են որվանից մինչև այժմ ժողովրդի մեջ մնացել ե հետևյալ յերկու առածը. — «Սելիդի և նամարդի հողը միևնույն տեղիցն ե վերցված» և «Սելիդի արյունը մուսուլմանին հալալ ե»:

ՆՈՐ ՍՈՒՐԲԸ

1.

Մեր յերկրի Փիրքեթան-Կուլու սուրբն այնքան եր հոչակ վաստակել, վոր հեռու-հեռավոր տեղերից անգամ նրան ուխտի յեկող եր լինում: Ուխտավորների կարավանը գրեթե վողջ տարին չեր կտրվում:

Կուլը, շիլը, խուլը, կոնատը, հաշմանդամը և այլ տեսակի անբուժ ցավեր ունեցող հիվանդներ այս սուրբը գալով առողջանում ելին:

Ունևորներն իրենց լեցուն քսակներից, չունևորներն ել չարչարանքով ձեռք բերած վաստակից անչափ նվերներ ելին բերում, վորի շնորհիվ այդ սուրբն ամենահարուստ սրբերից մեկն եր համարվում:

Սրբի մզկիթը սիրուն մի լեռան ստորոտին եր շինված: Մզկիթի ընդարձակ բակում յերկնամբարձ չինարի և սալբի ծառեր կային, իսկ բակի կենտրոնում ճերմակ մարմարից խոշոր ավազանն եր բազմում:

Բակի ցանկապատը կարմիր վարդի թփերով եր քաշված, և ավազանի շուրջն այնքան առատ վարդ, կիտրոնենի, նարնջենի և թուրինջ կար, վոր ողն ուղղակի լեցվում եր բուլբուլ:

Մայիսին կարմիր վարդի վողջ թփերը սոխակների բուլն ելին դառնում վերից-վար: Լուսաբացին կարմիր վարդի այդ թփերում յերգող սոխակների դալալն այնպես եր խեղդում մուկեզինի ձայնը, վոր հավատացյաները վնչ թե նրա, այլ սոխակների ձայնից զարթնելով, վեր ելին կենում տեղներից, խմբվում ավազանի զլխին և իրենց դեսթեմազն¹ անում:

Մի խոսքով Փիրքեթան-Կուլու սուրբը հավատացյալների համար խիստ հաճելի ու դուրեկան սրբերից մեկն եր: Նա կողբին մի մեծ

¹ Առավոտյան ազոթից առաջ ձեռները լվալու արարողություն:

իջևան ունեք, ուր ուխտավորներն իրենց եղն ու ձին ելին կապում, իսկ իրենք էլ ապրում նրա հյուրանոցում:

Ամեն տարի հարյուրավոր վոչխար, չեզ, նուշխիսկ ուղտ ելին մատաղ անում այդ սրբին: Մատաղացուի կաշին սրբին եր նվիրվում, իսկ միսը բաշխվում էր ուխտավորներին ու մուրացիկներին:

Սրբի տոնն սկսվում էր նովրուզ-բայրամից¹ և տևում էր մինչև նախրաթողը — ասել է ամբողջ ութ ամիս: Իսկ տարվա մնացած չորս ամսին սուրբը փակ էր մնում: Այդ ժամանակամիջոցում սրբի տեր շեխը իր մի քանի մյուրիդների (ավագ աշակերտ, հետևորդ) հետ մնում էր մենակ:

Սրբի շեխը բարձրահասակ, փորը տուգած, հաստավիղ, ճերմամակամորթ և յերկարամորուք մի կրոնավոր էր: Նա թեև ծեր՝ բայց և զվարթ էր և աշխուժ: Այտերն այնպես կարմիր էլին, վոր կարծես մատղ գիպցնեյիթ թե չե, արյուն պիտի հոսեր: Նրա դեմքին ճրիակերության դրոշմը կար, և թեև եյությամբ խաբեբա՝ այնուամենայնիվ շեխը գիտուն էր և զուրան մեկնաբանող — նա մոտի 5-10 մյուրիդներին կրոնական որենսգիտություն էր դաս տալիս:

Շեխի աշակերտների և մյուրիդների մեջ Մեհեմմեդ անունով լերիտասարդ մի աղա կար: Շեխը շատ էր սիրում նրան և վոչ մի գաղանիք նրանից չէր պահում:

Մուլա Մեհեմմեդը (շեխի մյուրիդներին «մուլա» էլին կոչում) շեխի աջ թևն էր և սրբի գանձապահը: Սրբին արվող վողջ նվերները նրա ձեռքից էլին անցնում: Նա այնքան էր վստահելի, վոր շեխը վոչ միայն սրբի, այլև իր սեփական հաշիվ-մաշիֆն էլ նրան էր հանձնել:

Մուլա Մեհեմմեդը տարիներից ի վեր այդ սրբուհն էր ապրում: Սկզբում նրա ծառան էր յեղել, իսկ հետո՝ շեխի աշակերտը և ապա՝ մյուրիդը: Նա այնքան խելոք ու աչքաբաց աղա չէր, վոր շեխը վերոհիշյալ պարտականութուններն ամենայն սիրով նրան հանձնելուց զատ, ինքն իր մեջ խոստացել էր և նրա մեհրինը տալ:

Մի որ շեխը մուլա Մեհեմմեդին իր խուցը կանչեց և ասաց. — Չավակա, ինչն է պատճառը, վոր հայրենիքդ բնավ միտդ չես գցում: Տես, է, այդ տարիքին ես հասել, բայց դեռ չես ամուսնացել: Չգիտես միթե, վոր ըստ շերիեթի՝ յերկու սեռի համար էլ պիղծ է համարվում ամուրի և այրի մնալը:

Մուլա Մեհեմմեդը ձեռները կրծքին կանգնեց իր շեխի դիմաց. — Չեք հրամանին եմ սպասում, բարձրդ շեխ, ինչ հրամայեք՝ կհպատակվեմ, գուրխը խոնարհելով հայտնեց նա:

¹ Գարնանամուտի տոն — նոր տարի, 22 մարտի:

— Հրամանս սա չե, վոր նախ՝ գնաս հայրենիքդ այցելության ու պառավ մորդ հետ տեսնվես: Վախենամ, թե նրա անեծքին չենթարկվեմ, գուցե խեղճ կինը կարծում է, թե քեզ պահում եմ — չեմ թողնում, վոր գնաս հետը տեսնվես: Այս մեկ. յերկրորդ հրամանս էլ սա չե, վոր հայրենիքդ գնալով մի աղջիկ կնության առնես... Ել սրանից հետո ամուրի մնալը մեծ մեղք է, և չես բնավ գոհ չեմ լինի, վոր վզիդ նման մի մեղք ծանրանա: Թե այս առաջարկներիս դիմաց խոսք-բան ունես, ասա՛, մի ամաչի:

— Ի՞նչ խոսք կարող ե լինել, ո՞վ մեծավոր. թեև դուք իմ մարմնավոր հայրը չեք, բայց չե՞ վոր հոգևորն եք... Պարզ է — մեկի դեպի իր հոգևոր հայրը տածած հարգանքն ավելի չե լինում, քան թե դեպի մարմնավորը: Չեք առաջարկները, շեխ, ինձ համար հրամանի կշիռ ունեն, և չես ի՞նչ իրավունք ունեմ ձեր հրամանին չհպատակվելու: Ցանկանում եք, ուրեմն, վոր հայրենիքս գնամ, մորս ատենեմ և ամուսնանամ. շատ լավ, ձեր հրամանն ընդունում եմ, բայց, ինչպես գիտեք, հայրենիքս շատ հեռու յերկրում է, չես ինչպես վոտքով գնամ այնտեղ հասնեմ. դեռ ավելին՝ առանց նյութական միջոցների ինչպես կարող եմ ամուսնանալ և կին պահել: Ճիշտ է, ըստ շերիեթի՝ ամուրի և այրի մնալը պիղծ գործ է, բայց ի՞նչ անես, յերբ հնարավորութուն չկա...

— Ճիշտ է, զավակա, — լերիտասարդի խոսքերն ուշադրությամբ լսելուց հետո վրա բերեց շեխը, — յեթե նյութական միջոցներ չկան, մարդ այս աշխարհում վոչինչ չի կարող անել: Բանն այն է, ախր, վոր դու ընկեցիկ չես ե... հասկանում ես... Յես շատ ու շատ բավով եմ քեզ պարտական: Ինչքան փող ուղես, կարող ես վերցնել. նով եմ քեզ պարտական: Ինչքան փող ուղես, կարող ես վերցնել. քանի քանի տարվա ոռճիկդ բոլորը պահել եմ... Այդ կողմից միանգամայն հանգիստ յեղիր, փողի կարոտություն չունենք: Գթառատ ասածու հրամանով այս սուրբը մեզ համար անսպառ մի գանձ է, հարստության աղբյուր... Բանի դեռ ժողովուրդը խավարամիտ է, մեր գործը չի կուրանա... Դեռ ելի ասելիքներ ունեմ, զավակա, բայց այս անգամ այսքանն էլ բավական է: Այդպես, ուրեմն, մի ուշանա, վաղն առավոտ ինձնից մի գումար կստանաս ու ճամբա կընկնես դեպի հայրենիքդ: Վոտքով մի գնա, զավակա, ախուհից դուրս հանիր սպիտակ եշը, թամբիր ու քշիր... Իսկ հիմա ազատ ես, գնա համբի պատրաստություն տես. ծառային էլ ասա՛, վոր այս գիշեր ճամբի պատրաստություն տես. ծառային էլ ասա՛, վոր այս գիշեր եշի գարին քիչ ավելացնի... Չմոռանամ ասել, սակայն, վոր եշիս եշի գարին նայես, այդ եշը հասարակ եշերից չե... Արդեն նկատած լավ պիտի նայես, այդ եշը հասարակ եշերից չե... Մրդեն նկատած կլինես, թե չես ինչպես եմ խնամում նրան: Միայն քո խաթրի համար եմ եշս քեզ արամադրում, հա... Վերջապես, զավակա, այդ անասուն — ավանդը քո ջանից չջուկես...

— Գլխին վրա, բարձր շելս, — կրկին խոնարհություն անելով հայտնեց մոլլա Մեհեմմեդը, — վստահ չեղեք, վոր ձեր եղին իմ ջանից ել լավ պիտի խնամեմ:

Յեվ գլուխ տալով դուրս գնաց:

2.

Մալխի սկիզբն էր: Այս ամսին մեր չերկիրը մի դրախտ ե կարծես: Լեռ-քար, սար-ձոր, դաշտ ու մարզ վողջը մեղմորեն խոնավ չերփնեբանգ ծաղիկներ են հագնում: Կարմիր, կապույտ, ճերմակ ու դեղին ծաղիկներ խոտերի միջից փունջ փունջ դուրս գալով աֆսոս են խնդում արևի չերեսին, վոր նրանց նայելիս մարդու սիրտը բացվում է:

Գարնան սկզբներին հալած ձյան պղտոր ջրերը հայելու պես գտված՝ մերթ այս, մերթ այն կողմից բյուրեղի նման փայլվում են մարգերում:

Ողբ լեցուն է պես-պես ձայներով. արտույտներ, սարյակներ, ճղայթներ, դեղձանիկներ և զանազան տեսակի սոխակներ, ամենքը ձայն ձայնի տված, չերգում են անվերջ: Յերգող այդ թռչունների մեջ արտույտը բոլորից անցնում է: Այս թռչունը կանաչ մարգերի միջից հանկարծ թևերը թափահարելով դուրս է պրծնում, աչքը կարածին չափ բարձրանում, բարձրանում և պահ մի չերգելուց հետո մեկից քարի պես նետվում է խոտերի մեջ և թագնվում: Սարյակը հեռվից կտկտացնելով ձայն է տալիս նրան՝ ասես գովելիս լինի: Թե ի՞նչ են խոսում այդ թռչուններն իրար հետ, վո՞չ վոք չգիտե, այսքանը կարելի չէ ասել, վոր շատ քաղցր ու անուշ են զրույց անում. թեև բան չի հասկացվում դրանց այդ զրույցից, բայց լսողը մեծ հաճույք է ստանում ու բնավ չի կշտանում: Վերջապես ել ի՞նչ ասեմ — գարնան այդ ամսին մեր չերկրի պես սիրուն չերկիր քիչ է ճարվում. չուտես, չխմես՝ նրա գեղեցկությունները դիտես...

Գարնան հենց այսպիսի մի որ գունգգուն ծաղիկներով զարդարված գաշտում սպիտակ ել նստած՝ մի չերիտասարդ եր անցնում. դա մոլլա Մեհեմմեդն էր, իսկ տակինը՝ Փիրքեթան-Կուլու սրբի եղը:

Իաշտերի պճրանքը, թռչունների գալալը, ծաղիկների բուլբուլ և ոգի մաքրությունն ու մեղմությունը թե եղի — այդ անբան ու անլեզու կենդանու, և թե նրա վրա նստողի մեջ չերգելու տրամադրություն ելին զարթեցրել...

Յերիտասարդն եղի պախուրցը բաց թողած, նրան իր կամքին եր թողել: Ենն ել ծուլ ու գանդաղ, իր քեֆին գնում եր՝ գլուխը մեկ այս, մեկ այն կողմ շուռ տալով և ճանապարհի աջ ու ձախ չե-

ղերքին բսած ծաղիկները պոկելով՝ անուշ եր անում — ըստ չերևույթին, լավ քեֆ ունեք: Նա շուռ շուռ հեռուները հոտոտելով կանգ եր առնում, պոչը չերերացնում, գլուխը բարձրացնում և ճերմակ ատամների շարքերը բացած՝ գում, ասես սրտի խորքից ուրախանում եր...

Այդ պայմաններում մոլլա Մեհեմմեդի սիրան ել եր սիրով լցվում: Նա իր մյուրջիդ¹ շելսի խոսքերը մտաբերելով ասում եր.

— Տեսնենք ամուսնանալու բախտ պիտի ունենանք, թե վո՞չ...

Աստծու կամքն է, շելս, ամուրի մնալն, իհարկե, ճիշտ չէ ըստ չերիթի, բայց թե լավ կլինեք, չեթե ինձ բաժին ընկնող յարի գեղեցկությունը Չուլեյխայի, Շիրինի և Լեյլու գեղեցկությունից չես չմնար... վոր մենք ել իմանալինք, թե այս աշխարհում լազաթով ապրելը վո՞նց է լինում...

Յեվ չերիտասարդն իր սրտում այսպիսի զգացումներ անելով, կարծես ավելի չեր մտերմանում հերոսական սիրո կրակին...

Եղը գում եր, իսկ վոգևորված տերը դնդնալով, ինչ-վոր բանաստեղծություններ եր չեղանակում:

Հանկարծ եղը վոտները պնդեց գեանին ու կանգնեց: Ինչքան Մեհեմմեդը հրեց-հրմշտկեց, եղը տեղից չշարժվեց: Մեհեմմեդը ցած նետվեց և փոխանակ ծեծելու կամ բզելու, սկսեց քերել, շփել նրա վիզն ու գլուխը, բայց ուժաթափ եղը կանգնած տեղից մի բայլ անգամ առաջ չշարժվեց: Մեհեմմեդն սկսեց նրա աչքն ու չերեսը համբուրել ու ջերմագին պաղատել.

— Հերս ու մերս քեղ մատաղ, այ հուր-հրեղեն անասուն, ախր եղ ի՞նչ չեղավ, վոր եղ որն ընկար, է... Այ, շանս քեղ մատաղ, ընչի եգպես կանգնել, չես շարժվում, է... Ախր վո՞չ բոթող-բոթբոթող չեղավ, վո՞չ ել բող-կսկծացնող... Շարժվիր, մատաղ եղ սիպտակ մաղերիդ, շարժվիր, ժամանակը թանգ արժե, տես, կեսորն անց է կացել, շարժվիր, գուցե մինչև իրիկուն մի շեն հասնենք, խո ես դաշտումը չենք մնա. դե, հը՛, մատաղ եղ խաժ աչքերիդ, գոնե ինձ խղճա ու ես բաց դաշտում վիզս ծուռ մի թողնի... Թե ուզես, չես ել չեմ նստի մեջքիդ... այ, եսպես զցեմ առաջ ու արածացնելով տանեմ:

Այս քաղցր խոսքերից և վոչ մեկը, սակայն, եղին չապրեցին: Նա կանգնած տեղից չեր շարժվում, և իր խաժ աչքերով խեղճ-խեղճ Մեհեմմեդի չերեսին եր նայում:

Յեվ հանկարծ Մեհեմմեդը տեսավ, վոր անասունի աչքերը մթափնեցին, մանրացան և ականջներն ինչ-վոր չերեացին. — եղը կանգնած տեղից շրջալարով գետին ընկավ, քիչ ել ընկած տեղը հկաց ու շունչը փչեց:

¹ Մեհեմմեդի հեռուորդը:

Մեհեմմեդն ինքզինքը եշի վրա գցելով, սկսեց չերեխայի պես լալ, կուրծքը պատռել ու գլխին տալ:

— Տունս քանդվեց, — լալով վողբում եր նա, — ջահել կյանքս փչացավ, չերանի մի անգամից մեռնելի ու հոգիս ազատվեմ... հիմի չես ել վոնց պիտի մյուրջիդիս չերեսին նայեմ, հա... Ես պատուհասը վոնց նրան տեղեկացնեմ, վոր ամոթից հալվելով չմեռնեմ... Վոչ, վոչ, չես շելիսի մոտ վերադառնալ ել չեմ կարող... Լավը հենց ես ե, վոր գլուխս առնեմ ու քանի աչքս կտրում ե՝ հեռու-հեռուները փախչեմ...

Այս մտքով տարված, Մեհեմմեդը տեղից վեր կացավ ու առաջ շարժվեց, բայց հազիվ եր միքանի քայլ եշից հեռացել, կանգ առավ:

— Վո՞րտեղ եմ գնում, — ինքն իրեն ասաց նա, — ես անասունի դիակն ես բաց դաշտում թողած ուր եմ գնում: Թողնեմ, վոր գել ու գազանի կեր դառնա... Նա ինձ ինչ վատություն ե արել, և կամ թե ինչ մեղք ե գործել, վոր չես նրան անհող-անգերեզման թողնեմ գնամ... Վոչ, դա իսկի խղճի բան չե, եսպիսի ազնիվ անասունի դիակն առանց թաղելու չեմ գնա...

Յեվ Մեհեմմեդը չես դառնալով, ճանապարհից քիչ հեռացավ և վտաի տակի խոտերը պոկոտել սկսեց: Գետինը սրբել-մաքրելուց հետո գրպանից մի դանակ հանեց և սկսեց հողը փորել: Հողը խոնավ եր, ուրեմն և խիստ փափուկ: Մեհեմմեդը մի խոր ու չերկար փոս փորեց, եշի դիակը մեջը գցեց և հողով ծածկեց: Հետո գերեզմանի վրա մի փոքրիկ հողաթումբ կազմեց, գուլնգուլն ծաղիկներից փունջ կազմելով դրեց վրան, և ապա ծոցի գրպանից փոքրածավալ Ղորանը հանելով, նստեց գերեզմանի գլխին և սկսեց բարձրաձայն կարգալ:

Մեհեմմեդը մի կողմից Ղորան եր կարգում, մյուս կողմից ել հեղեղի պես արցունք թափում:

Պահ մի գլուխը բարձրացնելով տեսավ, վոր մի մեծ կարավան ե կանգնել ճամբի վրա: Կարավանի մարդիկ, տեսնելով Մեհեմմեդի այդ վիճակը, կանգնել դիտում ելին: Նրանցից մի քանիսն ընկերներից բաժանվելով, մոտեցան Մեհեմմեդին և հարցրին, թե ինչն ե պատճառը նրա այդ վողբ ու կոծի:

Մեհեմմեդը տեսավ, չե, չեղելության ճշմարտությունը հնարավոր չե, վոր բաց անի դրանց. չեթե բաց անելու լինի, գուցե և ծիծաղեն վրան, նու չնիսկ բարկոծեն, վորովհետև չտեսնված բան ե, վոր եշի գերեզմանի վրա Ղորան կարգան:

Դրա համար ել Մեհեմմեդը մտքում մի սուտ հերյուրեց և խոսքը կարավանին ուղղելով, ասաց.

— Ո՞վ հավատացյալ չեղբայրներ, թող ձեզ ծանոթ լինի, վոր այս գերեզմանում թաղվածը արդարագործ, հավատացյալ և կրոնասեր մի մարդ ե: Իր վողջ կյանքի ընթացքում նա և վոչ մի անգամ լուսաբացի նամազը բաց չի թողել: Նա-իմ ճամբու ընկերն եր: Բանի որից իվեր վոտքով ճամբա ելինք գնում միասին: Ընկերս խիստ ուխտապահ մարդ եր, դրա համար ել շատ եր նիհար: Հենց վոր այստեղ հասանք, նայեց գետնին և ասաց. — «Բարեկամ, ել կարողություն չկա մեջս, վոր քեզ ընկերանամ ու ճամբա կտրեմ... Աստծուց խնդրում եմ, վոր մահս հասցնի ու հենց այստեղ հոգիս առնի»: Հազիվ այս խոսքերը բերանից հանած՝ հոգին ավանդեց... Յես ել բռնեցի նրան թաղեցի այստեղ: Իսկ հիմա, ինչպես տեսնում եք, նստած նրա գերեզմանին՝ Ղորան եմ կարգում:

Կարավանում մի հարուստ վաճառական կար, վոր քանի-քանի տարվա հիվանդ եր: Ինչքան բժիշկներ ելին չեկել նայել, բայց դրա ցավին դարման չելին կարողացել անել: Հիվանդը բժիշկներից հույսը կորած, ուխտատեղիներն եր ման գալիս, սրբերին դիմելով, ցավին դարման եր խնդրում:

Վաճառականը հենց վոր իմացավ, վոր այդտեղ թաղվածն արդար մարդ ե, ցանկացավ գալ նրա գերեզմանն ընկնել ու առողջություն խնդրել իր մարմնին:

Ծառաները ցած բերին վաճառականին ուղտի կռնակին սարքված իր հովանուց և ուսերի վրա գերեզմանին մոտեցրին:

Մեհեմմեդը նրան տեսավ թե չե, ձեռները չերկինք բարձրացրեց և սկսեց սրտում աղոթել:

— Ամենակարող տեր, խղճա ինձ ու բաց մի անի իմ այս ստի չերեսը...

Կարավանի ժողովուրդը՝ կին թե տղամարդ, գերեզմանի շուրջը խմբված՝ դիտում եր:

Ծառաներն իրենց ուսերից ցած բերին հիվանդ վաճառականին, վորը մի չերկու քայլ առաջ սողալով, գերեզմանին ապավինեց...

Մի չերկու ըոպե ուշագնացի պես եր նա: Հետո մեկից-մեկ վոտքի կանգնեց ու բարձր ձայնով գոչեց.

— Փնօք աստծու, առողջացա, ել մարմնիս մեջ վոչ մի ցավ չմնաց...

Կարավանի վողջ ժողովուրդն ուղղակի հիացած եր... Իսկ ամենից ավելի Մեհեմմեդը զարմացավ այդ գաղտնիքի վրա...

3.

Ինչքան վոր Փիրքեթան-Կուլու սրբի շելին աչքն իր մյուրիդի ճամբին՝ սպասեց, սպասեց, բայց Մեհեմմեդը հրապարակ չեկավ:

Անցավ գարունը, ամառը և աշնան վերջին ամսին ուխտավորների պոչն ել կտրվեց... Յեվ այդպես այդ տարին անցավ, անցավ և հաջորդ տարին, բայց Մեհեմմեդը չկար ու չկար: Վերջապես նրա հեռանալու վրա ամբողջ յերեք տարի անցավ:

Յեվ այդ ժամանակամիջոցում շելխը տեսավ, վոր իր սուրբը չեկող ուխտավորների քանակը տարի տարվա վրա պակասեց: Հետո յել այնպես չեղավ, վոր ել վոչ վոք չեկավ:

Այս գաղտնիքը շատ զարմացրեց շելխին, և նա չիմացավ, թե ինչին վերագրի այդ: Սուրբն ել չեկամուտից այնքան ընկավ, վոր շելխն ստիպված չեղավ իր կանանցից մի քանիսին ապահարզան տալու: Թեև նրա արձակած կանայք պառավ-մառավ ելին, բայց վերջն այնպես չեղավ, վոր շելխը չերիտասարդներին իսկ պահելու հնարավորութունից զրկվեց...

Յեվ այդպես Փիրբեթան-կուլու սրբի հոշակն ու ազդեցութունը ժողովրդի աչքից կամաց-կամաց ընկավ:

Մի որ սուրբը չեկած հաս ու կենտ ուխտավորները շելխին պատմեցին, թե ինչ-վոր շրջանում նոր մի սուրբ է հայտնվել, թե վողջ ժողովուրդը հիմա այդ սրբին է գնում. մի սուրբ, վորի հոշակն որ-որի վրա ավելանում է, վորովհետև բնավ չի լինում, վոր նրան զիմոզն անհույս վերադառնա: Իչքան հիվանդներ՝ շիլեր, հաշմանդամներ, նույնիսկ խենթեր, այդ սրբից առողջութուն ստանալով՝ վողջակազմ՝ տեղերն են գնում: Ասում են, վոր չբեր կանայքն անգամ այդ սուրբը գալով՝ մի որ գիշերելուց հետո տուն են դարձել բժշկված: Այդ նոր սուրբը չերկու-չերեք տարում անչափ հարստացել է—հոտերով տավար-վոչխարի և չերամակներով ձիու տեր է դարձել: Ժողովուրդը նրա անունով է չերգվում և իր գավակներին նրան նվիրում¹:

Փիրբեթան-կուլու սրբի շելխն իրերի այս վիճակն իմանալով, մնացել էր զարմացած: Նա քննության առավ իր սրբի դրութունը և տեսավ, վոր նա այդ նոր սրբի զիմաց ել չի զիմանա ու պիտի փակվի... վորովհետև թե ազդեցութունն է կորցրել, թե հրաշագործ ուժը .. ժողովուրդը ել չի հավատում իր սրբին, և չեկող հիվանդներն ու հաշմանդամներն առանց առողջանալու, քոռ-փոշման չես են գնում տները և, ով գիտե, ինչեր տարածում աջ ու ձախ... Այս բոլոր հարցերը վերցնել-գնելուց հետո շելխն իր մարդկանցից մի չերկուսին փոխանորդ նշանակեց և թողեց սրբից հեռացավ...

¹ «Հավատացյալ» մահմեդականի համար մեծ կրոնական բարեգործութուն է, չերը նա իր գավակին անվանապես վորև սրբի չե նվիրում, և ապա տարիներ անց, վորոշ վճար անելով, նույն այդ սրբից «չես ստանում» իր օնվերը:

Յեվ մի որ հարցուփորձով շելխը նոր սրբի տեղն իմացավ ու վեր կացավ նրան այցելության գնալու:

Այդ նոր սուրբը կոչվածը սիրուն մի դաշտավայրում էր գտնվում: Նա ուներ իր մզկիթը, վորի գմբեթը գունավոր հախճապակուց էր շինած, ուներ իր իջևանը, հյուրանոցն ու այլ և այլ շենքեր:

Մինչ շելխը սրբին էր մոտենում, զիմացի կողմից մի խումբ նոր ուխտավորներ հասան:

Սալավաթի¹ ձախից մարդու ականջը բռնվում էր: Ուխտավորները մզկիթին հասնելով՝ սկսեցին կյուսլ² անել ավագանում:

Յեկվոր շելխը սրբի շելխին տեսնել ցանկացավ, և ծառաները նրան իրենց մեծավորի խուցը տարան: Շելխը ներս մտնելով տեսավ, վոր սենյակի դուռը բազմոցի վրա մի չերիտասարդ մուլա չե նստել ձեռին համրիչ՝ և Ղորան է կարդում: Շելխը բարև տվեց: Յերիտասարդը շելխի չերեսին նայեց թե չե, իսկույն տեղից ցատկեց, մոտեցավ նրան, վոտներն ընկնելով սկսեց համբուրել: Շելխը կուացավ, բռնեց չերիտասարդ մուլայի ուսերից, վոտի կանգնեցրեց նրան և ուշադրությամբ չերեսին նայելուց հետո հասկացավ նրա ով լինելը: Նա թևերը բացած իսկույն զրկեց չերիտասարդ մուլային և սկսեց չերեսը համբուրելով մի լաց լինել, մի լաց լինել, վոր...

— Վահ, Մեհեմմեդ, գավակս, այդ դժու չես,— աչքերից արցունք թափելով, սկսեց նա,— փառք ասածու, վոր չմեռա ու տեսա քեզ... Վահ, ցավդ տանեմ, վոնց ես, ե, քեֆդ լավ ե... Ախր դժու վորտեղ, այստեղը վորտեղ... խո դժու չել ուխտի չես չեկել... Ախր վո՞րտեղ ելիր այսքան տարի, ասա, ե...

Յեվ տված հարցերի պատասխանը դեռ չստացած՝ շելխը շարունակեց.

— Զավակս, քեզ հետ հետո էի կցրուցենք. դու տար ինձ հիմի այս սրբի շելխի մոտ, ուզում եմ նրան մի այցելութուն տալ, իսկ հետո...

— Սրբի շելխը չես նվաստս եմ,— իր մեծավորի ձեռները քաշել-համուրելուց հետո հայտնեց մուլա Մեհեմմեդը,— նստեցեք, խնդրեմ, ու վողջ չեղելութունը մանրամասնորեն պատմեմ ձեզ:

Փիրբեթան-կուլու սրբի շելխն այս խոսքերը լսեց թե չե, հենց կանգնած տեղն ասես քարացավ մնաց, ել բառ չգտավ, վոր խոսի...

Մեհեմմեդը նրա այդ վիճակը տեսնելով, բռնեց իր մեծավորի ձեռքը, բերեց նստեցրեց իր բազմոցին, իսկ ինքը ձեռները խաշած՝ կանգնեց նրա զիմաց:

¹ Մահմեդականների խոստովանանքը:

² Մահմեդի հրահանգած լվացման արարողութունը:

ՆԱՄԱԿԸ ԶՀԱՍԱՎ

1

Զմեռվա խստաշունչ մի որ եր: Յուրաքանչյուր կտրուկ եր թրինման: Յերկիրքը, ինչպես սգավոր, սև ու թանձր վարագույրով իջել, շքր- շապատել եր լեռներն ու դաշտերը:

Փողոցներում կուլտ-կուլտ դիզված ձյունների վրայից ագռավ- ները շրջում էին վախկոտ նայվածքներով:

Հաստ վերարկուներով, գլուխներն ու վոտները ծածկված, մար- դիկ իրենց տաք ու փառավոր սենյակներից դուրս գալով փողոց, վոտքով կամ կառքով հանգիստ անցնում էին: Այս սառեցնող, այս այրող ձմեռը նրանց համար, իհարկե, վոչ այլ ինչ եր, չեթե վոչ հաճելի մի գրոսանք:

Կուրբանը այս լեղանակին նստել եր Շեյթան բազարի ծայրին, նամակներ գրող իր համագյուղացի մուլլա Ֆարգ Ալու մոտ: Յրաից ձեռքերն ու դեմքը կապտած, մի ձեռքով բռնել եր իր հին և պա- տառոտված վերարկուի բաց ոձիքը, մյուսով փորձում եր ձյունից մաքրել իր մաշված կոշիկները, վորոնք սառցի նման կպել էին իր վոտներին:

— Մուլլա, ինձ համար մի նամակ գրիր: Գիտես, վոր մի տար- վա մեջ վորքանս ոգուտ եմ տալիս քեզ, դեռ մի տարի չկա իմ ծնըն- դավայրից գալս, և ահա այս հինգերորդ նամակն ե, վոր քեզ գրել եմ տալիս:

Ֆարգ Ալի մուլլան իրար մոտեցրեց ցրաից կծկված իր ձեռնե- րը, հորանջելով հանեց մի թղթի կտոր և դրեց ծնկին:

— Հայրենակից, ինչ պիտի գրվի:

Կուրբանը մի փոքր ել մոտենալով մուլլային, գաղտնի մի բան ասելու ձևով սկսեց փոփոսալ:

— Մուլլա, նախ և առաջ չերեխանների մորը իմ կողմից բարև գրիր: Գրիր, վոր իմ փոխարեն համբուրի Անա հանրմիս ու Մամի- շիս աչքերը, նրանց լավ ուշադրութունն դարձնի: Հեռո գրիր, վոր

Շեյխը, սակայն, նշան արեց, վոր նստի: Մեհեմեդը նստեց և չեղելութունը ծայրից ծայր պատմեց նրան: Նա պատմեց, թե ինչ- պես նրանից բաժանվելուց հետո ելը դաշտում վատ զգալով իրեն սատկեց, թե ինչպես ինքը թաղեց նրան և ինչպես հրաշք չերևաց նրա գերեզմանի վրա ու հիվանդ մի վաճառական առողջացավ: Թե ինչպես առողջանալուց հետո նա մեծամեծ ծախսեր անելով, ելի գերեզմանի վրա մզկիթ կառուցեց և նույն այդ մզկիթին ահագին կալված ու տավար նվիրեց: Հետո՝ թե ինչպես ուխտավորների ճա- նապարհը բացվեց դեպի իր սուրբը, ինչպես չեկողն առողջացավ գնաց և սրբի ազդեցութունն որ որի վրա ավելացավ:

Այս վողջ չեղելութունը շեյխին պատմել-վերջացնելուց հետո Մեհեմեդը նրան այսպիսի մի հարց տվեց.

— Զանս քեզ մատաղ, բարձրդ շեյխ, մի պարզեցեք տեսնեմ այս գաղտնիքը— ինչպես ե լինում, վոր ելի գերեզմանի վրա հրաշք ե չերևում, և նույն այդ գերեզմանին այցելող հիվանդներն առող- ջանում են... Ախր ձերն այլ բան ե— Փիրքեթան. կուլու սուրբը նահատակի դամբարան ե...

— Շատ ել մի դարմանա, գավակս,— Մեհեմեդի խոսքը կտրե- լով, նրա ականջին փոփոսաց շեյխը,— հենց այդ աղոթատեղում թաղ- վածն ել՝ այս վողորմած հոգու հանրն ե...

յես ել, փառք աստծու, վողջ եմ ու առողջ: Ղալամ Րիզայի հետ ձեզ տասնհինգ մանեթ եմ ուղարկել, բայրամը մոտենալիս նորից կուզարկեմ: Յերեխաները թող խեղճութուն չքաշեն, յես ել գարնան վերջին ամսին գալու յեմ:

Մուլա Ֆարզ Ալին գրիչը թաթախեց թանաքամանի մեջ և ուզում էր գրել, բայց թանաքը պնդացել էր. մուլան լեզվի ծալքով մի քիչ թուփ կաթեցրեց թանաքամանի մեջ և քիչ էլ խառնելուց հետո՝ սկսեց գրել:

Կուրբանը կուրծքը բաց, արխալուղի ու շապկի արանքից մինչև վոսկորները թափանցող այս աղեխարշ ցրտից սմկվել, մի կծիկ էր դառել:

Ապա նա ասաց.

— Մուլա հորեղբայր, յես աշխատում եմ են յաման (անողոք) մարդու հորերում: Այժմ արդեն նավթահորը 30 սափենից ներքև է իջել, վորբան աղաչում ենք՝ այ աղա, մեր աշխատավարձը մի փոքր ավելացրու, վորովհետև ներքևում աշխատելը շատ է դժվար, մագուլթի և գազի հոտից մարդու շունչը կտրվում է, — անգուլթ անիլը ավել չի համաձայնվում: — «Պիտի փորեք առաջվա պայմաններով, չեթե վոջ՝ ձեր իրավունքը չեմ տա» — ասում է նա: Մուլա, եստեղ շատ դժվար է փող աշխատելը, քո արհեստը շատ հեշտ է. որական հինգ-տաս նամակ, չորս-հինգ աղոթք գրես՝ բավական է, աստված շնորհք տա, ել ի՛նչ ես ուզում...:

Ֆարզ Ալի մուլան գրիչը գրեց գրչամանը, պատի ճեղքից չերկու մատներով մի քիչ հող պոկելով՝ նամակի վրա ցանեց և ձեռքի նամակը շարժելով՝ պատասխանեց Կուրբանին.

— Հայրենակից, ձեռ ուտելը հեռվից հեշտ է չերևում: Իմ արհեստը քո կարծածի չափ էլ հեշտ չէ, ձմեռ-ամառ փողոցի անկյունում ճամբի սպասելուց մարդուս աչքերին մթութուն է իջնում: Ենպիսի որ է լինում, վոր մի հատ իսկ հաճախորդ չի գալիս, քաղցած փորդ արորելով՝ մնում ես տեղումդ:

Մուլան իր աբայի մեջ պինդ փաթաթվելուց հետո նամակը կարգաց Կուրբանին: Կուրբանը բերանը բաց կարծես ուզում էր ուտել մուլի բերանից չելած ամեն մի խոսքը: Նամակի մինչև վերջը լսեց, ապա դեմքից ու աչքերից ուրախության կայծեր ցոլացնելով՝ ասաց.

— Մուլա, Հուսեյինին էլ բարև գրիր, ասա, վոր մինչև իմ գալը չերեխաներին ուշադրութուն դարձնի և պատասխանի մեջ գրի, թե մեր կարմիր կովը մնում է արդյոք: Մեկ էլ գրի, վոր գալուս Անա հանրմիս և Մամիշիս կարմիր վարդերով դաստմալ (թաշկինակ) եմ բերելու...:

Մուլա Ֆարզ Ալին գրելուց-վերջացնելուց հետո նամակը ծալեց, ծրարի մեջ գրեց, և դառնալով դեպի Կուրբանը՝ հարցրեց.

— Հայրենակից, ծրարի վրա ում անունը պիտի լինի:

Կուրբանը, ձեռքով ծոծրակը քորելով, պատասխանեց.

— Հա, մուլա, գրի, վոր պետք է հասնի Կուրբանի չերեխաների մորը:

Մուլան, ծրարի վրա չել գրելով, նամակը մեկնեց Կուրբանին: Կուրբանը նամակը վերցրեց և ուրախութունը դեմքին՝ մի լավ դիտեց և ուզում էր ծոցը դնի: Նամակը ձեռից ընկավ գետին: Շտապ վերցրեց, մաքրեց մի քիչ և կրկին ծոցը գրեց: Ապա բաց արեց քսակը և չերկու շանին մուլի ափը կոխելով՝

— Ա. ո, հայրենակից, բայրամին էլի նամակ եմ գրել տալու: Ինձանից քեզ շատ ոգուտ է հասնելու, — ասաց նա ու հեռացավ մուլի մոտից:

Ճանապարհին ձեռքով ամուր բռնած ծոցի նամակը, արագ քալելով գնում էր Կուրբանը դեպի իր հայրենակից Ղալամ Ալու տունը. ուզում էր թե նամակը նրան հանձնել, թե բերանացի միջանի հանձնարարութուններ անել:

Կուրբանը քայլելիս մասձում էր. — «Բախտավոր մարդ է Ղալամը, բավականաչափ փող է հավաքել, պիտի գնա իր գավախներին հասնի... Ոհ, մի ամսից հետո այն տեղերը վորքան գեղեցիկ են լինելու... Դաշտերը, լեռներն ու հովիտները զմրուխտի գորգերով կծածկվեն, ծաղիկները կծաղկեն, ծառերը կկանաչեն, գարնան շնորհալի հյուրերը՝ ծիծեռնակը, ուրուրն ու արագիլը, չերամ-չերամ վերադառնալով՝ իրենց բները կշինեն, առավոտ-չերեկո իրենց քաղցր չերգ ու կանչերով կզվարթացնեն մարդկանց սրտերը... Ամեն կողմ կսկսվեն բոստանի և ցանքսի աշխատանքները... Ախ, չքավորութուն, վոր ինձ կարոտ ես թողնում այս գեղեցկութուններից, իմ ընտանիքից-գավախներից...»:

Այս մորմորն այնպես ցնցեց նրա սրտի ամենախորին անկյունները, վոր նա դողաց ամբողջ մարմնով. ներսից ճնշիչ և դառն մի ցավ զգաց, շղերը պրկվեցին, սիրտը մի ըստե կանգ առավ: Այլևս ծնկներում ուժ չեր մնացել: Հանկարծ նա սահեց և իր հասակովը մեկ փովեց իր վոտքերի տակ լռյալացող սառուցի վրա: Ձեռքերն ու վոտքերն արյունոտած, մեռելադեմ և ուժասպառ նա բարձրացրեց գլուխը: Այդ լսելքամաղ և ուշազնաց դրության մեջ սրտի անհուն դառնությամբ և զզվանքով, նա ընկած տեղից դիտեց իր առջևից բազմութունը ճեղքելով անցնող կառքերը, տաք հագուստներով, ուրախ դեմքերով մարդկանց, այդ հոսող կյանքի ընթացքը... Ակամա մի «նֆ» դուրս թռավ նրա թոշնած շրթերից: Իսքն ի-

րեն հավաքելով, կանգնեց ընկած տեղից, շտապ ձեռքը ծոցը տարավ և նամակն իր այրած կրծքին սեղմելով, շարունակեց ճանապարհը:

Քիչ անց իր հայրենակից Ղուլամ Ալու տան առջևն եր հասել: Բայց դուռը փակ էր: Տխուր ու մտածկոտ վերադարձավ իր տեղը: Թափառաշրջիկի նման սկսեց շրջել մրջյունների պես յեռացող բանվորների մեջ: Յերբ նկատեց իր մյուս հայրենակից Սաֆդարին, մոտենալով հարցրեց նրա քեֆը: Ղուլամ Ալին քաղաք եր գնացել: Կուրբանը խնդրեց Սաֆդարին վոր Ղուլամը գալուն պես նրան իմաց անի, վոր իրեն շտեպած՝ չգնա, վոր ինքը թե ամանաթ (ավանդ) և թե բերանացի պատասխան ունի նրա միջոցով ուղարկելու: Այս ասելուց հետո Կուրբանը վերադարձավ իր տեղը:

2.

— Հէյ, աղա, մենք ելի են պոչն ենք, իսկի առաջ չենք գնում, — ասում է Թակիրի Վերդին. — դիտե՛ս, վոր այժմ նավթահորի ամենազովար մասումն ենք. հորը աժդահայի պես բերանը բացել ե՛րդն է ուզում:

Իր ընկեր Սաֆարը, կտրելով իր խոսքը, ձեռքը մեկնում է դեպի հեռուն, դեպի նավթահորերը, և ասում է.

— Նայիր, այս բոլոր մասերում, վորտեղ վոր վորտեղ գնես, ամեն մի ափ հողին լեթե մի բրիչ զարկես՝ բանվորի վոսկորներ են դուրս գալու, բանվորի վորդե ես լսելու: Այն բարձր աների տաքուկ սենյակներում, հազար ու մի նազանքի ու ճոխության մեջ ապրող...

Հաջի Կուլին, հանքատերը, կտրելով Սաֆարի խոսքը, վորտեղ դեպին է խփում և զոռգոռում. — «Ձեր հողին դուրս գա, փող աշխատելը հեշտ բան իմացաք. դուք ձեր անձն եք տալիս, մենք ել՝ մեր հատիկ-հատիկ վոսկիները»:

— Սաֆար, Սաֆար, Կուրբանը պարանը շարժում ե...

Այս ազազակի վրա Սաֆարը և Թակիրի Վերդին վազեցին հորի բերանի մոտ և չերբ գլուխները ծռելով դեպի ցած, լսեցին ներքևում պալթած գազի աղմուկը, սարսափով լեռ քաշվեցին:

Յեվ չերկուսը միասին անաբեկված ձայնով գոռացին.

— Տերն աստված ինքը խնայի, Կուրբանն էլ այսպես գնաց... Հէյ վախ, ափսոս...

Հաջի Կուլին, լսելով աղմուկը, վախվախելով մոտեցավ հորի բերանին և զգուշութամբ հորի մի կողքից պարզվելով՝ սկսեց հորի ներսը դիտել: Հանկարծ մի ուրախութուն ճառագայթեց նրա դեմքի վրա: Նրա շրթունքներն արտահայտում էին ներքին գոհունա-

կություն ու հրձվանք, և չկարողանալով գսպել իր ուրախությունը, բարձր ձայնով սկսեց գոռալ.

— Ե՛, հայվաններ, ի՛նչ եք ապուշ-ապուշ նայում, չե՞ք տեսնում՝ աղբյուրի բերանը բացվել է. կամաց-կամաց նավթ է հոսում: Թակիրի Վերդին սառն ու դժգոհ ձայնով հարցրեց.

— Հաջի, Կուրբանի դիակը հորո՞ւմ պիտի մնա:

Հաջի Կուլին այս խոսքի վրա կարծես իր քաղցր չերազից սթափվեց. աչքի թարթիչները մեծ-մեծ բաց արեց, քսակից հանեց չերկու հատ քսանհինգանոց և ասաց.

— Ով այս գործը գլուխ հանե, այս հիսուն մանեթը նրանն է: Թակիրի Վերդին մոտեցավ դրամն առնելու, բայց հանկարծ մտաբերեց, վոր իր ընկերոջ մարմինն անհետացնելու համար ինքը վարձատրություն պիտի ստանա իր աղաչից: Ձեռքը չերկարեց, բայց անհամարձակ կերպով դարձյալ լեռ քաշեց:

Հաջին հասկանալով նրա մտավախությունը, ավելացրեց.

— Հիսուն ուրբլին բոլորինդ է. բաժանեցեք ձեր մեջ, միայն թե այս գործի մասին վո՛չ-վորի վոչինչ չասեք:

Յեվ խոսքը չվերջացրած՝ քսանհինգանոցը Թակիրի Վերդու ձեռքը կոխեց:

— Հապա զգեստներն ի՛նչ պիտի անենք, — հարցրեց Սաֆարը:

— Տղաս, զգեստներն ել այս կողմերը մի տեղ փորելով՝ թաղեցեք, — ասաց հաջին փաղաքշական ու քաղցր ձայնով:

Կես ժամ չանցած՝ հանքահորից դուրս հանեցին Կուրբանի զգեստները:

Սաֆարն ու Թակիրի Վերդին չերբ գննում էլին Կուրբանի զգեստները, տեսան՝ մի նամակ գետին ընկավ: Նամակի ծրարի վրա գրված էր. «Այս նամակը պետք է հասնի Կուրբանի չերեխաների մորը...»:

Սաֆարն ու Թակիրի Վերդին միջանի բոպե սառած և դառնազին հայացքներով դիտում էին նամակը և մորմոքելով ասացին.

— Խեղճ Կուրբան, նամակը չհասավ...

ԳՆՎԱՃՆԵՐ

1.

1905 թիվը մտանում էր իր վախճանին:

Գործադուլների լարված լուսթյանը փոխարինեց համազարկների աղմուկը բարիկադների վրա: Ազատութեան, մարդկային իրավունքների համար ինքնագոհաբար պայքարում էր Ռուսաստանի յերիտասարդ պրոլետարիատը:

Բայց այդ պայքարը տեղի չէր ունենում այնտեղ, բարձր լեռնաշղթայից այն կողմը, ձյունով ծածկված անսահման տափաստաններում:

Իսկ այստեղ, հարավային կովկասում, տիրում էր անվրդով լուսթյուն:

Ինչպես միշտ, ինչպես հազար տարի առաջ, այնպես էլ այժմ արևելքում չերևում էր արևը և մայր էր մտնում արևմուտքում: Բարձրանում էր արևը, բարձրանում էին և մարդիկ: Իսկ չերբ արևը կորչում էր հորիզոնից անդին, դա նշանակում էր, վոր վերջ չեկավ մարդկային հոգսերին և բոլորը պետք է պառկեն քնելու: Արագ ծածկվում էին պատուհանները, փակվում էին դռները, և գավառական փոքրիկ քաղաքում, վոր շրջապատված էր պողատու ծառերով, տիրում էր լուսթյունը:

Գիշերային լուսթյունը վրդովում էր միմիայն բամբակազախ գործարանը: Նա աշխատում էր չերկու հերթով — թե գիշերը, թե ցերեկը: Գիշերը գործարանային մեքենայի աղմուկն ավելի վորոշ էր լսվում: Մթության մեջ կորած գործարանի խողովակից կարճ ընդհատումներից հետո զրզրոցով դուրս էր թռչում շոգին: Շոգու հանած աղմուկը նման էր հոգնած մարդու շնչառութեան:

Յեթե գործարանը չլիներ — գիշերը կարելի չէր անցնել քաղաքի մոտով և չնկատել նրան: Այդպիսի լուսթյուն և անշարժություն էր տիրում այդ քաղաքում:

Վոչ-վոք վոչինչ չգիտեր այն մասին, թե ինչ է կատարվում լեռների պատից անդին, իսկ յեթե մեկն իմանար ել՝ բան չէր հասկանա: Այստեղ այլ կյանք էր, իսկ քաղաքում — այլ:

Գործարանը պատկանում էր Սելիմ-բեկին:

Կարճահասակ, հաստիկ Սելիմ-բեկը նման էր չերկու հենակների վրա դրված մզած տանձի: Սելիմ-բեկի ամենալաջն տեղը փորն էր: Փորից վեր Սելիմ-բեկի մարմինը նեղանում էր և վերջանում թռչնի գլխով: Սելիմ-բեկի դեմքին նկատվում էին միմիայն աչքերը — մանրիկ, ոձի աչքերի նման անթարթ նայող: Անդրավարտիկը և ժլխտը չէին կարողանում ծածկել Սելիմ-բեկի դուրս ընկած փորը և նրանց արանքից չերևում էր կեղտից դեղնած վերնաշապիկը: Գնալիս Սելիմ-բեկն այնպես էր թափահարում ձեռքերը, կարծես փորի վրայից քերում էր ճանճերին և հրում էր նրանց յետ: Գործարանատիրոջ հաստիկ, չուղոտ մասներին շարված էին թանգազին քարերով զարդարված մատանիներ:

Բանվորները վախենում էին Սելիմ-բեկի չար ու անթարթ աչքերից: Նրանք դողում էին տիրոջ սուր ու խոցող ձայնից: Նրանք հարգանքով բարևում էին նրան ու մի կողմ քաշվում, կարծես Սելիմ-բեկը վոչ թե մարդ էր, այլ վառողով լիքը մի տակառ, վոր չուրաքանչյուր վայրկյան կարող է պալթել:

Հոգնատանջ դեմքերով և վախեցած հայացքներով լսում էին բանվորները տիրոջ չար ձայնը, և հավատում էին, վոր Սելիմ-բեկը հանդուրժում է իրենց միմիայն վողորմածությունից զրդված և վայր չեկել է իրենց տարել, յեթե տիրոջ համբերությունը հասնի:

Հայնոյելով բանվորներին, Սելիմ-բեկը կարգադրություններ էր անում հարգանքով իր առաջ խոնարհված վերակացուին ու մեխանիկին, և արագ հեռանում էր՝ գլուխը գոռոզաբար ցցած:

Մի մարդ միայն չէր վախենում Սելիմ-բեկից: Յեվ այդ մարդը չերիտասարդ մեխանիկ Մոհարրամն էր: Կենդանի, շարժուն էր Մոհարրամի դեմքը և նրա կայտառ աչքերը — վառվում էին զվարթ կրակով: Յերիտասարդ մեխանիկի նիհար մարմինը և սև աչքերն անընդհատ շարժման մեջ էին: Կարծես թե ինչ-վոր բան պակասում էր Մոհարրամին, կարծես թե նա ամբողջ ժամանակ փնտռում էր մի բան, փնտռում էր ամենուր, բայց չէր կարողանում գտնել: Նա զրվարթ ծիծաղում էր ու չերգում և շարունակում էր վորոնել:

Մոհարրամը չէր վախենում աիրոջից և դեպի նա ցուց չէր տալիս վոչ մի հարգանք:

Յերբ Սելիմ-բեկի ճշացող ձայնը լռեց բաժանմունքում, Մոհարրամը հաճույքից շվվացրեց և դեպի առաստաղը նետեց իր մորթե փափախը:

Տարիքոտ ու մուսլ մեխանիկ Սալմանին դուր չէր գալիս իր ոգնականի վարքը: Նա ավելի ևս մուսլվեց և դժգոհ արտասանեց.

— Դու չպետք է այդպես վերաբերվես դեպի մեր տերը:

— Ինչո՞ւ, — անկեղծ գարմանքով հարցրեց Մոհարրամը:

— Տիրոջը պետք է հարգել, — խրատաբար պատասխանեց մեխանիկը:

— Ինչո՞ւ համար, — դժգոհ բացականչեց Մոհարրամը:

— Նրա համար, վոր նա գործարանատեր է և հարուստ մարդ... նա — ամեն ինչ է, իսկ ի՞նչ ենք յես ու դու... Ճամբի փոշի... Եսոր մեզ քամին մի կողմ է քշում, եզուց ուրիշ կողմ կզցի: Ու վոչ-վոք ել չի նկատի այդ ու չի խղճա մեզ: Իսկ գործարանատերը — մեծ մարդ է: Մենք բոլորս ել կախում ունենք նրանից, նա բոլորիս ել կերակրում է: Ես բանի համար պետք է նրան հարգանք տալ:

— Իսկ յեթե նա չա՞ր մարդ է:

— Հարուստ մարդը չի կարող չար լինել. նա ավելի շատ է բարիք անում, քան մենք բոլորս միասին:

Մոհարրամն ուշադրությամբ լսում էր Սալմանի խոսքերը: Նրա դեմքը լրջացավ: Միմիայն համառաբար սեղմած շրթունքներն ասում էին, վոր նա համաձայն չէ մեխանիկի հետ և մնում է իր կարծիքին:

Մեքենաների բաժանմունքի դռների մոտով, բամբակի ութը փթանոց բեռի տակ կռացած, դանդաղ շարժվում էր բեռնակիր Ղուրբանը: Քրտինքն առվակներով հոսում էր Ղուրբանի արևառ, կնճոտ դեմքից և կաթիլ-կաթիլ ընկնելով գետին՝ կետերով նշում էր բեռնակրի անցած ճանապարհը:

Ղուրբանը յերբրվում էր և խոպոցով արտաշնչում ողը:

— Ահա մեր տիրոջ բարիքը, — բացականչեց Մոհարրամը և դուրս թռավ շենքից: Նա ներքևից բռնեց ծանր հակը և ոգնեց Ղուրբանին տեղ հասցնելու աչք:

— Ղուրբանը գործարանում վրասել էր վոտը և խնդրում էր տիրոջից թեթևացնել իր աշխատանքը: Իսկ ի՞նչ պատասխանեց աղեն... Նա նրան ծուլ անվանեց և սպառնաց վռնդել աշխատանքից: Մրա համար ել հարկավոր է հարգել տիրոջը, — հարցրեց Մոհարրամը, վերադառնալով մեքենաների բաժանմունքը:

Սալմանը յերեսը շուռ տվեց իր ոգնականից և մուսլ մոմուաց.

— Ախմախ մարդու հետ խոսելը զուր ժամանակ վատնել է: Յես քեզ խորհուրդ եմ տալիս լեզուդ կարճացնես ու կողպեքի տակ դնես

Մոհարրամը ճաշում էր բազարի չայխանայում: Նա աչնտեղ էր ճաշում վոչ թե ոգուտի համար, այլ միմիայն աչն պատճառով, վոր այստեղ շատ մարդ էր հավաքվում: Աչտեղ կարելի չէր նոր մարդու հանդիպել, խոսել նրա հետ և շատ հետաքրքիր բաներ իմանալ:

Յերեկ Մոհարրամը նկատեց մի այդպիսի մարդու: Նա ուրիշ տեղացի չէր, յեկվոր: Այդպիսի մարդիկ հաճախ ելին հանդիպում չայխանայում: Մեծ մասամբ դրանք վաճառականներ էին: Բայց աչն մարդը, վորի վրա Մոհարրամն ուշադրություն դարձրեց, վաճառական չէր: Նա վոչինչ չէր գնում, բազարում չէր հրմշտկվում կըշեռքի մոտերքը, չնայած աչս հանգամանքին, նա ուշադրությամբ գննում էր ամեն ինչ և շատ բաների մասին հարցուփորձ անում:

Մոհարրամը կողքից դիտում էր յեկվորին և ուսումնասիրում նրան: Նա բարի, բաց դեմք ունի և սև, գանգուր մորուք: Աչքերն ուշադիր են ու շոյող: Այդպիսի աչքեր ունեցող մարդը չի կարող վոչ հպարտ լինել, վոչ չար: Նա անկասկած բավականին թափառել է աշխարհիս յերեսին և շատ բան ապրել:

Մոհարրամն ուշադրություն դարձրեց և փոքրիկ կաշվե պաշուսյակի վրա, վորից յեկվորը չէր բաժանվում: Անծանոթն աչքան խնամքով էր վարվում այդ պաշուսյակի հետ, կարծես նրա մեջփող լիներ:

Յերբ Մոհարրամը մտավ չայխանեն, նա մտածում էր իրեն հետաքրքրող մարդու մասին:

— Հարկավոր է խոսք բանալ նրա հետ: Հարկավոր է իմանալ, թե ո՞վ է նա և ինչո՞ւ յե յեկել մեր բազարը... — մտածում էր Մոհարրամը:

Բազարի որ էր և չայխանան լիքն էր այցելուներով: Միակ ազատ տեղը յեկվորի սեղանի մոտ էր: Մոհարրամը յերկշտ նայեց այդ տեղին, չհամարձակվելով մոտենալ: Անծանոթը կարծես հասկացավ Մոհարրամի հայացքը: Նա տեղից շարժվեց և ցուլց տվեց ազատ աթոռ:

Ուրախացած Մոհարրամն արագ նստեց և շտապեց խոսք բաց անել:

— Դուք դեռ եստեղ եք... — շտապ հարցրեց նա, չմտածելով այդպիսի մի հարց տալու անպատեհության մասին:

Անծանոթը հարցին պատասխանեց զարմացած հայացքով: Շեշտակի նայվածքը Մոհարրամին հարկադրեց կարմրել: Խոսակցի ամոթխածութունը չեկվորի դեմքի վրա առաջացրեց մի բարեսիրտ ժպիտ: — Մնում եմ եստեղ միմիայն այսօր...

Այդ լուրը տխրեցրեց Մոհարրամին և անհանգիստ հարցասիրութունը կրկին շարժեց նրա լեզուն.

— Նշանակում ե՞լ չերեկոյան կամ առավոտյան դուք գնում եք քաղաքից...

— Ուզում եմ գնալ այսօր չերեկոյան:

— Ձեր գործերը վերջացրի՞ք:

— Ի՞նչ գործեր:

Ամոթխած կարմրութունը կրկին այրեց Մոհարրամի դեմքը: Կրկին նա իր անհամբերութեան շնորհիվ անհաջող հարց ավեց: Ի՞նչ իր բանն է ուրիշի գործերին խառնվելը: Բայց միևնույն ժամանակ տարրորինակ է, թե ինչո՞ւ իր խոսակիցը, հենց վոր գործերի մասին հարց բարձրացավ՝ զգուշացավ ու լռեց:

— Միթե՞ դուք եստեղ վոչ մի գործ չունեիք, — զարմանքով հարցրեց Մոհարրամը:

Նա անորոշ պատասխան ստացավ և իր հանդեպ ցույց տված անվստահութունից նեղացավ ու լռեց:

Միքանի բոպե անց չեկվորը վերսկսեց խոսակցութունը և ինքն սկսեց հարցեր տալ:

— Ի՞նչով եք դուք զբաղվում:

— Յես բանվոր եմ:

— Վճրտեղ:

— Բամբակագործ գործարանում:

Յեկվորն ուշադրութեամբ գննեց Մոհարրամին և մտածկոտ կերպով մատնեցով թխկացրեց կեղտոտ սեղանին:

— Ձեր քաղաքը հաճելի չե՞ր, — փոխեց նա խոսակցութունը:

Չալխանայում աղմուկ էր ու շփոթ: Կերակուրների հոտով ու ծխախոտի ծխով լեցուն ողբ հեղձուցիչ էր ու ծանր:

— Ձեր քաղաքն ինձ դուր չեկավ... — առանց շտապելու շարունակեց չեկվորը. — բայց չես չկարողացա լավ տեսնել ամբողջը: Յերևի այստեղ շատ կան լավ այգիներ:

— Յես այսօր ազատ եմ, — արագ պատասխանեց Մոհարրամը. — ուզում եք՝ չես ձեզ ցույց կտամ շատ հետաքրքիր տեղեր:

— Շատ ուրախ կլինեմ, — պատասխանեց չեկվորը և, նայելով ժամացույցին, ավելացրեց. — հիմա ժամը տասերկուսն է: Լավ ժամանակն է զբոսանքի համար:

Մոհարրամն շտապ վերջացրեց թեյը և վեր կացավ:

Մոհարրամը ման էր անում անծանոթին քաղաքով, ցույց էր տալիս ամենը, ինչ-վոր հետաքրքրական էր, և ձգտում էր լավ հիշողութուն թողնել չեկվորի մեջ՝ միասին անցկացրած ժամանակի մասին: Մոհարրամը խոսում էր անվերջ և միևնույն ժամանակ զգում էր, վոր իր ցանկութունը չի իրականանում: Անծանոթը լսում էր իր ուղեկցի ասածները, անտարբեր նայում էր ցույց տված առարկաներին և տարված էր սեփական մտքերով:

Մոհարրամը զարմանք էր զգում, նրա զրույցը հետզհետե կորցրեց իր աշխուժութունը և քիչ ժամանակ անց՝ բոլորովին ընդհատվեց: Այդ ժամանակ խոսեց չեկվորը: Յեվ Մոհարրամը նորից զարմացավ: Նրա ուղեկիցը խոսում էր վնչ թե այգիների, կամ քաղաքի հազվագյուտ բաների մասին, այլ գործարանի և բանվորների: Յեվ վորքան շատ էր հարցնում նա գործարանի մասին, այնքան աշխուժանում էր: Աննկատելի կերպով աշխուժացավ և Մոհարրամը, չերթ խոսք բացվեց գործարանատիրոջ և բանվորների մասին:

— Մեխանիկ Սալմանը պահանջում է, վոր չես հարգեմ տիրոջը. — Մոհարրամն շտապում էր արտահայտել իր սրտում կուտակված դժգոհութունները. — իսկ ի՞նչու համար չես պետք է հարգեմ նրան: Նա մեզ հայհոյում է, ծուլեր է անվանում և սպառնում է վնդել գործարանից և կվճռի, չեթե մենք չափից շատ չաշխատենք: Կաշխատենք, կհիվանդանանք, — ելի կվճռի: Ել ի՞նչու համար հարգենք նրան:

Յեկվորը մոռացավ քաղաքի հնութունները: Նա շուռ չեկավ դեպի Մոհարրամը և ուշադիր լսում էր նրա վրդովված ձառը: Այդ ուշադրութունն ավելի ևս մեծացրեց չերիտասարդ մեխանիկի հարգանքը դեպի անծանոթ չեկվորը:

Մոհարրամը և չեկվորը մտան ազու խորքը և նստեցին խոտի վրա, հին խնձորենու տակ:

Այժմ արդեն խոսում էր չեկվորը և Մոհարրամը, մոռացած ամեն ինչ, ազահաբար կլանում էր նրա խոսքերը և աշխատում էր ամեն ինչ հասկանալ ու միտքը պահել:

Մոհարրամը չսխալվեց իր սպասելիքներում: Յեկվորը շատ բան էր տեսել և շատ բան գիտեր: Նա բաց արեց չերիտասարդ մեխանիկի առաջ մի նոր աշխարհ: Կարծես ցույց տվեց նրան մի այլ կյանք: Մոհարրամը չգիտեր, վոր վաղուց արդեն նա անգիտակցաբար զգում էր, վոր հասարակութան մեջ գոյութուն ունեն դասակարգային հակասութուններ: Նա ատում էր շահագործողներին, բայց չէր կարող բացատրել, թե ինչո՞ւ համար: Նրա գիտակցու-

Թշուհը մթագնած էր մշուշով: Յեվ անա միայն այժմ գանվեց մի մարդ, վորը լցրեց Մոհարրամի ուղեղում առաջացած գատարկութիւնը:

Մոհարրամի սիրտը խփում էր արագորեն, գլուխը պտուշտ էր գալիս: Թեքվելով դեպի խոսակիցը, վառվող աչքերը չհեռացնելով նրա դեմքից, Մոհարրամը լսում էր ու լսում, խուսափելով ծպտուն անգամ հանել, վորպեսզի չընդհատի անսովոր զրույցը: Յեկվորի արտասանած յուրաքանչյուր խոսքը կարծես թե պառկում էր առաջվանից իր համար պատրաստված կաղապարում, պառկում էր ընդմիջտ և դա հանել այնտեղից այլևս անհնարին էր:

Արևը մայր մտալ: Յերկնքում յերևացին աստղեր: Յեվ այդ ժամանակ միայն Մոհարրամն ու իր ուղեկիցը թողեցին այգին:

Այն ամենը, ինչ վոր կար յեկվորի փոքրիկ կաշվե պաշուսակում, տեղափոխվեց Մոհարրամի թևի տակ: Նա ամուր սեղմում էր կրծքին վողորկ թուռցիկները ու բարակ գրքուկները, և զգուշ շուրջն էր նայում, վոր դրանք չկորցնի:

Մոհարրամի համար նոր կյանք սկսվեց: Նա չէր բաժանվում թուռցիկներից և գրքուկներից, կարգում ու վերակարգում էր դրանք: Դրանց մեջ Մոհարրամի համար անվիճելի ճշմարտութիւն կար, քանի վոր այդ ճշմարտութիւնը նա մշուշոտ կերպով զգում էր առաջ, իսկ այժմ թուռցիկները և գրքուկները միմիայն հաստատեցին այն, ինչ վոր զգում էր նա:

Առաջ Մոհարրամն ապրում էր, բայց հող չէր զգում իր վտոքերի տակ: Նա ուրախանում էր ու դառնանում, իսկ ընդհանրապես նման էր պոկված տերևի, վորին քամին տանում էր՝ անհայտ ե, թե ուր: Այժմ Մոհարրամը վնչ միայն հող էր զգում իր վտոքերի տակ, այլ և ուժ, վորը և հնարավորութիւն էր տալիս նրան պայքարելու իր հայացքների և համոզմունքների համար:

Կարճիկ ու հաստիկ Սելիմ-բեկը, վորը առաջ ցցած, շրջում էր գործարանում: Նրա այցելութիւնները հաճախակի դարձան: Տիրոջ սուր ձայնը խլացնում էր մեքենաների աղմուկը և ան էր ազդում բանվորներին:

Պորտաբույժներ, ծուլեր... Յես փրաս եմ կրում, իսկ գուր չիք աշխատում: Դուք ձրի իմ հացն եք ուտում: Յես ձեզ դուրս կանեմ:

Մոհարրամն ականջ էր դնում Սելիմ-բեկի ճշացող ձայնին և մոռցվում էր: Նա հիշում էր այն գրքուկը, վորի մեջ տերերը

նմանեցված էլին սարդերի: Նրանք ծծում են բանվորների ուժերը: Յերբ թուլացած բանվորն այլևս ուժ չունի տիրոջը յեկամուտ տալու—նրան անողոք կերպով դուրս են շարտում:

Սելիմ-բեկն էլ սարդ է: Նա գոռում ու հայհոյում է բանվորներին, այնինչ նրանք առաջվանից քիչ չեն աշխատում: Յեկամուտներն ավերանում են, բայց ագահ Սելիմ-բեկին դա քիչ է: Նա արդեն իջեցրել է աշխատավարձը: Արդյոք նա չի մտածում ավելի ևս իջեցնել այն...

Յերբ Սելիմ-բեկը մոտեցավ մեքենաների բաժանմունքին և իր մոտ կանչեց մեխանիկին ու վերակացուին, Մոհարրամը շունչը պահեց ու մեքենաների մոտ կծկված՝ սկսեց լսել:

— Հայտնեցեք բանվորներին, վոր յես չեմ կարող նրանց վճարել նախկին գինը: Յես նրանց կվճարեմ իրենց ստանալիքի միայն կեսը:

Մոհարրամի ձեռի յուղամանը վայր ընկավ և յուղն սկսեց տարածվել կեղտոտ հատակին:

Շճմած Մոհարրամը չբարձրացրեց յուղամանը:

— Տիրոջ արածը թախանից վատ է, — մտածում էր Մոհարրամը չարացած. — Սելիմ-բեկը վնչ միայն կրկին իջեցնում է աշխատավարձը, այլ և չի ուզում վճարել արդեն աշխատածի համար:

Սելիմ-բեկը, մեխանիկի և վերակացուի խոնարհ վողջուհիների ուղեկցութեամբ, հեռացավ: Յերբ գործարանատիրոջ հաստիկ կերպարանքն անհետացավ փողոցում, վերակացուն հայտարարեց բանվորներին աշխատավարձի իջեցման մասին: Անակնկալ յուրը կարծես մի անգամից ուժաթափ արավ բանվորներին: Նրանց հուզված դեմքերին յերևաց զարմանքոտ շփոթութիւն:

— Բայց մենք վնչ պետք է ապրենք հիմի...

Վերակացուն արհամարհանքով թոթովեց ուսերը, կարծես ասելով. — Դա իմ գործը չէ: Ինչպես ուզում եք, այնպես էլ ապրեցեք, սակայն ավելին, քան տիրոջ ասածը, չեք ստանա:

Բանվորների շփոթմունքը փոխվեց գազազմունքի: Նրանք ընդհատեցին աշխատանքը և անհանգիստ ամբոխով հավաքվեցին բակում:

Բանվորների գոռգոռոցն ավելի բարձր էր հնչում: Նրանք խլացնում էլին մեքենաների ձայնը:

— Իմ կինը հիվանդ է: Յես պետք է նրան լավացնեմ:

— Իմ ստացածն ընտանիքիս ապրուստն էլ չի հանում:

— Հիմի վնչ ապրենք:

Բայց այն, ինչի մասին գոռում էլին բանվորները, վոչ-վոք չէր լսում: Վոչ-վոքի չէր կարելի համոզել զայրացած խոսքերով: Մեքենաների բաժանմունքի դռների մոտ կանգնած էլին մեխանիկն ու վերակացուն և անտարբեր դիտում էլին հուզված ամբոխին: Վեր

տնկած բուռնցքները նրանց չեյին վախեցնում: Սելիմ-բեկը հեռու
յեր: Բանվորների բուռնցքները նրան չեյին հասնի:

Բանվորների աժբոխի մեջ անսպասելի կերպով խրվեց Մոհար-
րամը:

— Ընկերներ:

Մոհարրամի ձայնը զնգում էր հուզմունքից, ինչպես պինդ ձրզ-
ված լար: Մոհարրամը դեպի ինքը գրավեց բանվորների ուշադրու-
թյունը: Նրանք լեցին և խոնվեցին չերիտասարդ մեխանիկի շուրջը:

Մոհարրամը զսպեց իր հուզմունքը և խոսեց ավելի ցած ձայնով
և ավելի հանդարտ:

— Սելիմ-բեկը մեզ թալանում է: Նա թալանչի չի:

— Ճիշտ է, ճիշտ է, — հուզվեցին բանվորները և սկսեցին լսել:

— Բայց մեր տերն ավելի վատ է են բանդիտներից, վորոնք
ձանապարհների վրա չեն մարդ թալանում: Բանդիտները կարող են
բռնվել և կորցնել իրենց կյանքն ու ազատությունը: Սելիմ-բեկը
վոչինչ չունի կորցնելու: Նրա կողմն է որենքն ու իշխանությունը:
Նա կարող է մեզ բոլորիս սովամահ անել և պատասխանատու չլի-
նել դրա համար: Մեզ վոչ-վոք չի ոգնի: Մենք պետք է մեր հույսը
միայն մեր վրա դնենք: Մենք պետք է պայքարենք ճիշտ աջակետ,
ինչպես մեր չեղբայրներն են պայքարում Ռուսաստանում, Բագվում
և ամբողջ աշխարհում: Հարկավոր է գործադուլ հայտարարել: Հարկա-
վոր է դադարեցնել աշխատանքը և պահանջել աշխատավարձի հա-
վելում:

Առաջին անգամ լսված խոսքը հասկացվեց անմիջապես և ան-
սխալ կերպով: Այդ խոսքը փոխեց բանվորների տրամադրությունը:
Նրանց գաղազմունքը հետևանք էր անհուսություն, անելանելի դրու-
թյան: Բայց գուրս չեկավ, վոր դրությունն այնքան էլ անհուսալի
չէ: Մոհարրամը չեյք ցույց տվեց: Սելիմ-բեկին դեռ վաղ է հաղթա-
նակ տոնել: Նրանք կհարկադրեն գործարանատիրոջը հաշվի առնել
իրենց կամքը:

— Գործադուլ:

— Կանգնեցրո՞ւ աշխատանքը:

— Կանգնեցրո՞ւ մեքենաները:

— Թող հաստիկ Սելիմ-բեկին իր նշանակած աշխատավարձով
ինքն աշխատի: Այդ աշխատանքը նրա համար ոգտակար կլինի և
կթեթևացնի նրա փորը:

Սովերի միջից գուրս թուշող Սալմանի ձիչը վրդովեց բանվոր-
ների ցնծությունը:

— Գնա, շան վորդի, բո տեղը, թե չե շարգուփշուր կանես
գատարկ գլուխդ:

Գաղազած մեխանիկի ձեռին կար մի ծանր մուրճ: Բայց նա
չկարողացավ նրա հետ միառին Մոհարրամին հասնել: Բեռնակիր Ղուր-
բանը բռնեց մեխանիկին, խրեց նրա մուրճը և դեն շարտեց այն:

— Գործադուլ, — դժվարությամբ արտասանեց նա նոր բառը և
բարեսիրտ ժպտաց:

Սալմանը չմիացավ բանվորներին: Նա գուրս պրծավ Ղուրբանի
ձեռքերից և փախավ գործարանից:

Մոհարրամը կանգնեցրեց ազմկող մեքենան: Գործարանը լեց:
Ավելի բարձր, տիրաբար հնչեցին բանվորների ձայները: Քննում
եյին իրենց պահանջները և պատգամավորներ եյին ընտրում գոր-
ծարանատիրոջ հետ բանակցություններ վարելու համար:

2.

Բանվորների պատգամավորները, Մոհարրամի գլխավորությամբ,
մտան Սելիմ-բեկի բնակարանում գտնվող փոքրիկ սենյակը, վոր
ընդունարանի տեղ էր ծառայում: Հատակին փռած էր մի հիանալի
գորգ: Այդ գորգը շնչեցրեց բանվորներին: Գորգը — մի ամբողջ կա-
րողություն է: Ուրեմն վորքան է հարուստ ու հզոր Սելիմ-բեկը,
յեթե նա այդպիսի կարողությունը փռել է հատակին: Բանվորները
վախեցան գորգի վրա կոխել փոշոտ ու կեղտոտ վտաններով, կանգ-
նեցին նրա առաջ և լուռ նայում եյին: Յուրաքանչյուրի գլխում
ծագեց միևնույն միտքը՝ մի տարի չել վոր աշխատես, միևնույն է՝
մի այդպիսի գորգ չես կարող գնել:

Պատգամավորներին կանչեցին առանձնասենյակ: Այնտեղ նրանք
դեմ առան նոր անակնկալի: Սելիմ-բեկի սեղանի մոտ նստած էր
պրիստավը: Հաստ Սելիմ-բեկը թաղված էր բազկաթոռում: Նա
ժպտում էր: Կարծես թե գործադուլն ու գործարանի անգործու-
թյունը չեյին անհանգստացնում նրան: Գործարանատիրոջ տրամա-
դրությունը բանվորներին հարկադրեց զգուշանալ:

— Գիտեմ, թե ինչու չեք չեկել, — ուրախ բացականչեց Սելիմ-
բեկը՝ նայելով բանվորներին խոնավ, պսպղուն աչքերով: — Ձեր բախ-
տից բեկն էլ այստեղ է:

Սելիմ-բեկը հայացքը շուռ տվեց պրիստավի կողմը և նրա դեմ-
քին փայլեց ժպիտը:

Բեկը մեզ կոգնի համաձայնություն գալու:

Սելիմ-բեկը կրկին ժպտաց և սկսեց զիջողաբար, կարծես պատ-
մում էր մանկական չարածճիռություն մասին:

— Յերևակայեցեք, թե իմ տղերքն ի՞նչ են սարքել: Նրանք
գործադուլ են հայտարարել և պահանջում են աշխատավարձի հավե-

յում: Իսկ Մոհարրամը, վորին չես խելոք տղա ելի համարում և ապա-
գայում միաք ունեյի նրան մեխանիկ դարձնելու, դարձել է նրանց
գլխավորն ու դեկավարը:

Պրիստավի նիհար ու արևառ դեմքին շինծու մի զարմանք չե-
րևաց, իսկ նրա գորշ, պաղ, անարտահայտիչ աչքերն արհամարհան-
քով նայեցին պատգամավորներին: Այդպես չի նայում մարդը: Այդ-
պես կարող է նայել միմիայն ուժեղ գիշատիչն իր անոգնական զոհին:
Բանվորները պրիստավի հայացքից վարանոտ շարժվեցին, իսկ
մի քանիսը թագ կացան Մոհարրամի չետեր:

— Իսկ միթե նրանք չգիտեն, վոր այժմ չի կարելի գուժադուլ
անել: Այժմ գործերը չի կարելի հետաձգել...

Պրիստավի կարճ ճառը նման էր հրամանի: Լսիր այն ու կա-
տարիր: Վնչ մի զրուց, վնչ մի հակաճառութուն:

Մոհարրամը ջղաձգորեն ցնցեց ուսը, զգալով, վոր արյունն սկսում
է չեռալ իր մեջ: Նա ուզում էր պատասխանել պրիստավին և չեթե
նա խոսեր — շատ անհաճո բաներ պիտի ասեր թե գործարանատի-
րոջը, թե պրիստավին: Բայց տաքանալ չի կարելի. նա գտնվում է
աջնտեղ վնչ իր անձնական գործով:

— Ի՞նչ անես սրանց, չերբ սրանք իսկի հաշվի չեն առնում
գործարանի շահերը և հոգ չեն տանում այն ձեռնարկության համար,
վոր կերակրում է իրենց, — իր նախկին զիջող շեշտով արձագանքեց
Սելիմ-բեկը:

— Գործադուլ անել...

Պրիստավը վեր կացավ աթոռից և կարծես դարձավ ավելի ևս
բարձրահասակ ու ազդեցիկ:

— Ուրեմն դուք գործադուլ եք անում...

Վոստիկանի նիհար, արևառ դեմքը հողի գույն ընդունեց:

— Գործադուլ եք անում, — մի անգամ ևս բացականչեց պրիս-
տավը. — Իսկ դուք գիտեք, թե ի՞նչ պատիժ է ձեզ սպասում գոր-
ծադուլի համար...

Պրիստավի վոստիկանական զգեստի թևի միջից չերևաց մազոտ,
ջղուտ ձեռքը՝ հսկայական բռունցքով: Բռունցքը մուրճի նման ու-
րորվում էր ողում և փնտռում էր այն գլուխը, վորի վրա պիտի
իջներ ու շարդուփշուր աներ այն: Պրիստավի նեղ, չար աչքերն
անթարթ մեխվեցին բանվորների դեմքերին:

Բարկությունից գունատ դեմքով կանգնած էր Մոհարրամը վոս-
տիկանի առջև և նրանից չեր հեռացնում իր հայացքը:

— Նրանք գործադուլավորներ չեն, — նույն շինծու, քաղցրա-
մեղծիկ ձայնով խոսեց Սելիմ-բեկը. — չես ներում եմ նրանց:

— Մեզ կարիք չկա ներելու, մենք վոճրագործներ չենք, — հա-
տու բացականչեց Մոհարրամը:

Շփոթված պրիստավը անակնկալի չեկած՝ իջեցրեց ձեռքը: Նրա
վայրկենական շփոթմունքը փոխվեց կատաղության:

— Սիբիր քչել սրիկաներին... բանա...

Պրիստավի գոռոցից դողացին պատուհանի ապակիները:

— Սիբիր ել մեզ քչելու առիթ չկա... Մենք պահանջում ենք
այն, ինչ վոր համնում է մեզ, և աշխատանքը չենք սկսի, մինչև
վոր չստանանք մեր ստանալիքը...

Մոհարրամը չեր բղավում, ինչպես պրիստավը: Նա խոսում էր
հանգիստ ու հանդարտ, բայց նրա խոսքերը թողնում էլին վնչ պա-
կաս տպավորութուն, քան պրիստավի բղավոցը:

Մոհարրամի չետեր կանգնած բանվորները սիրտ առան ու չե-
կան առաջ: Նրանք ել ուզում էլին խոսել, բայց հուզմունքը թույլ
չեր տալիս նրանց գտնելու անհրաժեշտ խոսքերը: Նրանց անկասկ
բացականչութունները նման էլին սպառնալիքների:

Վոստիկանի վոսկրոտ մարմինը ջղաձգվեց: Դուրս ցցված գորշ
աչքերում վառվեցին չարության կրակներ:

— Դուք բոճես եք անում... Յես ձեզ ցուց կտամ բունտ
անել...

— Մենք չեկել ենք վոչ թե բունտ անելու, այլ բանակցելու
աշխատավարձի մասին:

— Կձերբակալեմ...

Պրիստավի աջ վոտը շարժվեց առաջ, մարմինը կորացավ, իսկ
հսկայական բռունցքը, վոր պատրաստված էր գետնահարող հարվա-
ծի համար, հսկա մուրճի նման շարժվեց չետ:

Մոհարրամը մի քաջ արավ առաջ, կարծես ձգտելով ընդունել
պրիստավի հարվածը և ազատել բանվորներին նրա դատաստանից:

Բայց պրիստավը չհամարձակվեց խփել: Նրան կանգնեցրեց չե-
րիտասարգ բանվորի անթարթ, ատելությամբ լեցուն հայացքը: Վոս-
տիկանին թվաց, թե բռունցքի հարվածին Մոհարրամը կպատասխա-
նի դանակի հարվածով:

— Դուրս այստեղից, — գոռաց պրիստավը իր ամբողջ ձայնով:

Կրկին դողացին պատուհանների ապակիները, բայց բանվորնե-
րի առջև կանգնած Մոհարրամը չշարժվեց իր տեղից: Նա շուտ չե-
կավ և չնայելով պրիստավին ու Սելիմ-բեկին, արհամարհանքով ար-
տասանեց:

— Յեթե դուք չեք ուզում մեզ հետ բանակցութուններ վա-
րել, մենք կզնանք, բայց գործարանը կանգնած կմնա այնքան ժա-
մանակ, մինչև վոր դուք չեք կատարի բանվորների պահանջները:

— Դուրս:

Անգոր գագազմունքից պրիստավը դոփում եր վոտքերը:

Մոհարրամն առաջ թողեց իր ընկերներին և դուրս չեկավ վերջինը:

Բանվորների դուրս գալուց հետո Սելիմ-բեկի առանձնասենյակում լուռ-թշուռն ախրեց: Պրիստավը անկյունից անկյուն եր ընկնում, արթուն եր խոտի մի փոքրիկ խուրձի նմանվող իր մորուքը և հայհոյում: Սելիմ-բեկի դեմքը մթնեց բարկութունից: Նա կանչեց պրիստավին, վորպեսզի վախեցնի բանվորներին: Սելիմ-բեկը չենթադրում եր, վոր պրիստավից վախեցած բանվորներն իսկուհն գործի կանցնեն: Կրկին կշարժվի գործարանը և տիրոջ գրպանը կհոսեն վոսկե դրամներ: Բայց ամբողջը թարս դուրս չեկավ: Բանվորները չվախեցան: Գործարանը կանգնած ե: Հիվանդոտ ջղաձգությամբ Սելիմ-բեկը ձեռքը դրպանը տարավ և շոշափեց փողամանը: Նրան թվաց, թե փողամանը թեթևացավ:

— Յեվ ամեն բանի համար մեղավոր ե Մոհարրամը: Առանց նրան սոգես բանվորները գլխի չեյին ընկնի գործադուլ անելու:

Սելիմ-բեկը խնդրեց պրիստավին նստել:

— Հարկավոր ե մեջտեղից վերացնել Մոհարրամին: Նա չեառաջնորդն ու դեկավարը: Այդ նա չե, վոր զրգել ե բանվորներին գործադուլ անել:

Սելիմ-բեկը ծանր շնչում եր, կնճռատվում, և դժվարությամբ հանում եր իր ճարպակալած մատի վրայից վոսկե մատանին, վորի վրա շողշողում եր խոշոր աղամանդը:

— Կվերացնեմ, — պատրաստակամությամբ արձագանքեց պրիստավը, վոր ուշադրությամբ հետևում եր Սելիմ-բեկի աշխատանքին:

— Հարկավոր ե նրան այնպես վերացնել, վոր նա այլևս չերևա այստեղ:

— Այնպիսի տեղ կբշեմ, վոր չեա գալու ճանապարհն ել կորցնի:

Պրիստավը շտապ վերցրեց իրեն պարզված մատանին, ուզեց հագցնել մատին, բայց տեսնելով, վոր մեծ ե, գրպանը դրեց:

Սելիմ-բեկը մոտեցավ դռանը և հրամայեց խոհանոցից կանչել մեխանիկ Սալմանին:

3.

Գործարանը կանգնած եր: Լուեց մեքենաների դրդոցը, շոփու ազմուկը: Անվրդով լուռ-թշուռն, վորի մեջ ընկղմվեց քաղաքը, անհանգստացրեց բնակիչներին: Ամբողջ քաղաքում խոսում եյին Սելիմ-բեկի գործարանում տիրող գործադուլի մասին: Այդ բառը բնա-

վիչներն արտասանում եյին հարզանքով: Թվում եր, թե այդ բանի մեջ թագնված կան գարմանալի հնարավորութուններ: Նա գործարանում կանգնեցրեց մեքենաները, մարեց կրակները: Գործադուլը փոխեց բանվորներին: Նրանք շրջում են քաղաքում աշխուժ ու ինքնավստահ, իսկ գործարանատերը մռայլ նստած ե տանը և չի չերևում: Յեվ քաղաքի բնակիչները համոզված եյին, վոր այս ամենը կատարվում ե այն պատճառով, վոր կյանք մտավ «գործադուլ» բառը:

Փոքրիկ քաղաքի բնակիչները վոչինչ չգիտեյին դասակարգային պայքարի մասին և չեյին չենթադրում, վոր վոչ թե բառը վախեցրեց Սելիմ-բեկին, այլ բանվորների միութունը՝ իրենց շահերի համար մղվող պայքարում:

Գործարանը դատարկվել եր, սակայն Մոհարրամի փոքրիկ սենյակում չեյին դադարում աշխուժ հավաքութիւնները: Թե առավուտը, թե ցերեկը, թե գիշերը խոնվում եյին այստեղ բանվորները և ուշագիւր լսում այն ամենը, վոր ասում եր նրանց Մոհարրամը, չերկար մտածում եյին նրա ասածների մասին և գնում եյին, վոր նա իրավացի չե:

Մոհարրամը չերբեք չեր չեղել վոչ առաջնորդ, վոչ կազմակերպիչ: Բայց չեկավ սուր վայրկյանը և նա դարձավ թե մեկը, թե մյուսը: Անընդհատ խորհրդակցութունների մեջ անցնում եր որը և միայն գիշերը նա հնարավորութուն ուներ մտածելու կատարվող դեպքերի մասին: Յեվ այդ վայրկյաններին նա կարիք եր զգում մի մարդու, վորի հետ կարելի լիներ խորհրդակցել և քննել առաջացած հարցերը: Նա հիշեց այն չեկվոր ընկերոջը, վոր հարստացրեց իրեն գիտելիքներով: Վորքան հարկավոր եր այդ մարդը հիմա: Մոհարրամը վորոշեց գրել նրան և հայտնել իրենց գործադուլի մասին: Նա շտապ թուղթ հանեց, նստեց սեղանի մոտ, տարտամ վառվող ճրագի առջև, և սկսեց գրել: Մի թերթը չհերիքեց: Նա հանեց չերկրորդ թերթը և շարունակեց գրել:

Ուշ գիշեր եր, չերը նամակը վերջացրեց, ծրարեց և պատրաստեց ուղարկելու:

Քաղաքում տիրում եր անվրդով լուռ-թշուռն: Մոհարրամը հաճույքով ականջ եր դնում մեռյալ լուռ-թշուռնը: Չե վոր այդ լուռ-թշուռնը վկայում եր բանվորների հզոր ուժի մասին: Դադարեցրին նրանք աշխատանքը և քաղաքը լուեց, կյանքը չքացավ:

Պատուհանի մոտ լսվող շրջունը Մոհարրամին հարկադրեց զգուշանալ: Փակված փեղկերից այն կողմը մեկը կամացուկ շարժվում եր, աշխատելով ազմուկ չհանել: Մոհարրամն անձայն բարձրու-

ցավ և մոտեցավ դռանը: Նա միանգամից բաց արեց դուռը և թռավ դուռն: Պատուհանի մոտից վախեցած լեռ ցատկեց մի մարդկային կերպարանք: Նա ծանոթ թվաց Մոհարրամին:

— Սալման, դո՛ւ լեռ,— զարմացած բացականչեց Մոհարրամը: Բայց փախչողը ձայն չտվեց: Նա ցատկեց ցանկապատի վրայով և կորավ մթուժյան մեջ:

— Նրան ի՞նչ է եստեղ հարկավոր,— զարմացած մտածում էր Մոհարրամը.— գուցե նա ուզում է միանալ մեզ, բայց վախենում է գալ ցերեկով: Բայց այդ դեպքում նա ինչո՞ւ փախավ:

Հոգնածուլթյունը հարկադրեց նրան սենյակ վերադառնալ: Նա փակեց դուռը, մարեց ճրագը և հենց վոր ընկավ չոր թախտի վրա՝ իսկուհն քնեց:

Առավոտվա գորշ մշուշում վոստիկանուլթյունը շրջապատեց Մոհարրամի տունը: Յերբ վոստիկանների մեջ լերկաց պրիստավը, դուռը պոկեցին և սենյակ լցվեցին զինված վոստիկանները:

Մոհարրամն արթնացավ կոպիտ հրոցից, ուզեց վեր կենալ, բայց չկարողացավ: Նրա ձեռները շատ ամուր կապված էլին պարաններով: Սենյակում վառեցին ճրագը և Մոհարրամը զարմանքով դիտեց հավաքված մարդկանց: Այստեղ էր քաղաքի ամբողջ վոստիկանուլթյունը և նրանց մեջ էր Սալմանը:

Պրիստավն արհամարհանքով գլխով նշան արավ Մոհարրամի կողմը: Մի ափսոսանք և կոպիտ վոստիկան լուռ բռնեց Մոհարրամին և սկսեց խուզարկել:

— Յուլց տո՛ւր, թե նա վորտեղ ի՞նչ է թագցրել,— հրամայեց պրիստավը Սալմանին:

Սալմանը վրա ընկավ և վորսկան շան նման սկսեց քրքրել Մոհարրամի իրերը: Նա շուռ տվեց անկողինը և հանեց նրա տակից պատրաստի նամակը: Անկողնի մոտից Սալմանը ցատկեց դեպի մութ անկյունը և սկսեց փորել կոխոտած հողը:

Մոհարրամը կրճատեց ատամները և ուզեց ձգվել դեպի անկյունը, բայց վոստիկանի ուժեղ ձեռքը պահեց նրան տեղում: Սալմանը բարձրացրեց միքանի աղյուսներ և նրանց տակից հանեց նվիրական թուղթիկները և գրքուլկները: Դրանք հանձնվեցին պրիստավին:

Ապա կապոտած Մոհարրամին, վոստիկաններով շրջապատված, տարան քաղաքի ամալի փողոցներով:

Վոստիկանների թողած սենյակը թողնում էր մուսլ տպավորութուն: Կարծես այստեղ տեղի լեր ունեցել մի դաժան ճակատ:

տամարտ: Հատակին, կահ-կարասիների կտորտանքների մեջ ընկած էին Մոհարրամի պատառուտված ու կոխոտված զգեստները: Այդ ավերմունքը կատարված էր այն նպատակով, վորպեսզի նախարգ-գուշացնեն նրանց, ովքեր կմտածեն գնալ Մոհարրամի ճանապարհով:

Քննությունը կատարում էր պրիստավը: Յերկու զինված վոստիկաններ նրա մոտ բերին Մոհարրամին:

— Ո՞վ է տվել քեզ այս գրքերը,— հարց տվեց պրիստավը:

Մոհարրամը կարոտով նայեց ձգմված թուղթիկներին և գրքուլկներին ու անտարբեր պատասխանեց.

— Ինձ վնչ-վոք չի տվել:

— Բա դու վորտեղից ես վերցրել:

— Փողոցում եմ գտել:

— Այդպես...

Պրիստավը քերեց խոզանականման մորուքը և սպառնալից նայեց կալանավորին:

— Իսկ այս նամակն ով է գրել:

— Չգիտեմ,— նույն անտարբերությամբ պատասխանեց Մոհարրամը:

— Ծրարի վրա հասցե չկա գրված: Ո՞ւմ ես գրել:

— Չգիտեմ, լեռ չեմ գրել:

— Լավ նայիր:

Պրիստավի ձայնը դարձավ չարագուշակ, խուպոտ: Նա վեր կացավ ու նամակը ձեռին մոտեցավ Մոհարրամին:

— Չգիտես, նույն խուպոտ ձայնով հարցրեց պրիստավը:

— Չգիտեմ, հաստատուն ձայնով պատասխանեց Մոհարրամը:

Պրիստավի ձեռքը ձմլեց նամակը և հսկայական բռունցքը կաշի արագությամբ խփեց կալանավորի դեմքին: Շշմած Մոհարրամն ընկավ: Նրա բերանը լցվեց թանձր, կաշոտ հեղուկով: Նա դժվարությամբ թքեց: Հատակին, արյան լճակի մեջ սպիտակին տվեց դուրս թռած ատամը: Մոհարրամը վերցրեց այն և դժվարությամբ վորքի կանգնեց:

Չարիված քթից ու բերանից արյուն էր հոսում: Պրիստավը զգվանքով սրբեց արնոտած բռունցքը և ընդհատեց քննությունը:

Մոհարրամը տագնապով դես ու դեն էր ընկնում կամերում: Ամուր, լերկաթացանց պատուհանից նա նետվում էր դեպի դուռը, նայում էր արանքներից, վորոնց մեջ չէր կարելի ձեռք կոխել, շոշափում էր, գննում:

— Հարկավոր ե փախչել... Փախչել, ինչ ել վոր լինի,— կամացուկ շնչում եր Մոհարրամը:

— Հարկավոր ե նախազգուշացնել բանվորներին, վոր Սալմանը դավաճան ե: Թող նրանք զգուշանան նրանից և շարունակեն գործադուլը մինչև այն ժամանակ, քանի դեռ իրենց պահանջները չեն բավարարվել:

Փոքրիկ պատուհանում չերևում ելին աստղերը: Նրանք հեզ ու տխուր թարթում ելին: Մոհարրամի և աստղերի միջև ցցված ե չերկաթե ամուր վանդակը: Այդ վանդակին դժվար ե հասնել, բայց միևնույնն ե՝ հասնես ել— դժվար ե այն կտարել: Յեվ Մոհարրամը նորից վազում եր դեպի դուռը, հրում եր այն ու լսում: Դուռը հաստ ե, ամուր: Վնչ, դժվար ե պոկել այն իր տեղից: Դռան չե-տակից լսվում ե շրջուն ու խռպոց: Դա քնած ե պահակը: Նա համոզված ե, վոր կալանավորը չի փախչի:

Մոհարրամը մոտենում ե պատերին և անհամբեր շոշափում ե քարերը: Յեթե դանակ ունենար, Մոհարրամը կքերեր քարերի ա-րանքի կիրը, կքանդեր պատը և թեկուզ մի ժամով կփախչեր բան-տից: Բայց դանակ չկա և նույնիսկ չերկաթի կտոր, կամ մի մեխ: Գրպանում միմիայն իր ատամն ե, վոր դուս թոցրեց պրիստավը: Մոհարրամը քերում ե նրանով քարերը, քերում ե, ու գիտե, վոր ատամը չի ոգնի նրան:

Դանդաղ սահում ե ժամանակը: Գունատվում ե գիշերը, շուտով առավոտ կլինի: Յեթե նա կարողանար տեսնել բանվորներից մեկ-նումեկին և նախազգուշացներ նրանց Սալմանի դավաճանության մասին, այն ժամանակ նա այլևս չեր մտածի փախուստի մասին: Նա համոզված կլիներ, վոր բանվորները կշարունակեն պայքարը մինչև վերջ և կհաղթեն: Իսկ այժմ... Ինչո՞վ կվերջանա գործադուլը...

Հեռավոր, անորոշ մի ձայն գրավեց Մոհարրամի ուշադրու-թյունը: Նա բարձրացավ սեղանի վրա, վեր թռավ և բուռնցքով շարդեց պատուհանի ապակին: Փշրանքները գնդոցով ընկան հատակին:

Մոհարրամը հենվեց պատին և տագնապալից սրտով սկսեց լսել: Չայնը կրկնվեց և ավելացրեց Մոհարրամի սարսափը: Չայնը գալիս եր գործարանի մեքենայից: Մեքենան գործի ելին գնում: Բայց Մոհարրամը չհավատաց իր լսողությանը: Նա բարձրացավ փոսների մասների վրա, շնչառությունը պահեց և սկսեց ականջ դնել:

Գործարանային շշակի ձայնը, արթնացած գազանի վոռնոցի նման, վրդովեց լուսադեմի լուռթյունը:

Մոհարրամը դողաց անգոր բարկությունից և գազադմունքից: Ամեն ինչ կորավ: Գործադուլը վիժված ե: Բանվորները պարտված են: Սելիմ-բեկն ու պրիստավը ցնծում են:

Ո, չեթե այդ շշակը լիներ այստեղ, իր կողքին: Այդ ժամանակ Մոհարրամը կհարձակվեր նրա վրա և իր ձեռքերով կսեղմեր նրա կոկորդը:

Շշակը չեր լուռ: Նա վոռնում եր ու վոռնում, կարծես ու-րախանալով և հաղթանակ տոնելով:

Մոհարրամին թվաց, թե հողը դողաց իր վտաքերի տակ: Ո-րորվեցին բանտի պատերը, աչքերի առաջից մի կողմ լողաց պա-տուհանի գունատ բացվածքը: Մոհարրամը գիտակցությունը կոր-ցրեց և ընկավ հատակին:

Գործարանից վանդված Դուրբանն աշխատում եր այգիներում: Նա տնկում եր պտղատու ծառեր և շրում եր հողը: Յերը թախիծը ճմլում եր նրա սիրտը, Դուրբանը չերգեր եր հորինում և կամա-ցուկ չերգում:

«Շատ վատ մարդիկ կան աշխարհում, շատ,
իսկ Սալմանը բոլորից ել վատն ե:
Նա Սելիմ-բեկի հավատարիմ շունն ե,
նա խաբեց բանվորներին:

Նա մեզ ասաց, — Սկսեք աշխատանքը —
և Մոհարրամը կվերագառնա գործարան:
Մենք սկսեցինք աշխատանքը... Յեվ ի՞նչ,—
Մոհարրամին քշեցին հեռու, Սիբիր...»:

Այսպես եր չերգում Դուրբանը, ջրելով պտղատու ծառերը: Կամացուկ չերգում եր Դուրբանը, այնքան կամացուկ, վոր նրա չերգը, մանկական լացի նմանվող այդ չերգը, միայն ծառերն ելին լսում...

Ձ Ե Յ Ն Ա Լ Ի Ե Կ

Պրիստավի ոգնական Ձեյնալ բեկը վաղ առավոտյան հաշվապահական գրասենյակն անցնելով, այնտեղ հանդիպեց ինչ-վոր արտակարգ չեռուզեռի: Վոստիկաններն արյուն-քրտինք մտած սրբում, հա սրբում էլին, իսկ պրիստավն էլ գժի նման սենյակում այս ու այն կողմը վազելով՝ բղավում եր վոստիկանների վրա:

— Ձրի ոռճիկ եք ստանում և ամբողջ տարին մի կոպեկի չե՛լ գործ տեսնել չեք ցանկանում: Միայն այն բանին եք պատրաստ, վոր գրասենյակ մտնողներից կաշառք առնեք: Ես ե, գուբերնատորը (նահանգապետը) մի չերեք որից կգա, ձեզ բոլորիդ էլ շների պես կվճարի ծառայութունից:

Ձեյնալ բեկը չերբ վոր լսեց գուբերնատորի գալու մասին, ծնկներն սկսեցին դողալ:

«Պրիստավը վոստիկաններին վախեցնել է ուզում, թե իսկապես գուբերնատորը պիտի գա» — սկսեց մտածել Ձեյնալ բեկը և մնաց շվարած դրուժյան մեջ

— Նիկոլայ Սեմյոնովիչ, ճիշտ վոր գուբերնատորը պետք է գա, — հարց տվեց Ձեյնալ բեկը ժպտերես, անհամարձակ և թեթև ձայնով:

Պրիստավը խիստ տոնով պատասխանեց.

— Այսինքն ինչպես թե «ճիշտ վոր»: Մի՞թե չես ձեզ հետ կատակ անելու ժամանակ ունեմ: Պիտի գա և անձամբ բոլոր պաշտոնյաներին պիտի հեռացնի ծառայութունից:

Պրիստավը ձայնը կտրեց և վոստիկաններից մեկի մեջքին մի ապտակ տալով՝ գոռաց.

— Ավանակ, դեռ մտիկ ե տալիս, շուտ արեք, գոնե գրասենյակը մաքրեցեք, տեսնենք մեր վիճակն ինչ է լինելու:

Վոստիկանները շտապ վերցրին ավելները և շարունակեցին ավելել:

Մի քանիսը հին հաշվեմատյաններն էլին թափ տալիս ու փողոց մաքրում, մյուսները թանաքամանների միջի սատկած ճանձերն էլին թափում և նոր թանաք լցնում: Փողոց մեկը մյուսին չեր տեսնում:

— Ձեյնալ բեկ, կանգնելուց ոգուտ չկա, գոնե դու չե՛լ գնա բազարն ու փողոցները մաքրել տուր:

Այս խոսքերը Ձեյնալ բեկին կարծես խորունկ քնից արթնացրին. իր գունաթափ դեմքը պրիստավին դարձնելով՝ ասաց.

— Հապա ասում ես գուբերնատորը գալու չե չերեք որից, այս կարճ ժամանակվա ընթացքում բազարն ու փողոցները կարելի չե մաքրել. այնտեղ հարյուր ֆուրգոն աղբ կա:

Ի՞նչ արտասանած «գուբերնատոր» բառից Ձեյնալ բեկն ամբողջ մարմնով կրկին սկսեց դողալ:

Պրիստավը պատասխանեց,

— Հապա ինչ պիտի անենք, գոնե դեպի գրասենյակը բերող փողոցը մաքրել տուր, վորպեսզի գուբերնատորի բարկութունը չըբռնի:

Ձեյնալ բեկը պրիստավի խոսքերը կիսատ թողած՝ ծանր մտածմունքի մեջ դուրս չեկավ գրասենյակից:

Նախ նրա ուշադրութունը գրավեց դեպի գրասենյակը չեկող փողոցի ցրված ու թռչկոտող աղբն ու փոշին:

Այ կողմը բազաքային այգին էր, վորի մյուս կողմում աչքի էլին զարկում մի քանի կեղտոտ տներ:

Ձեյնալ բեկը, խոր լուռության մեջ թաղված, սկսեց համրաքայլ առաջ գնալ այգու բարդիների շարքի առջևով: Շատ չեր գնացել, չերբ տեսավ մի վոստիկանի, վոր պտուկած ձմեռվա արևի տակ՝ անհոգ կերպով խոմփում էր:

Ձեյնալ բեկը բարկութունից սկսեց վոլորել իր բեխերը և ապա դարձավ՝ մի ուժեղ ապտակ տվեց վոստիկանին:

— Շան վորդի, թողնես այս վիճակում պտուկի և սատկի... Իսկ չերբ գիշերները քաղաքային այգու ճաղերը մեկ-մեկ պոկում ու վառում են, իսկի չե՞ս մտածել, վոր աշխարհումս գուբերնատոր էլ կա...

Վոստիկանը քնից արթնացավ՝ աչքերը չոնեց Ձեյնալ բեկի վրա և ձեռքը դեպի գլխարկը տանելով՝ հարգալից բարևեց:

— Պատրաստ եմ ծառայելու, ինչ եք հրամայում:

— Ինչ պիտի հրամայեմ, չո ու ցավը ձեզ տանի: — Ես այգու ճաղերը դարձյալ քանդել ու վառել եք:

— Աստված գիտե, բեկ, գիշերները շատ ցուրտ է լինում:

— «Ցուրտ է լինում», ցուրտը աչքդ մանի... Անասուն, շուտ արա, գնա այգու ծառային գտիր, գուբերնատորը գալիս է, փողոցները պետք է մաքրել:

Վոստիկանը գլխարկը շտկելով և իր չերկար ու հնացած թուրը քարշ տալով կողքից՝ գնաց:

Ձեյնալ բեկն էլ բազարնիկի բղավոցը լսելով, ուղղվեց դեպի այն կողմը:

Բազարնիկ Այի բեկն իր հաստ ճիպտան իջեցնում էր համբալ-
ների մեջքին և ուսերին:

Ձեջնալ բեկը վրա հասավ:

— Նորից ի՞նչ կա, ա՛յ Այի դադաշ:

— Ադա՛, ես շան վորդի համբալները, չե՞ս տեսնում, բազարը
մաքրելու համար փող են ուզում: Վերցնես շան զավակներին, բո-
լորին միասին կապոտես ու Պարսկաստան ուղարկես...

Ձեջնալ բեկը ձեռքը նրա արծաթապատ գոտուն դնելով՝ խոր-
հրդավոր ձայնով ասաց.

— Այի դադաշ, դու դեռ են ասա, ես դուբերնատորի պալուց
խելքդ ի՞նչ ե կտրում:

— Ի՞նչ պետք է ասեմ, տուններս քանդվեց, լերանի ես ան-
գամ գալը սուտ լիներ, մարդ մի փոքր ել գործերը կարգի քցեր...

— Ադա՛, դու մեռնես, եսքան տարի յե ծառայում եմ, բայց
կարծես հենց նոր ետոր ե աչքս բացվել: Ես շան վորդի բախկալ-
ներն (մրգավավառները) իրենց սեղաններն ու մրգամանները դե-
պի առաջ բերելով՝ քիչ ե մնացել ամբողջ հրապարակը բռնեն: Ի-
րենց ծախած բաներն ել ամբողջութամբ հին, փթած բաներ են,
հոտած մրգեր ու անպետք ուտելեղեններ, վատ չուղ ու պինդ թան...

— Այի դադաշ, դրանք մի կողմը մնան, հապա մեզ վոր հե-
ռացրին՝ ի՞նչ ենք անելու: Մեզնից բացի, բոլորն ել իրենց ամրաց-
րել են:

— Հա՛, ողո՛ւ, հենց մեկն են ուրյաղնիկը, պաշտոնի անցնե-
լուց ես կողմը մի մեծ տուն ե կառուցել: Բանկումն ել, ասում են,
տասը հազար մանեթ փող ունի, շան լակոտն առաջ վոչինչ չուներ:

— Պրիստավի քեֆն ել տեղն ե, նա իրեն ավելի լավ ե քո-
քել, քան կանտրաբանդիստները:

— Ադա՛, խելացի մարդն ել ենպես կլինի, ե: Ասում են՝ կա-
շառք մի վերցնի, մեկ ել տեսար հինգ-տաս մանեթի համար խրվե-
ցիր: Վերցնում ես՝ հարյուր վերցրու, հազար վերցրու: Իրա հա-
մար ե, վոր հաջի Կասրմը, շուկայից առաջանալով, սկսել ե բա-
ղաքի մասերն ել գրավել և ամեն անգամ մի նոր խանութ բաց ա-
նելիս՝ պրիստավի ծրարի մեջ 200 մանեթ ե դնում: Ա՛յ, Ձեջնալ,
հաջի Կասրմը մի տարում ամենաքիչը հինգ խանութ բաց կանի, չե՛:

— Հինգն ի՞նչ ե վոր, ա՛յ մարդ:

— Ուրեմն պրիստավի բաժինը՝ հազար մանեթ: Նրա ինչի՞ն
հերիք չի անի:

Ձեջնալ բեկն այտեղ մի խորունկ «ախ» քաշեց:

— Ե՛՛յ մարդ, մեջտեղում միայն մենք աղքատ մնացինք:

— Ձեջնալ, քո բանն ելի լավ ե, պրիստավի կողմից քեզ ել,
ասենք, քիչ բաժին չի բնկնում:

— Ա՛յ մարդ, վճռտեղից, հարյուրանոցները պրիստավին գնա-
լիս՝ ինձ ել ամենաշատը տալիս ե մի գլուխ շաքար: Ձե՛ս իմանում,
վոր մուսուլմանն իր հավատի մարդուն բարիք չի անում:

Այի բեկը, գավազանը ձախ ձեռքն առնելով, աջ ձեռքը պցեց
Ձեջնալ բեկի մեջքի գոտուն:

— Դու դեռ մի գլուխ շաքար ել ե ստանում ելիր, չես են ել
չեմ տեսել: Յերբեմն միայն մտավաճառի խանութի չետևում հիվանդ
վոչխար մորթելիս՝ ձայն չեմ հանում, նրանք ել մի քիչ միս են
տուն ուղարկում: Յեթե խոսեմ՝ եղ ել չի լինի: Շան վորդիներն
ենպես վարպետութամբ են հիվանդ վոչխարներ մորթում, վոր ա-
միսը մի անգամ ել չես կարողանում բռնել...

— Մի խոսքով, Այի դադաշ, այտորվանից մենք միայն մի ճար
ունենք, պետք ե իսկի չերեանք գուր՝ բնատորի աչքին, գուցե եզ
ձևով մի կերպ կարողանանք մեր կաշին փրկել: Յես հո վորոչեւ
եմ եղպես անել. վո՛չ տեսի վո՛չ ել գործից հեռացնի...

— Իսկ չես դեռ չեմ իմանում, թե ի՞նչ պիտի անեմ. առավոտ-
վանից շան վորդի համբալների հետ ձեծվելով՝ հոգնել, հալից ընկել
եմ: Մորուքս ել վաղուց ե, վոր հինա չեմ դրել. գնամ բաղնիք,
մորուքիս հինա դնեմ ու պառկեմ, տեսնենք վերջն ի՞նչ ե լինելու:

Ձեջնալ բեկը միքանի ժամ բաղարո՛ւ ման գալուց հետո պա-
տահեց ուրյաղնիկ կուլին: Սա բարձրահասակ, նիհար և թխադեմ
մի մարդ եր: Շաբաթվա չերեք որը ծառայութան եր գնում, իսկ
մնացած որեքն ել շարունակ տարբեր զգեստներով զեղխութամբ և
հարբեցողութամբ եր գբաղվում:

Ձեջնալ բեկը կուլին տեսնելով՝ ժպտերես ասաց.

— Ա՛յ կուլի, բալամ, եսպես չի լինի, վճռտեղ ես. բա ես
ասակելիք գարադավոչներն ի՞նչ են չեղել, վոչ մեկին չեմ դանում,
վոր գործի ուղարկեմ:

Ուրյաղնիկ կուլին իր խիստ դեմքը մի քիչ փոխելով՝ կարմրած
ու հոգնած աչքերը դեպի Ձեջնալ բեկը դարձրեց:

— Գարադավոչներից հինգը պրիստավի տանը ծառայութուն
են անում. շուր են կրում, կերակուր պատրաստում, բաղար
դնում... Յերեք-չորսն ել չերեկ ուրյաղնիկ Հասանի տանն ելին,
կարող ե պատահել, վոր այժմ քնած են:

— Դո՛ւ չել այնտեղ ելիր:

— Յեղբայր, թողնում են վոր, գոռով քաշում-տանում են, թե՛
գնանք թուղթ խաղանք: Ասոված վկա, չերեք-չորս որ ե, վոր ան-
քուն եմ, գլուխս ցավից տրաքվում ե:

Ձեջնալ բեկը, չերեսը կուլիից դարձնելով, նեղացած տոնով
ասաց.

— Փահ, հենց ինչ վոր գալիս ե ձեռներիցդ՝ բաց չեք թողնում, իսկի չե՛լ չեք ասում, թե աշխարհումս գուբերնատոր ել կա: Խմբվում եք գիշերներն ուրչաղնիկ Հասանի տանը և թուղթ եք խաղում, այդ տրամադրութչան տակ ել վեր կենում ու ընկնում եք հարևանների հոգին խաշում, խալխի աման-չամանը գողանում, ցախ ու վառելիքը քանդում վառում: Ել չես իմանում, թե ինչեր չեք անում... Հիմի գուբերնատորին ինչ ասենք, ասենք թե ուրչաղնիկ Հասանն իր տանը դումարխանն չե բացել:

Ձեջնալ բեկը բարկությունից փրփրած իր բերանը սրբելով՝ չերեսը շուռ տվեց ու գնաց: Բայց միքանի քայլ հեռանալուց հետո գարձյալ յետ դառնալով՝ գոռաց.

— Ձքավորներն ու աղքատներն ամեն ոք գալիս գանգատվում են, թե գարագավոջները գալիս անալին իրերը, ամանեղենն ու կողինքները քաշում-տանում են, ասելով՝ թե հնից պարտք ունեք: Ասում են, վոչ կերակուր չեփելու աման են թողել և վոչ ել նստելու տեղ... Տն, շան վորդի, հնից մնացած պարտքը մի անգամ կլինի, չերկու անգամ կլինի, հո ամեն ոք հին պարտք չի կարելի գանձել: Ես տեսակ գործերը մի ուր ել կբացվի և ձեր հոգին կհանեն...

Ձեջնալ բեկը վոստիկանների արարքների մասին խոսելով՝ հետոգհետե ավելի տաքացավ և սկսեց տեսակ-տեսակ հայհոյանքներ թափել, մինչև աջն աստիճան, վոր թուրք լեզվի անթիվ անհամար հայհոյանքներով չբավականանալով՝ անցավ ոռուսերենին և մի շարք հայհոյանքներ ևս իրար յետևից շարելով՝ հեռացավ:

Գուբերնատորը հասել եր քաղաք: Վոստիկանական պաշտոնյաներն իրենց ամբողջ ուժը գործ ելին դրել՝ քաղաքի արտաքին տեսքը մի տեսակ կարգի բերելու ուղղութչամբ, և այժմ ել ամեն մեկն իր նվիրական պարտականութչունն եր համարում գուբերնատորին ներկայացնել քաղաքի ներկան ու ապագան: Իրա համար եր գարագավոյից բռնած մինչև բերդապահը, պաշտոնական զգեստներով զարդարված, գրավել ելին իրենց տեղերը: Միայն Ձեջնալ բեկն եր, վոր հաստատ մնացել եր իր նախկին վորոշման վրա:

— Յես գուբերնատորի աչքին չեմ յերևալու. վորտեղ նրան տեսնեմ՝ փախչելու և թագնվելու չեմ. յեթե ինձ չտեսնի՝ ինչպես կարող ե ինձ պաշտոնագուրկ անել: Հավանական ե, վոր իսկի չե՛լ ինձ չմտաբերի:

Ձեջնալ բեկն այսպես մտածելով՝ ինքն իրեն մխիթարում եր: Նահանգապետը դեպի պաշտոնատները գնալիս, վոստիկանական պաշտոնյաները կտտարչալ պատկառանքով հետևում ելին նրան և նրա յուրաքանչյուր հարցին պատասխանում ելին խորին պատրաս-

տականութչամբ և քծնանքով: Նրա ամեն մի հրամանն անմիջապես կատարելու համար գլխով ու վոտքով մեջտեղ ելին ընկնում և աշխատում ելին ամեն կերպ ցուցահանել արտակարգ պատրաստականութչուն, վորպեսզի վորևե բանով կարողանան արժանանալ նրա քաղցր վերաբերմունքին:

Ձեջնալ բեկը բոլորովին հեռու չեր այս ձևականութչուններից ու մտքերից: Նա ձգտում եր՝ վորքան հնարավոր ե մնալ յետևի շարքերում և վոչ մի կերպ զգալի չդարձնել իր գոյութչունը: Յեթե նահանգապետը բանտապետին կամ վոստիկանական պաշտոնյաներից մեկին մի բան եր հարցնում, Ձեջնալ բեկը նրա խիստ հայացքին չհանդիպելու համար գլուխը կամաց իջեցնում եր և պահվում պրիստավի յետևը: Ո՛վ ե իմանում, թե ամեն անգամ նահանգապետի ձայնը լսվելիս՝ ինչպիսի յերկուց եր առաջանում Ձեջնալ բեկի սրտում: Միայն հեռվից նահանգապետին աչքով հետևելը մասամբ թեթևացնում եր նրա սրտի վախն ու տագնապը:

Մի ուր ել, առավոտ կանուխ, յերբ Ձեջնալ բեկը նոր-նոր եր մտնում գրասենյակ, հարևան սենյակից լսեց նահանգապետի կատաղած գոռոցը: Այս գոռոցը նրա ախանջներում անսովոր մի թընդուն առաջացնելով՝ ամբողջ մարմնին անցավ:

Ձեջնալ բեկը կանգ առավ համարյա անզգա և բերանը բաց չեր համարձակվում առաջ գնալ, իսկ յետ վերադառնալու համար ծնկներում ուժ չունեք: Մյուս կողմից նահանգապետի ձայնը հետզհետե մոտենում եր. պարզ չերևում եր, վոր նա, մութ միջանցքից անցնելով, գալիս ե դեպի այն սենյակը, ուր գտնվում եր Ձեջնալ բեկը:

Ձեջնալ բեկն այս բանը հասկանալով՝ հուսահատ մի վոստյուն գործեց և թագնվեց դռան յետևը. և այս վորոշումը նա գլուխ բերեց այնպիսի անակնկալութչամբ և անհաշիվ շարժումով, վոր անկյունում դրված մեծ հատակասրբիչն աղմուկով գետին ընկնելով՝ գրավեց դեպի դուռը յեկող նահանգապետի ուշադրութչունը:

Նահանգապետը մի փոքր կանգ առավ և ձեռքի մտրակով սկսեց քննել դռան անկյունը: Այդ միջոցին Ձեջնալ բեկը մեջտեղ ցատկեց և անմիջապես ձեռքը ձակատին տանելով՝ մեծարանքով բարևեց:

Նահանգապետը զարմացած հայացքով նայեց նրան, խիստ բարկացավ և կատաղած ձայնով գոռաց.

— Վն... (դուրս):

Միքանի բոպե անց նահանգապետը, իր պոչից գնացող վոստիկանական պաշտոնյաների հետ, արդեն հեռացել եր հիմնարկից, սակայն Ձեջնալ բեկը, նու՛ն տեղում անշարժացած, զինվորականի բարևի դիրքում քարացած՝ լեզուն բռնվածի նման կակազում եր.

— Ձն...վակ...ներ .. ունեմ... բնդ...ցած... կմնան...

Ս Ա Բ Ի Բ

ՀԱՐՈՒՍՏԸ՝ ԲԱԳՎԻ ՓԱՅԼԱՆԵՐԻՆ

(Թուրքերեցից)

Բախտի անիփն են չի, շուռ ա եկել հիմի,
Ու փահլան ել մարդամեջ ա ընկել հիմի:

Ախր ինչի՞ իրա խոսքը ասի փահլան,
Կամ թե որենք ու իրավունք ուզի փահլան,
Փահլան թի ա, վոր խառնվի ամեն բանի,
Փահլան պիտի գլուխը քաշ գնա բանի:

Բախտի անիփն են չի, շուռ ա եկել հիմի,
Ու փահլան ել մարդամեջ ա ընկել հիմի:

Փահլան, ասան, ինչի՞ համար պատիվ տամ քեզ,
Ձեն ես հանել՝ դուն ես սուտը... դատի տան քեզ,
Լսիր, բալա, փող ու պատիվ հարուստինն ա,
Հարուստը քեզ ինչ ել կտա՝ դու գոհ մընա:

Բախտի անիփն են չի, շուռ ա եկել հիմի,
Ու փահլան ել մարդամեջ ա ընկել հիմի:

Հարուստի հետ գլուխ մի դիր, շառը շատ ա,
Աղքատ մարդը ինչ ել ասի՝ ահանջ մի տա.
Աղքատի հետ քեզ մի դնի մեկ—բարեբար,
Անգլուխի, անվոտի հետ՝ վոչ տուր, վոչ առ:

Բախտի անիփն են չի, շուռ ա եկել հիմի,
Ու փահլան ել մարդամեջ ա ընկել հիմի:

Դու մի խափվի, փահլան հեչ ա, խելքը պակաս,
Փահլան չունի հարստութուն, քուրք ու ատլաս.
Մարդավարի մի հատ խալաթ չունի կարգին,
Ամառ, ձմեռ հենց մի փալաս ունի հագին:

Բախտի անիփն են չի, շուռ ա եկել հիմի,
Ու փահլան ել մարդամեջ ա ընկել հիմի:

Թե ուզում ես, վոր դինջ մնաս ես աշխարհում—
Ղալմաղալի չմտենանս ես աշխարհում,
Իչասիր մարդուց հեռու կենաս ես աշխարհում.
Գլխիդ խաթա չկամենանս ես աշխարհում:

Բախտի անիփն են չի, շուռ ա եկել հիմի,
Ու փահլան ել մարդամեջ ա ընկել հիմի:

Խալխի դարդը իրան մնա, դու սուս արա,
Հենց քեզ համար քո ոջախը դու լուս արա,
Դու քո տանից, չեթիմներից ձեռ մի քաշի,
Ին բանը չի ուրախութուն,—մի չեկ հիշի:

Բախտի անիփն են չի, շուռ ա եկել հիմի,
Ու փահլան ել մարդամեջ ա ընկել հիմի:

Բ Ա Ն Չ Պ Ա Բ

Ի՞նչ ես ձենդ գցել, ադա, ան ոանչպար:
Մի ձեանա աղքատ, հալղա, ան ոանչպար:

Իսկի ամոթ, արուս չունես, պատել ես իմ դուռը,
Բարի լուսին, թե իրիկուն, կապել ես իմ դուռը,
Հենց մի գլուխ ֆլագատում ես, կպել ես իմ դուռը:

Բոլ ա, ի՞նչ ես ուզում, մուրտան, ան ոանչպար,
Ձենդ կորի, գահլա մի տար, ան ոանչպար:

Տարին վատ եր, մի հատ ցորեն չհասավ, իմ ինչ բան,
Մուկը կերավ, բաղ ու բոստան չորացավ, իմ ինչ բան,
Վերան ելար, քո ջուխտ աչքը քոռացավ, իմ ինչ բան:

Ինձ ի՞նչ, վոր քո բանը ձախ ա, ան ոանչպար,
Թող քո հոգին դուս գա, հախ ա, ան ոանչպար:

Պետութունը տուրքը, խարջը տոել ա, մեզ ինչ
Պարտատերը քո լծկանը տարել ա, մեզ ինչ,
Կրակն ընկել, քո տուն տեղը վառել ա, մեզ ինչ:

Հողիդ ծախի, բեր իմը տուր, ան ոանչպար,
Դե ոող ելի, շատ դուս մի տուր, ան ոանչպար:

Իմ ի՞նչ բանը՝ թեկուզ սատկես, ել չկամ աշխատող,
Ջահաննամը թե սոված ես, ինձ պետք ա փող ու փող,
Ինչ վոր բանի՝ բերես կտաս, աչքդ ել դուս գա. թող:

Ի՛մն ա հողը, ի՛մն ա բերքը, ա՛ ունչպար,
Թե՛ չես ուզում նստի բերդը, ա՛ ունչպար:

Քանի կուզես՝ դու աղաչի, չես իմը կտանեմ,
Կուզես՝ հալի, կուզես՝ մաշի, չես իմը կտանեմ,
Քեզ կքերթեմ, իմ բանը չի, չես իմը կտանեմ:

Ղամշու համը լավ իմացի, ա՛ ունչպար:
Գլխիդ գալը լավ մտածի, ա՛ ունչպար:

Դու ի՛նչ մարդ ես, վու ջուր իմես, քեզ լակը դեռ շատ ա՛,
Հացը վո՛րն ա, քեզ կրծելու՝ տախտակը դեռ շատ ա,
Դու վոր մի հին, փալաս գցես քո տակը, դեռ շատ ա:

Քո ի՛նչ բանն ա միս ու չեղը, ա՛ ունչպար:
Հայվան, մսուրն ա քո տեղը, ա՛ ունչպար:

Բեզդադա չեմ, իմ ապրելը շախով ա, լաղաթ ա,
Ես աշխարքը իմ քեֆով ա, իմ ջուրը շարբաթ ա,
Առանց գինու հաց չեմ ուտի, ինձ համար աղաթ ա:

Յես բեզ մարդ եմ ու բեզդադա, ա՛ ունչպար:
Իմ պատկերը դե տես, եզ ա, ա՛ ունչպար:

ՍԵՒԴ-ԱԶԻՄ ՇԻՐՎԱՆԻ

ՏԳԵՏ ԳՅՈՒՂԱՑՈՒ ԿԱՇԱՌՔԸ ԱՍՏԾՈՒՆ

(Թարգմ. բուրբերենից)

Մինչև իսկ այսօր Համադան չերկրում
Խավար ու սգես մի խալիս ե ապրում:

Մի խալիս, վոր նման մեր գյուղին Լահիչ:
Լա—Թարգմանիր —վոչ, հիչն ել արդեն հիչ:

Ու հիչ, մի տարի, անձրև չտեսան.
Վոչ խոտ, վոչ դարման՝ կովին ու չեղան:

Ու ժողով արին. ժողովը՝ լեցուն.
Գյուղացին ուզեց կաշառի աստծուն:

—Ալլահը դե չի հավատում խոսքի.
Անձրև ես ուզում՝ հավաքի վոսկի:

Ու բերին արծաթ, վոսկիները հին.
Բերին դեմառդեմ գյուղական քեռխովին:

Քեռխովին ել առավ, ընկավ ճանապարհ:
Հովիտ, սար ու ձոր, դաշտեր, առապար:

Անապատ ու շեն, քաղաքներ քանդված,
Ինչքան ել փնտոեց՝ չգտավ աստված:

Ու մեկ ել, հանկարծ, ճամբին հեռավոր
Դեմ չելավ նրան շքեղ ձիավոր:

Եմիրն եր հարուստ՝ Շահսուվարների.
Յեկել եր այդ օր պտույտներ անի:

Ձեռքերում բաղեն՝ չերկաթե կտուց.
Յերկու շուն—թագի՛ շորերը վոսկուց:

Ալլահն ե, վոր կա.—խորհեց գյուղացին.
Ալլահ ճար կանի իրենց վիշտ լացին:

Ու վաղեց առջ ու ընկավ գետին.
«Ո՛, գթա, ալլահ, քու ժողովրդին:

«Յերկրի ու չերկնի, ծովերի դու տեր,
«Քեզ են աղերսում քյասիր քո ճուտեր:

«Քեզ համար կաշառք բերել եմ վոսկի.
«Սրանից ավել՝ ել չունենք իսկի:

«Բաշխիր մեզ անձրև, սվ դու բարերար,
«Թե չես կխանձվի մեր բերքը արար:

«Անիծում ենք քեզ Գաբրել հրեշտակով,
«Վոր բռնել ես պինդ քո եզ սուրբ ձեռքով:

«Անիծում ենք ջուխտ մահիդ հրեշտակով,
«Վոր լուռ, վոսկեշոր կանգնել են քու քով:

«Հուլից մի գրկի. գթա մեր հալին.
«Մեր հույս-կողպեքի տուր մեզ բանալին»:

Եմիրը վերից ժպտաց անխելքին.
Միրով վեր առավ արծաթ ու վոսկին:

«Ընդունում եմ չես կաշառքը գյուղի.
«Լավ եք մտածել. ել հեչ միք վախի:

«Ամպերը շար-շար իրար կկապեմ,
«Ուրբաթ՝ ձեր գյուղին անձրև կթափեմ»:

Ու քեռխովին շտապ դարձավ դեպի տուն.
Տգես գյուղացուն, ս, ի՛նչ խնդու թյուն...

«Տեսա՞ ալլահին. փառք իր բարձունքին.
«Տեսա իր ձեռքում Գարբել հրեշտակին»:

«Յերկու ազրախիլ սրով արնակաթ.
«Թաթերն՝ առյուծի, առամներն՝ յերկաթ»:

«Ու հենց վոր տեսա՞ մթնեց լուս աշխարք.
«Յես ծունկ չոքեցի ու սվի կաշառք»:

«Կաշառքը, թեև, քիչ էր, անարժան,
«Բայց նա ընդունեց ու ժպտաց այն ժամ»:

«Ասաց, վոր յերկինք ամպով կպատի.
«Ուրբաթ որ, անշուշտ, անձրև կթափի»:

Ուրբաթ, պատահմամբ, մութ ամպը յերավ.
Անձրև ես ուզում՝ հեղեղ ե, սելավ»:

Կոտորվեց վոչխար, քանդվեց խրճիթ, արտ.
Գյուղացոց համար ինչ սուգ ու ինչ դարդ»:

—Մարդ ել Ալլահին տա հազար թուման.
Վոր ինելքը թռնի, կապի սև դուման»:

Ի հարկե, այնքան կաշառք վոր առնի,—
Նաշադիր դեղից՝ աշխարք կխառնի...»

Ի. ԲԻԶԱ

Յ Ե Ր Կ Ո Ւ Ա Շ Ի Ա Ր Շ

Վաղում ե կյանքը, արշավում ե, հրում,
լուսատու արևի յետևից ընկած ե,
ով արյուն ունի, ուսերին գլուխ՝
թող տեսնի, զբաժանում ե աշխարհը՝ կապիտալը»:

Ենկողմ—արնախում ու դահիճ գահակալներ,
եսկողմ—միասնություն, ազատություն ու սեր,
ենկողմ—զրհանավեր, ումբեր, սկաններ,
եսկողմ—ապահովություն, յեղբայրություն—տեսեք...»

Ենկողմ—ավերներ, մեչիգներ վորպես բու,
խրճիթներ խարխուլ, շղթաներ ժանգոտ,
ու ժամեր, տաճարներ, գմբեթներ փոշոտ,
մտած անզարթնելի քուն»:

Ենկողմ—տներ այրված, հիշատակ անցյալի,
եսկողմ—նոր Բագվի կառուցում, զավոդներ,

ավերներ մնացած ժանտ մուսաֆաթից,—
եսկողմ—Ֆաբրիկներ ձգվում են դեպի վեր...»

Ու տեսնում եմ անա յերկու ձեր, մի տերտեր
զնում են դեպի ժամ, իսկ այնտեղ կուսացած,
սեամորուս մուսուլմանն ե գլուխը թեքել,
անծանոթ ալլահին ծնրադիր, յերկուզած»:

Գերաններ են նրանք ե փթած ե խարխուլ,
ու նրանց դեմքերին մահացող կյանքն ե,
բայց անա նրանց դեմ ցնծում են ու յերգում
խանդավառ պիոներներ, պիոներկաներ»:

Կասպից ծովն ե խնդում ու ֆշշում,
ալիքներն են յերգում անդադրում ու խոսում,
լուս ե հին ոջախը, անջրտի դաշտերում
հողմորն ե հողը ահոսում»:

Աշխատանքն ե այդ նորորչա, ամրահիմ,
այդ բազուկն ե շրջում պատմությունը,
արևոտ ե մեր ոջախը ու տանջված գլուղացին
այժմ անհոգ—իր հունձքը հավաքում ե»:

Սուլում են սուլիչները, սուլում,
թնդում ե նրանց ձայնը յերկրում,
և յես՝ մի վկա, այս անհագ որերում
նոր կյանքի նոր յերգն եմ յերգում...»

Թուրք. փոխադրեց՝ Գուրգեն Մահարի.

Ա. ՖեվՋի

ԳՈՐԾԱՐԱՆ ԸՆԿ. ԼԵՆԻՆԻ ԱՆՎԱՆ

Յերբ կասպին ե իր մարմար ալիքները ծփացնում,
վորպես ձերմակ աղավնի համբուրում ե ավերն իր—
նրա կապույտ աչքերին, հրապույրով մի ծանոթ,
Սպիտակ Բաղաքն ե ժպտում, փոված մետաքս ավերին»:

Յերբ շշակներն են կանչում լուսաբացի դեմ անահ,
բանվորները զարթնում են թռչունների պես կանուխ,
գործարանի մեծ ձամբով առաջանում են անահ,
աշխատանքի հետ կապված՝ կերտում են ու պայքարում»:

Սոցիալիզմի շենքը հսկա կառուցում են միասին
բանվորները՝ լույս տալով խորշերին մութ ու խավար,

ու աշխատում են նրանք միաբան ու միասիրտ,
ու հրեղեն աշխարհը նրանք հրում են առաջ:

Թնդացնում ե չերկինքը շշակների սուլոցը,
փոշոտ համբույր ուղարկում շրթունքներին արևի,
տրոփում ե պողպատյա մոտորների գնդոցը,
ու ձուլվել ե բանվորը կենսակառուցից դադարահին:

Վորովհետև կյանքը նոր չի կառուցվի անաշխատ,
ով փախչում ե պայքարից՝ կյանքը կքում ե նրան,
զանգի զողանջը ծուլին կանչում ե դեպ գերեզման—
տան-դոն, տան-դոն— վոռնում ե, կանչում ե գիրկը մահվան:

Ա. ՀԻՔՄԵԹ

ՆՐԱ ԱՐՁԱՆԻ ԱՌԱՋ

Այդպես եր աշխարհը հնում, փորձանքների մթին զնդան,
մարդը, մարդը թշվառների, դատապարտված խավար մի հոտ.
վոմանց համար դրախտ ու բախտ չերջանկության ու խնդության,
վոմանց համար բանտ անուրախ, զրկանքով լի ու մահահոտ:

Ի՞նչ ժպտին, հրճվանքին ի՞նչ... Անժպտ եր դեմքը նրա,
լոկ հարուստն եր ուրախանում խնջույքներում գինով հարբած,
չքավորին վոչ մի արև, չքավորին վիշտը միայն,
չունենո՞ր ես, չկա՞ ծիծաղ, խեղդվիր, լու՛ր, խորտակվիր, լաց...

Յերկար հնչեց չերգն այդ դաժան,— «Խեղդվիր, լու՛ր, խորտակվիր, լաց»...
տառապանքի դժվար ճամբով բանվոր սերունդն եր ընթանում:
քամվում եր նա մորմոք-մորմոք, հալվում եր նա, հանգում եր նա,
թպրտում եր կամքը նրա թշվառության մուկ զնդանում:

Ծաղկի նման մանուկների աչքերը մահ ու մահագուշն,
հողին հակած թուշն խմեցին, շիրիմներում, թափառեցին
չմոտեցավ նրանց վոչ վոք խնամելու, սփոփելու,
նրանց համար չեղավ վոչ մի արցունք թափող ու կարեկից:

Այդպես եր աշխարհը հնում... միայն մի մարդ, մի մարդ միայն,
վոր ապրել եր լուռ ու դաժան, տվեց կյանքին պատգամը մեծ,—
«Մարդկութունը այս խավարին կապված գերի ել չի մնա,
տառապանքի այս ովկյանում հարկավոր ե փրկող մի ձեռք:

Մի փրկարար, վոր արշավի ազատարեր դրոշը ձեռին,
թուշի, սուբա, վոչ մարդկությանը չերջանկության ափը հանի,
դասակարգի համար բացվի առավտոր նոր կենցաղի,
մի նոր աշխարհ, խինդով հարուստ, մի նոր աշխարհ նոր չերգերի:

Վե՞հ մի ձգտում, վե՞հ իղեալ, կարմիր պատգամ հողը ու նոր,
մարդը մարդուն՝ սիրող ընկեր, մարդը մարդուն՝ սիրող չեղբայր,
որերն իր վառ, միտքը հրե, միտքը արթուն, սիրտը տոչոր
ամբողջ կյանքն իր նա սպառեց իր սկսած գործի համար:

Այդ եր նրա նպատակը, իղձը նրա այս աշխարհում,
տեսել եր նա փայլը նրա, ու տեսնում եր նա գալիքը,
դասակարգի համար բերեց ազատության բոսոր գարուն.—
— Իմացիր դու մեզ փրկողին, այդ Իլլիչն եր, Լենինն, ի՛նքը...

Թուրք. փոխ. Գուրգեն Մահարի.

Ս Ա Ն Ի Լ Ի

Ռ Ո Ւ Մ Բ Ի Կ Ա Յ Ծ Ը

Պատում ենք քարերն ու սարերը հսկա,
պոկում ենք ամրակուռ ժայռերն իրարից,
փորում ենք արմատները մթին անտառի,
ու բացում ենք հողը չերակ առ չերակ:

Բրդի պես գզում ենք շերտերը պողպատի,
միացնում ենք իրար ցամաքն ու ծովերը,
աղմուկը հասնում ե արևին ու վերը...
մենք ենք, վոր չերկինքը կանչեցինք մարտի:

Փոխում ենք փրփրացող գետերի նեղ հունը,
ու չոր անապատը փոխում ենք շեն այգու,
աշխատող բազուկն ենք մենք գնահատում,
ու նրան վատ որից պահպանում ենք:

Մենք ծնվել ենք դաժան խավարում ու ցրտում,
մեր միտքը ու գործը անբաժան ու արթուն,
մենք արլուն չենք թափում կառուցման այս մարտում,
գեղեցիկն ենք փնտում...

Քանդում ենք, փշրում ենք ինչ վատ ե և ինչ չար,
հարդում ենք ճամբաներ լեռներով, լեռան տակ,
չինում ալ արևից շենքեր նոր, սպիտակ,
բարձրացնում ենք կյանքը, կառուցում նոր աշխարհ... ..

Թուրք. փոխ. Գուրգեն Մահարի.



Յ Ա Ն Կ

1. Բոյուկ ազա Քարբլի	Տղամարդ թշուրեղբանը	3
2. Ս. Հյուսեյն	Հաջի Սուլթանը ,	11
3. »	Մի փողոցի պատմութիւնն	18
4. Եյնալի Սուլթանով	Սելիզները	25
5. » »	Նոր սուրբը	35
6. Աբդուլլահ Շալիկ	Նամակը չհասավ	45
7. Նագարլի	Դավաճանը	50
8. Յուսուֆ Վեզիրով	Չեչնալ բեկ	68
9. Սաբիր	Հարուստը՝ Բագվի փանխներին	74
10. »	Ռանչպար	75
11. Սերգ Ազիմ Շիրվանի	Տգետ գյուղացու կաշառքը ասածուն	76
12. Ի. Րիզա	Յերկու աշխարհ	78
13. Ա. Ֆեվզի	Գործարան ընկ. Լենինի անվան	79
14. Ա. Հիմներ	Նրա արձանի առաջ	80
15. Սանլիլի	Ռուճրի կաշիք	81

«Ազգային գրադարան»



NL0376719

179

179 - 1829

ОБРАЗЦЫ
ИЗ АЗЕРБАЙДЖАНСКОЙ ЛИТЕРАТУРЫ
Сост. Е. Чарени

692
1883



9116 45 400.